տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ), ինչպես նաեւ այն ֆիզիկական անձանց վրա, որոնք անձնական օգտագործման համար իրականացնում են այդպիսի ապրանքների ներմուծում եւ (կամ) արտահանում:

3. Օզոնաքայքայիչ նյութերի եւ դրանք պարունակող արտադրանքի ներմուծումն ու արտահանումը այնպիսի պետություններից եւ դեպի այնպիսի պետություններ, որոնք «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» 1987 թվականի սեպտեմբերի 16-ի Մոնրեալի արձանագրության կողմ են հանդիսանում, բացառությամբ Մաքսային միության անդամ պետություններով դրանց տարանցիկ փոխադրման, իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին):

Արգելվում է այն Ապրանքների միասնական ցանկի 1.1-րդ բաժնում նշված օզոնաքայքայիչ նյութերի եւ դրանք պարունակող արտադրանքի ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք եւ արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ՝ բացառությամբ նշված Միասնական ցանկի 1.1-րդ եւ 2.1-րդ բաժինների ծանոթագրություններում նշված դեպքերի:

4. Լիցենզիա ստանալ չի պահանջվում, երբ ներմուծվում եւ (կամ) արտահանվում են՝

– օզոնաքայքայիչ նյութեր պարունակող արտադրանք՝ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար.

– օզոնաքայքայիչ նյութեր, որոնք տեղափոխվում են տրանսպորտային միջոցով՝ այն նպատակով եւ քանակությամբ, որն անհրաժեշտ է օդային, ծովային

(գետային), երկաթուղային տրանսպորտային միջոցների սարքավորումների եւ տեխնիկական սարքերի բնականոն շահագործումն ապահովելու համար, այդ թվում՝ սառեցնող սարքավորումների, օդորակման համակարգերի, հրդեհամարման միջոցների, այլ սարքավորումների եւ տեխնիկական սարքերի լցավորման, լրացավորման համար, որոնց շահագործման համար, տեխնիկական բնութագրին համապատասխան, անհրաժեշտ են օգոնաքայքայիչ նյութեր:

5. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Հայտատուն լրացուցիչ կերպով լիազոր մարմին է ներկայացնում (բացառությամբ սույն Հիմնադրույթի 8-րդ կետով նախատեսված դեպքի)՝

– հանձնաժողովի պայմանագրի կամ հանձնարարականի պատճենը (այն դեպքում, երբ որպես պատվիրատու հանդես է գալիս միջնորդը).

– համապատասխանությունը հաստատող մարմնի կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատը կամ օտարերկրյա կազմակերպության կողմից տրված եւ Մաքսային միության անդամ պետություններում օրենսդրությամբ սահմանված կարգով ճանաչված համապատասխանության սերտիֆիկատը կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան հավատարմագրված քիմիավերլուծական լաբորատորիայի եզրակացությունը.

– ապահովագրական պոլիսի պատճենը՝ ձեւակերպված Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

– իրավաբանական անձի կանոնադրության պատճենը.

– վերաշրջանառված օգոնաքայքայիչ նյութեր ներմուծելու կամ արտահանելու դեպքում՝ նշված փաստը, ինչպես նաեւ դրանց հետագա վերաօգտագործման (ռեգեներացիայի) մասով մտադրությունները հաստատող փաստաթուղթը:

7. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է հաստատված

լինեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

8. Այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազոր մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության տվյալ անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության՝ լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնող մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 6-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք լիազոր մարմին են ներկայացվում լիցենզիան ձեռակերպելու համար:

9. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

10. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը), Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից բացի, կարող է մերժվել՝

– սույն Հիմնադրույթի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում,

– քվոտայի սպառվելու դեպքում:

11. Լիցենզիա ստացած հայտատուն՝

– վարում է օգոնաքայքայիչ նյութերի ներմուծված, արտահանված եւ իրացված քանակության հաշվառում՝ նշելով գնորդ կազմակերպությունների անվանումներն ու հասցեները եւ գործածման ենթադրվող ոլորտները, ինչպես նաև օգոնաքայքայիչ նյութերի արտահանված քանակության հաշվառում.

– յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակից ոչ ուշ, լիազոր (համաձայնեցնող) մարմին է ներկայացնում տեղեկություններ՝ օգոնաքայքայիչ նյութերի փաստացի ներմուծված քանակության եւ դրանց իրացված քանակության մասին՝ ըստ գործածման ոլորտների, ինչպես

նաեւ տեղեկություններ՝ օգոնաքայքայիչ նյութերի փաստացի արտահանված քանակության մասին՝ Հիմնադրույթի հավելվածում ներկայացված ձեռով:

12. Այն դեպքում, երբ լիցենզիա տրամադրելու մասին հայտը ձեւակերպվում է մի քանի տեսակի օգոնաքայքայիչ նյութերի եւ դրանք պարունակող արտադրանքի ներմուծման կամ արտահանման համար, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին, ապա հայտին կից ձեւակերպվում է հավելված:

13. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

Հավելված

«Օզոնաքայքայիչ նյութերը եւ դրանք պարունակող արտադրանքը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի

Օզոնաքայքայիչ նյութերի հետ վարվելու մասին հաշվետվության ձեւը

№ ը/կ	Լիցենզիայի տրամադրման ամսաթիվը	Առք	Վաճառք	Վաճառող	Ձեռք բերվածի օգտագործում / վերամշակվածի լցավորում	Կորզում	Սարքավորումները եւ գործողության տեսակը	Տեխնիկի Ա. Ա. Հ., սերտիֆիկատի համարը, ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ  
ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ, ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ  
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ  
ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Վտանգավոր թափոնները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր), «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին, ինչպես նաեւ «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման եւ դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» 1989 թվականի մարտի 22-ի Բազելյան կոնվենցիային (այսուհետ՝ Բազելյան կոնվենցիա) համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված այն իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այն Ապրանքների միասնական ցանկի 1.2-րդ եւ 2.3-րդ բաժիններում նշված վտանգավոր թափոնների (այսուհետ՝ թափոններ) ներմուծում եւ (կամ) արտահանում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ):

3. Մաքսային միության մաքսային տարածք թափոնների ներմուծումը եւ արտահանումը ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար

արգելվում է:

4. Թափոնների ներմուծումը եւ արտահանումը, բացառությամբ դրանց՝ հեռացման նպատակով Մաքսային միության անդամ պետություններով տարանցիկ փոխադրման, իրականացվում են Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին):

Արգելվում է այն Ապրանքների միասնական ցանկի 1.2-րդ բաժնում նշված վտանգավոր թափոնների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

5. Մաքսային միության անդամ պետությունների տարածք թափոնների ներմուծումը թաղման եւ վնասագերծման նպատակով արգելվում է:

6. Տարանցման պետությունների Մաքսային միության տարածքով թափոնների անդրսահմանային փոխադրումը պետական մարմնի եզրակացության առկայության դեպքում իրականացվում է առանց լիցենզիա ձեւակերպելու՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Թափոնների տարանցիկ փոխադրման կարգը կարգավորվում է Բազելյան կոնվենցիայով եւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված նորմերով:

7. Մաքսային միության անդամ պետության մաքսային տարածքից Բազելյան կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետության տարածք այն Ապրանքների միասնական ցանկի 1.2-րդ բաժնում նշված թափոնների արտահանումը, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ, իրականացվում է Բազելյան կոնվենցիայի պահանջներին համապատասխան:



## 8. Հիմնադրույթում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

1) թափոններ՝ նյութեր կամ առարկաներ, որոնք հեռացվում են, նախատեսված են հեռացվելու համար կամ ենթակա են հեռացման՝ Մաքսային միության անդամ պետությունների բնապահպանության մասին օրենսդրությանը համապատասխան.

2) իրավասու մարմին՝ Բազելյան կոնվենցիային համապատասխան նշանակված պետական մարմին.

3) տարանցման պետություն՝ ցանկացած պետություն, որը չի հանդիսանում արտահանման կամ ներմուծման պետություն, որի միջով նախատեսվում կամ իրականացվում է վտանգավոր կամ այլ թափոնների փոխադրումը.

4) թափոնների անդրսահմանային փոխադրում՝ մեկ պետության ազգային իրավազրության տակ գտնվող շրջանից դեպի մյուս պետության ազգային իրավազրության տակ գտնվող շրջան կամ շրջանի միջով կամ դեպի որեւէ պետության ազգային իրավազրության տակ չգտնվող շրջան կամ շրջանի միջով վտանգավոր կամ այլ թափոնների ցանկացած տեղափոխում՝ պայմանով, որ այդպիսի փոխադրումն առնչվում է առնվազն երկու պետության հետ.

5) թափոնների օգտագործում՝ վտանգավոր կամ այլ թափոնների հավաքում, տրանսպորտային փոխադրում եւ հեռացում՝ ներառյալ հեռացման վայրերի նկատմամբ հետագա հսկողությունը.

6) թափոնների հեռացում՝ Բազելյան կոնվենցիայի IV հավելվածով սահմանված ցանկացած գործողություն, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություն:

Հիմնադրույթում օգտագործվող մյուս հասկացությունները եւ եզրույթները կիրառվում են՝ Բազելյան կոնվենցիային եւ Համաձայնագրին համապատասխան:

9. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

10. Հայտատուն լրացուցիչ կերպով լիազոր մարմին է ներկայացնում

(բացառությամբ Հիմնադրույթի 12-րդ կետով նախատեսված դեպքի)՝

– պետական մարմինների եզրակացությունները (թույլատրագրերը)՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

– այն պետության իրավասու մարմնի համաձայնությունը (գրավոր), որի տարածք են ներմուծվում թափոնները՝ Բազելյան կոնվենցիային համապատասխան (Մաքսային միության մաքսային տարածքից թափոնների արտահանման դեպքում).

– ապրանքն արտահանողի եւ արտադրողի կամ ներմուծողի եւ սպառողի միջեւ կնքված պայմանագրի պատճենն այն դեպքում, երբ հայտատուն հանդես է գալիս որպես միջնորդ.

– փոխադրման պայմանագրի եւ արտահանողի ու թափոնների հեռացման համար պատասխանատու անձի միջեւ կնքված պայմանագրի պատճենները, որում այդ թափոնների անվտանգ օգտագործումը սահմանվում է որպես կանխապայման.

– թափոնների անդրսահմանային փոխադրման մասին ծանուցումը (3 օրինակից)՝ Բազելյան կոնվենցիայի պահանջներին համապատասխան.

– թափոնների փոխադրման մասին փաստաթուղթը՝ Բազելյան կոնվենցիայի պահանջներին համապատասխան.

– ներմուծվող թափոնների օգտագործման համար տեխնիկական (տեխնոլոգիական) հնարավորությունների առկայության մասին տեղեկությունները.

– թափոնների անդրսահմանային փոխադրման դեպքում ապահովագրությամբ, գրավով կամ այլ երաշխիքով ծածկումը հաստատող փաստաթղթի պատճենը՝ Մաքսային միության անդամ պետության եւ Բազելյան կոնվենցիայի պահանջներին համապատասխան.

– Մաքսային միության անդամ պետությունների տարածքում թափոնների օգտագործմանն առնչվող գործունեության տեսակի իրականացման լիցենզիայի պատճենը՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրության պահանջներին համապատասխան:

11. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

12. Այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության

օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազոր մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության տվյալ անդամ պետության այլ պետական մարմնի հետ որոշմամբ կամ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Հիմնադրույթի 10-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև լիցենզիայի ձեւակերպման համար լիազոր մարմին ներկայացվող փաստաթղթերը ներկայացնում է Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության այն մարմին, որը համաձայնեցնում կամ ընդունում է թափոնների ներմուծման հնարավոր լինելու մասին որոշում:

13. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

14. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը), Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից բացի, կարող է մերժվել Հիմնադրույթի 10-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում:

15. Թափոնների անդրսահմանային փոխադրման կարգին, փոխադրողին, վթարային իրավիճակների կանխարգելման եւ վերացման, մարդու առողջությանը եւ շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցման մասով միջոցառումների իրականացման կարգին ներկայացվող պահանջները սահմանվում են Բազելյան կոնվենցիայի նորմերով:

16. Մաքսային միության համապատասխան անդամ պետությունը իրավասու մարմնի միջոցով թափոնների ենթադրվող արտահանման մասին ծանուցում է շահագրգիռ պետությունների իրավասու մարմիններին:

17. Հիմնադրույթով սահմանված պահանջներից բացի՝ Մաքսային միության անդամ պետություններն իրավասու են սահմանելու կամ կիրառելու լրացուցիչ պահանջներ՝ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի անվտանգությունն ապահովելու նպատակով:

18. Թափոնների անդրսահմանային փոխադրման վերաբերյալ

հաշվետվությունները ներկայացվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված պետական մարմին:

19. Այն դեպքում, երբ լիցենզիա տրամադրելու մասին հայտը ձեւակերպվում է մի քանի տեսակի այն թափոնների ներմուծման կամ արտահանման համար, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին, ապա հայտին կից ձեւակերպվում է հավելված:

20. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

### ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՅՆԵՐ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մաքսային միության մաքսային տարածք բույսերի պաշտպանության միջոցներ ներմուծելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ գրանցված այն իրավաբանական եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այն Ապրանքների միասնական ցանկի 2.2-րդ բաժնում նշված՝ բույսերի պաշտպանության միջոցների ներմուծում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ):

3. Բույսերի պաշտպանության միջոցների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվող միանգամյա լիցենզիայի հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազորված մարմին):

4. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազորված մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

5. Հայտատուն լիազորված մարմին է ներկայացնում նաեւ Մաքսային միության անդամ պետության համապատասխան լիազորված մարմնի կողմից տրամադրված՝

բույսերի պաշտպանության միջոցների պետական գրանցման վկայականի (հավաստագրի) պատճենը: Սույն կետի դրույթները չեն կիրառվում թունաքիմիկատի տեխնիկական ակտիվ նյութի դեպքում:

6. Բույսերի պաշտպանության չգրանցված միջոցների նմուշների ներմուծումը՝ գրանցման եւ արտադրական փորձարկումների անցկացման նպատակով, ինչպես նաեւ բույսերի պաշտպանության չգրանցված միջոցների սահմանափակ քանակությամբ ներմուծումը՝ նոր հայտնաբերված կարանտին վնասակար օրգանիզմի օջախների վերացման նպատակով, իրականացվում է առանց լիցենզիայի՝ ներկայացնելով բույսերի պաշտպանության միջոցների պետական գրանցումն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության գործադիր մարմնի եզրակացությունը՝ ներմուծման նպատակահարմարության վերաբերյալ՝ բույսերի պաշտպանության միջոցների անվանումների, քանակի, պատրաստուկային ձեւի, ծախսի նորմայի, կոնցենտրացիայի, չափաճրարման, գործարանի անվանման եւ արտադրողի երկրի մասին նշումով:

7. Եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության անդամ պետության՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն, Հիմնադրույթի 4-րդ եւ 5-րդ կետերով սահմանված փաստաթղթերից բացի, լիազորված մարմին է ներկայացնում նաեւ փաստաթուղթ, որով հաստատվում է Մաքսային միության մաքսային տարածք բույսերի պաշտպանության միջոցների ներմուծման հնարավորության մասին պետական իշխանության մարմնի որոշումը:

Ընդ որում, հայտատուն համաձայնեցման համար նախատեսված մարմին է ներկայացնում այնպիսի փաստաթղթեր, որոնք, Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն, պահանջվում է ներկայացնել Մաքսային միության անդամ պետության՝ համաձայնեցման համար նախատեսված՝ պետական իշխանության մարմիններ:

8. Հայտին կից ձեւակերպվում է հավելված, որում նշվում են բույսերի պաշտպանության միջոցների առանձին անվանումները, պատրաստուկային ձեւերը,

քանակական եւ արժեքային ցուցանիշները:

9. Համաձայնեցման համար նախատեսված մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն:

10. Լիազորված մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՀԱՆՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ,  
ՀՆՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿՈԼԵԿՑԻՈՆ ՆՅՈՒԹԵՐ, ԲՐԱԾՈ  
ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՍԿՈՐՆԵՐ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մաքսային միության մաքսային տարածքից հանքագիտության, հնէաբանության ոլորտներում կոլեկցիոն նյութեր, բրածո կենդանիների ոսկորներ արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ գրանցված այն իրավաբանական եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են հանքագիտության, հնէաբանության ոլորտներում այնպիսի կոլեկցիոն նյութերի, բրածո կենդանիների ոսկորների արտահանում (այսուհետ՝ հայտատուներ), որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.4-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ Միասնական ցանկ), ինչպես նաեւ անձնական օգտագործման նպատակով այդպիսի ապրանքների արտահանում իրականացնող ֆիզիկական անձանց վրա:

Սույն Հիմնադրույթը չի տարածվում Միասնական ցանկի 2.20-րդ բաժնի «Մշակութային արժեքներ» մասի 2-րդ կետում նշված ապրանքների արտահանման վրա:

3. Հանքագիտության, հնէաբանության ոլորտներում կոլեկցիոն նյութերի,



բրաժո կենդանիների ոսկորների արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազորված մարմին):

4. Այն դեպքում, երբ հանքագիտության, հնէաբանության ոլորտներում կոլեկցիոն նյութերը, բրաժո կենդանիների ոսկորները Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությանը համապատասխան կարող են համարվել մշակութային արժեքներ, հայտատուների, ինչպես նաև անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից նշված հավաքածուների ու բրաժո կենդանիների ոսկորների արտահանումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության՝ պատմամշակութային ժառանգության պահպանության գործառույթներ ունեցող՝ պետական իշխանության մարմնի կողմից տրվող՝ այդպիսի արտահանում իրականացնելու հնարավորության մասին եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

5. Հայտատուների, ինչպես նաև անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից հանքագիտության, հնէաբանության ոլորտներում կոլեկցիոն նյութերի, բրաժո կենդանիների ոսկորների դուրսհանումը Մաքսային միության մաքսային տարածքից արտահանումից տարբերվող մաքսային ընթացակարգերին համապատասխան իրականացվում է լիազորված մարմնի, իսկ Հիմնադրույթի 9-րդ կետում նշված դեպքում՝ Մաքսային միության անդամ պետության՝ համաձայնեցման համար նախատեսված՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի կողմից տրվող՝ տվյալ ապրանքների արտահանման հնարավորության մասին եզրակացության (թույլատրագրի), ինչպես նաև Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության մարմնի կողմից տրվող՝ Հիմնադրույթի 4-րդ կետում նշված եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

Հիմնադրույթի 4-րդ կետում, ինչպես նաև սույն կետի առաջին պարբերության մեջ նշված եզրակացությունների (թույլատրագրերի) առկայությունը չի պահանջվում ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային տարածքից անձնական օգտագործման նպատակով բրաժո կենդանիների ոսկորների (մամոնտի

ժանիքների) մեկ օրինակից ոչ ավելի քանակությամբ եւ 10կգ-ից ոչ ավելի քաշով արտահանման դեպքում:

6. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազորված մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

7. Հայտատուն ներկայացնում է նաեւ ապրանքի ձեռքբերման ու տիրապետման օրինականությունը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

8. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

9. Եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության անդամ պետության՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Մաքսային միության անդամ պետության՝ լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնելու համար նախատեսված՝ պետական իշխանության մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 7-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաեւ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

10. Համաձայնեցման համար նախատեսված մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

11. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը), բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից, կարող է մերժվել՝

– Հիմնադրույթի 7-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում,

– եթե ապրանքի արտահանման նախատեսված ծավալը տնտեսական վնաս կհասցնի Մաքսային միության անդամ պետությանը:

12. Այն դեպքում, երբ լիցենզիա ստանալու մասին հայտը ձեռակերպվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին համապատասխանող՝ հանքագիտության, հնէաբանության ոլորտներում կոլեկցիոն նյութերի, բրածո կենդանիների ոսկորների մի քանի տեսակների արտահանման համար, հայտին կից ձեռակերպվում է հավելված:

13. Լիազորված մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԿԵՆԴԱՆԻ ՎԱՅՐԻ  
ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ԱՌԱՆՁԻՆ ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐ ՈՒ ՎԱՅՐԻ ԴԵՂԱՀՈՒՄՔ  
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մաքսային միության մաքսային տարածքից կենդանի վայրի կենդանիներ, առանձին վայրի բույսեր ու վայրի դեղահումք արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ գրանցված այն իրավաբանական եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այն Ապրանքների միասնական ցանկի 2.6-րդ բաժնում նշված՝ կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի արտահանում (այսուհետ՝ հայտատուներ), որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ, ինչպես նաեւ անձնական օգտագործման նպատակով այդպիսի ապրանքների արտահանում իրականացնող ֆիզիկական անձանց վրա:

3. Կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին):

4. Մաքսային միության մաքսային տարածքից արտահանման համար

լիցենզիայի առկայություն չի պահանջվում՝

– անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի եզակի նմուշների՝ յուրաքանչյուր տեսակից ոչ ավելի, քան 3 օրինակի, որսորդական ու ձկնորսական հաղթանշանների արտահանման դեպքում.

– գիտական հետազոտությունների նպատակով գիտական հաստատությունների կողմից կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի նմուշների արտահանման դեպքում.

– փոխանակման, նվիրատվության եւ գենֆոնդի համալրման նպատակով կենդանաբանական այգիների, բուծարանների ու բուսաբանական այգիների կողմից կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի արտահանման դեպքում.

– կենդանիների ու բույսերի այն տեսակների, դրանց մասերի կամ ածանցյալների (դերիվատների) արտահանման դեպքում, որոնց վրա տարածվում է «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առետրի մասին» կոնվենցիայի գործողությունը:

5. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազորված մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3–րդ հոդվածի 3–րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Հայտատուն ներկայացնում է նաեւ ապրանքի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսի օրինականությունը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

7. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն Համաձայնագրի 3–րդ հոդվածի 3–րդ կետով սահմանված կարգով:

8. Եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության անդամ պետության՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի

հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Մաքսային միության անդամ պետության՝ լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնելու համար նախատեսված՝ պետական իշխանության մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 6-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

9. Համաձայնեցման համար նախատեսված մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

10. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը), բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից, կարող է մերժվել՝

– Հիմնադրույթի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում,

– եթե ապրանքի նախատեսված ծավալը վնաս կհասցնի կենդանու կամ բույսի արտահանվող տեսակի բնական պոպուլյացիային:

11. Այն դեպքում, երբ լիցենզիա ստանալու մասին հայտը ձեռակերպվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին համապատասխանող՝ կենդանական կամ բուսական ծագում ունեցող ապրանքների մի քանի տեսակների արտահանման համար, հայտին կից ձեռակերպվում է հավելված:

12. Լիազորված մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԲԵԼԱՌՈՒՍԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԳՐՔԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՈՒ  
ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ ԳՏՆՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ  
ՏԵՍԱԿՆԵՐ, ԴՐԱՆՅ ՄԱՍԵՐ ԵՎ (ԿԱՄ) ԱԾԱՆՅՅԱԼՆԵՐ (ԴԵՐԻՎԱՏՆԵՐ)  
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մաքսային միության մաքսային տարածքից Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում ներառված՝ հազվագյուտ ու անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների ու բույսերի տեսակներ, դրանց մասեր եւ (կամ) ածանցյալներ (դերիվատներ) արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ գրանցված այն իրավաբանական եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում ներառված՝ հազվագյուտ ու անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների ու բույսերի այնպիսի տեսակների, դրանց մասերի եւ (կամ) ածանցյալների (դերիվատների) արտահանում, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.8-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ), ինչպես նաեւ անձնական

օգտագործման նպատակով այդպիսի ապրանքների արտահանում իրականացնող ֆիզիկական անձանց վրա:

Անձնական օգտագործման նպատակով ֆիզիկական անձանց կողմից Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում ներառված՝ հազվագյուտ ու անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների ու բույսերի տեսակների, դրանց մասերի եւ (կամ) ածանցյալների (դերիվատների) արտահանումը թույլատրվում է լիազորված մարմնի, իսկ Հիմնադրույթի 8-րդ կետում նշված դեպքում՝ լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցման համար նախատեսված՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի կողմից տրվող եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

3. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում ներառված՝ հազվագյուտ ու անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների ու բույսերի տեսակների, դրանց մասերի եւ (կամ) ածանցյալների (դերիվատների) (այսուհետ՝ վայրի կենդանիներ ու բույսեր) արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազորված մարմին):

Այն դեպքում, երբ կենդանիների կամ բույսերի այն տեսակները, դրանց մասերը եւ (կամ) ածանցյալները (դերիվատները), որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.8-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ, նաեւ ներառված են նշված Միասնական ցանկի 2.7-րդ բաժնում, Մաքսային միության մաքսային տարածքից այդպիսի ապրանքների արտահանումն իրականացվում է առանց լիցենզիաների ձեւակերպման՝ «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առետրի մասին» 1973 թվականի մարտի 3-ի կոնվենցիայով նախատեսված կարգին համապատասխան:



4. Մաքսային միության մաքսային տարածքից վայրի կենդանիների ու բույսերի ժամանակավոր արտահանումը կարող է իրականացվել մինչև մեկ տարի ժամկետով:

Մաքսային միության մաքսային տարածքից ժամանակավոր արտահանումն իրականացվում է լիազորված մարմնի, իսկ Հիմնադրույթի 8-րդ կետում նշված դեպքում՝ Մաքսային միության անդամ պետության՝ համաձայնեցման համար նախատեսված՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի կողմից տրամադրվող եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

5. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազորված մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Հայտատուն ներկայացնում է նաեւ վայրի կենդանիների ու բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսի օրինականությունը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

7. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

8. Եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության անդամ պետության՝ պետական իշխանության մեկ այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Մաքսային միության անդամ պետության՝ լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնելու համար նախատեսված՝ պետական իշխանության մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 6-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաեւ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Համաձայնեցումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական իշխանության մարմնի կողմից, որի տարածքում ստացվել է (ձեռք է բերվել) տվյալ ապրանքը:

9. Համաձայնեցման համար նախատեսված մարմին ներկայացվող

փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

10. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը) կարող է մերժվել Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերով, ինչպես նաև Հիմնադրույթի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում:

11. Այն դեպքում, երբ լիցենզիա ստանալու մասին հայտը ձեւակերպվում է ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին համապատասխանող՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում ներառված տեսակներին վերաբերող վայրի կենդանիների ու բույսերի տեսակների, դրանց մասերի եւ (կամ) ածանցյալների (դերիվատների) արտահանման համար, հայտին կից ձեւակերպվում է հավելված:

12. Լիազորված մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

«Մաքսային միության մաքսային տարածքից  
 Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի  
 Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության  
 Կարմիր գրքերում ներառված՝ հազվագյուտ ու  
 անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների  
 ու բույսերի տեսակներ, դրանց մասեր եւ (կամ)  
 ածանցյալներ (դերիվատներ) արտահանելու  
 կարգի մասին» հիմնադրույթի

Տեղեկություններ՝ Մաքսային միության մաքսային սահմանից արտահանման համար  
 նախատեսվող՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության  
 եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում ներառված՝ հազվագյուտ եւ  
 անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների ու բույսերի տեսակների, դրանց  
 մասերի եւ (կամ) ածանցյալների (դերիվատների) վերաբերյալ

Վայրի կենդանիների ու բույսերի տեսակների անվանումները (ռուսերեն ու լատիներեն)	Օրինակների քանակը	Սեռը, տարիքը (վայրի կենդանիների համար)	Նույնակա-նացման նշանները (պիտակներ, չիպերի համարներ եւ այլն)	Մասերի եւ (կամ) ածանցյալների (դերիվատների) նկարագրությունը	Ձեռքբերման, մթերման (ստացման) օրինականությունը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր
1					
2					
...					

Արտահանման նպատակը

---

Ենթադրյալ ամսաթիվը

---

Այն անձի անունը, ազգանունը, հայրանունը, որն իրականացնելու է արտահանումը

---

Հայտը ներկայացնելու ամսաթիվը

Հայտատուի ստորագրությունը

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԸ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԸ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» սույն Հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակված է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Երրորդ երկրների նկատմամբ միասնական մաքսային տարածքում ապրանքների արտաքին առևտրի հետ կապված միջոցներ սահմանելու եւ դրանք կիրառելու կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթով որոշվում է այն Ապրանքների միասնական ցանկի 2.8-րդ բաժնում նշված թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգը, որոնց նկատմամբ կիրառվում են Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում երրորդ երկրների հետ առևտրի մեջ Մաքսային միության անդամ պետությունների կողմից ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները (այսուհետ՝ 1-ին հավելված), այն Ապրանքների միասնական ցանկի 2.9-րդ բաժնում նշված չմշակված թանկարժեք մետաղները, թանկարժեք մետաղների ջարդոնը եւ մնացորդները, թանկարժեք մետաղների հանքաքարերը եւ խտանյութերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները (այսուհետ՝ հումքային ապրանքներ) Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգը, որոնց նկատմամբ կիրառվում են Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում

երրորդ երկրների հետ առևտրի մեջ Մաքսային միության անդամ պետությունների կողմից ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները (այսուհետ՝ 3-րդ հավելված), ինչպես նաև այն թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգը, որոնց արտահանումը Մաքսային միության անդամ պետություններից իրականացվում է առանց լիցենզիաների (այսուհետ՝ 2-րդ հավելված):

Սույն Հիմնադրույթի 1-ին, 2-րդ, 3-րդ հավելվածներում չնշված թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի և հումքային ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք և արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից իրականացվում են՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն:

Սույն Հիմնադրույթը չի տարածվում՝

թանկարժեք մետաղներ և թանկարժեք քարեր պարունակող մշակութային արժեքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու վրա: Նշված արժեքների ներմուծումն ու արտահանումն իրականացվում են «Մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդի փաստաթղթերը և արխիվային փաստաթղթերի բնօրինակները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան.

այն թանկարժեք մետաղների ռադիոակտիվ և կայուն իզոտոպները և դրանց հիմքով արտադրատեսակները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու վրա, որոնց նկատմամբ կիրառվում են Մաքսային միության անդամ պետությունների արտահանման վերահսկողության միջոցառումները.

Մաքսային միության անդամ պետությունների թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական ֆոնդեր, Մաքսային միության անդամ

պետությունների սուբյեկտների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդեր (դաշնային պետության սուբյեկտների համար) թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ հումքային ապրանքները մուտքագրելու եւ թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ հումքային ապրանքները նշված ֆոնդերից ելքագրելու վրա: Դրանց ներմուծման եւ արտահանման կարգը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ.

Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից Մաքսային միության անդամ պետությունների տարածքում օրինական վճարամիջոց հանդիսացող, թանկարժեք մետաղից մետաղադրամները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու վրա: Դրանց ներմուծման եւ արտահանման կարգը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

3. Սույն Համաձայնագրի նպատակներով կիրառվում են հետեւյալ եզրույթները՝

«թանկարժեք մետաղներ»՝ ոսկի, արծաթ, պլատին եւ պլատինային խմբի մետաղներ (պալադիում, իրիդիում, ռոդիում, ռուտենիում եւ օսմիում)՝ 1-ին եւ 2-րդ հավելվածների համաձայն.

«հումքային ապրանքներ»՝ չմշակված թանկարժեք մետաղներ, այդ թվում՝ «Դորե» համաձուլվածքը՝ ձուլակտորի տեսքով (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7108 12 000 9 ծածկագրից), կաթոդային մետաղը (ՄՄ ԱՏԳ ԱԱ հետեւյալ ծածկագրերից. 7106 10 000 0, 7106 91 000 9, 7108 11 000 0, 7108 12 000 9, 7110 11 000 9, 7110 21 000 9, 7110 31 000 0, 7110 41 000 0), ցինկի նստվածքներ, (ՄՄ ԱՏԳ ԱԱ 2620 19 000 0 ծածկագրից), թանկարժեք մետաղների ջարդոն եւ թափոններ, թանկարժեք մետաղների հանքաքարեր եւ խտանյութեր, գունավոր մետաղների հանքաքարեր, խտանյութեր եւ մոխիր, թանկարժեք մետաղներ պարունակող գունավոր մետաղների արտադրության կիսապատրաստուկներ՝ 3-րդ հավելվածի համաձայն.

«թանկարժեք քարեր»՝ բնական ալմաստներ, զմրուխտներ, սուտակներ, շափյուղաներ եւ ալեքսանդրիտներ (ոսկեբյուրեղներ), ինչպես նաեւ բնական մարգարիտ՝ չմշակված (բնական) եւ մշակված տեսքով: Թանկարժեք քարերի

շարքին են դասվում սաթի հազվագյուտ գոյացությունները.

«սաթի հազվագյուտ գոյացություններ»՝ 1000 գրամից ավելի զանգվածով սաթի գոյացություններ՝ բազմազան, յուրահատուկ ձեւի, իրենց կառուցվածքով համեմատաբար միաձույլ (80 տոկոսից ոչ պակաս), նմուշի ամբողջականությունը վտանգող թափանցանց փշուկներ, աչքով տեսանելի ճաքեր չունեցող, բազմազան գունային գամմա ունեցող, հնարավոր է՝ ֆլորայի եւ ֆաունայի լավ պահպանված, 10 մմ–ից ավելի ներամփոփումներով.

«հազվագյուտ թանկարժեք քարեր եւ հազվագյուտ բնակտորներ»՝ սույն Հիմնադրույթի 4-րդ հավելվածում ներկայացված պարամետրերին համապատասխանող թանկարժեք քարեր եւ թանկարժեք մետաղների բնակտորներ.

«զտարկման (աֆինաժի) ոչ ենթակա բնակտորներ»՝ սույն Հիմնադրույթի 5-րդ հավելվածում ներկայացված պարամետրերին համապատասխանող թանկարժեք մետաղների բնակտորներ.

«բնական ալմաստներ»՝ ինչպես չմշակված, այնպես էլ մասամբ մշակված բնական ալմաստներ, որոնք կարող են օգտագործվել ադամանդների պատրաստման համար (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7102 31 000 0 ծածկագիր). բնական ալմաստներ՝ ինչպես չմշակված, այնպես էլ մասամբ կամ ամբողջությամբ մշակված, որոնք պիտանի են արդյունաբերական կամ գիտական նպատակներով օգտագործելու համար, ինչպես նաեւ բնական ալմաստներ, որոնք վերստացված են միաբյուրեղ եւ բազմաբյուրեղ ալմաստե գործիքից, փշրանք եւ փոշիներ (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7102 10 000 0, 7102 21 000 0, 7102 29 000 0, 7105 10 000 0 ծածկագրեր).

«ադամանդներ»՝ տարբեր ձեւի երեսակման, մշակված բնական ալմաստներ, որոնք ունեն հետագա օգտագործման համար նախատեսված հղկված նիստեր (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7102 39 000 0 ծածկագիր).

«բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտներ»՝ Մաքսային միության այն անդամ պետության տարածքում բնական ալմաստների արդյունահանում իրականացնող կազմակերպություններ, որի ռեզիդենտներն են տվյալ



կազմակերպությունները.

«ադամանդներ արտադրող սուբյեկտներ»՝ կազմակերպություններ եւ անհատ ձեռնարկատերեր, որոնք ունեն ադամանդներ պատրաստելու նպատակով բնական ալմաստների երեսակում իրականացնելու իրավունք՝ Մաքսային միության այն անդամ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան, որոնց ռեզիդենտներն են տվյալ կազմակերպությունները եւ անհատ ձեռնարկատերերը.

«բնական ալմաստներից արտադրանք եւ արտադրատեսակներ արտադրող սուբյեկտներ»՝ կազմակերպություններ եւ անհատ ձեռնարկատերեր, որոնք ունեն բնական ալմաստներ մշակելու կամ օգտագործելու իրավունք՝ արտադրատեխնիկական նշանակության արտադրանք ստանալու, ինչպես նաեւ կենցաղային եւ ոսկերչական իրեր պատրաստելու նպատակով Մաքսային միության այն անդամ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան, որոնց ռեզիդենտներն են տվյալ կազմակերպությունները եւ անհատ ձեռնարկատերերը.

«զտարկված ոսկի եւ արծաթ՝ ձուլակտորների տեսքով»՝

– Մաքսային միության անդամ պետությունների արտադրության ձուլակտորներ, որոնք համապատասխանում են Մաքսային միության անդամ պետություններում սահմանված պահանջներին,

– օտարերկրյա արտադրության ձուլակտորներ՝ պատրաստված, հարգադրոշմված եւ հավաստագրված՝ ծագման երկրի օրենսդրությանը համապատասխան.

«զտարկված ոսկի եւ արծաթ՝ փոշու եւ հատիկների տեսքով»՝

– Մաքսային միության անդամ պետությունների արտադրության փոշի եւ հատիկներ, որոնք համապատասխանում են Մաքսային միության անդամ պետություններում սահմանված պահանջներին.

– օտարերկրյա արտադրության փոշի եւ հատիկներ՝ հավաստագրված ծագման երկրի օրենսդրությանը համապատասխան.

«զտարկված պլատին եւ պլատինային խմբի մետաղներ՝ ձուլակտորների եւ

թիթեղների տեսքով»՝

– Մաքսային միության անդամ պետությունների արտադրության պլատինի եւ պլատինային խմբի մետաղների ճուլակտորներ եւ թիթեղներ, որոնք համապատասխանում են Մաքսային միության անդամ պետություններում սահմանված պահանջներին.

– օտարերկրյա արտադրության պլատինի եւ պլատինային խմբի մետաղների ճուլակտորներ եւ թիթեղներ՝ պատրաստված, հարգադրոշմված եւ հավաստագրված՝ ծագման երկրի օրենսդրությանը համապատասխան.

«զտարկված պլատին եւ պլատինային խմբի մետաղներ՝ փոշու եւ հատիկների տեսքով»՝

– Մաքսային միության անդամ պետությունների արտադրության փոշի եւ հատիկներ, որոնք համապատասխանում են Մաքսային միության անդամ պետություններում սահմանված պահանջներին.

– օտարերկրյա արտադրության փոշի եւ հատիկներ՝ հավաստագրված ծագման երկրի օրենսդրությանը համապատասխան.

«թանկարժեք քարերի տեսակավորում»՝ հարստացման գործընթացի եզրափակիչ փուլ, որը, Մաքսային միության տարածքում գործող դասակարգիչներին եւ գնացուցակներին (պրեյսկուրանտներին) համապատասխան ձեւավորված տիպային նմուշների հաստատված հավաքածուների հիման վրա եւ հաշվի առնելով համաշխարհային շուկայի գները, թույլ է տալիս կորզված հանքային հումքից առանձնացնել թանկարժեք քարերը, ինչպես նաեւ որոշել դրանց որակական եւ արժեքային բնութագրերը.

«թանկարժեք քարերի նույնականացում»՝ ներմուծվող եւ արտահանվող թանկարժեք քարերի որակական-գունային եւ արժեքային բնութագրերի որոշում՝ Մաքսային միության տարածքում գործող դասակարգիչներին եւ գնացուցակներին համապատասխան եւ հաշվի առնելով համաշխարհային շուկայի գները, որոնք, Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, լիազորված կազմակերպությունների կողմից կիրառվում են պետական

վերահսկողություն իրականացնելու համար.

«թանկարժեք քարերի պետական վերահսկողություն»՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված կազմակերպությունների կողմից իրականացվող վերահսկողություն, որը ներառում է թանկարժեք քարերի տեսակավորման որակի եւ գնահատման նկատմամբ վերահսկողությունը՝ դրանց արդյունահանման ժամանակ, թանկարժեք քարերի՝ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխման ժամանակ նույնականացման գործընթացում որոշվող դասակարգման հատկանիշները ճիշտ կերպով սահմանելու նկատմամբ վերահսկողությունը, ներքին շուկայում չմշակված թանկարժեք քարերի հետ իրականացվող գործարքների հաշվառումը, ծագման ստուգումը, Քիմբերլի գործընթացի չմշակված բնական ավաստների հավաստագրման միջազգային սխեմային համապատասխանելու նկատմամբ վերահսկողությունը.

«թանկարժեք մետաղների պետական վերահսկողություն»՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված կազմակերպությունների կողմից իրականացվող վերահսկողություն, որը ներառում է թանկարժեք մետաղների գների վերահսկողությունը, թանկարժեք մետաղների ծագման աղբյուրը որոշելը, թանկարժեք մետաղների հետ իրականացվող գործարքների օրինականությունը սահմանելը.

«իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի հատուկ հաշվառում»՝ թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնող իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի այնպիսի ռեեստրի վարում Մաքսային միության անդամ պետության լիազորված կազմակերպության կողմից, որի դեպքում չի ենթադրվում վճարների գանձում՝ նրանց ռեեստրում ներառելու դիմաց: Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի նկատմամբ հատուկ հաշվառման կանգնեցնելու պահանջ չի կիրառվում:

4. Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք կատարվում է այն իրավաբանական եւ ֆիզիկական

անձանց կողմից, որոնք գրանցված են որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ, ինչպես նաև Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ունեն թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ հումքային ապրանքների հետ գործառնություններ իրականացնելու իրավունք եւ կանգնած են Մաքսային միության այն անդամ պետության հատուկ հաշվառմանը, որի ռեզիդենտներն են տվյալ իրավաբանական եւ ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատու) առանց լիցենզիայի:

Չմշակված բնական ալմաստները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս ժամանման վայրում փոխադրողը, ի թիվս մաքսային գործառնություններ իրականացնելու համար անհրաժեշտ այլ տվյալների, մաքսային մարմիններին է ներկայացնում տվյալներ՝ չմշակված բնական ալմաստների հավաստագրման միջազգային սխեմայի հավաստագրի մասին (այսուհետ՝ Քիմբերլի գործընթաց), որոնք պարունակում են հավաստագրի համարը, դրա տրամադրման ամսաթիվը եւ գործողության ժամկետը: Նշված տվյալները ներկայացնելու անհնարինության կամ Քիմբերլի գործընթացի հավաստագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում չմշակված բնական ալմաստների խմբաքանակի ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք չի թույլատրվում, իսկ չմշակված բնական ալմաստների խմբաքանակը ենթակա է վերադարձման արտահանման երկիր:

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող բնական ալմաստների պետական վերահսկողություն իրականացնելիս (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7102 10 000 0 (միայն Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում), 7102 21 000 0, 7102 31 000 0 ծածկագրեր) ստուգվում է Քիմբերլի գործընթացի պահանջների պահպանումը՝ սույն Հիմնադրույթի 6-րդ հավելվածին համապատասխան:

Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող թանկարժեք քարերը ենթակա են նույնականացման: Նշված նույնականացումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմինների (կազմակերպությունների) կողմից պետական

վերահսկողության գործընթացում (այսուհետ՝ լիազորված կազմակերպություններ) եւ պետք է հաստատվի փաստաթղթերով:

5. Սույն Հիմնադրույթի 1-ին եւ 3-րդ հավելվածներում նշված՝ «արտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ հումքային ապրանքների արտահանումը (այսուհետ՝ արտահանում) Մաքսային միության մաքսային տարածքից իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրվող լիցենզիաների հիման վրա (այսուհետ՝ լիազոր մարմին), որի տարածքում գրանցված է հայտատուն:

6. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաեւ սույն Հիմնադրույթի 7-րդ հավելվածով նախատեսված փաստաթղթերը: Լիցենզիաների տրամադրման կարգը սահմանված է Համաձայնագրով:

7. Այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազոր մարմնի կողմից ընդունվում է՝ Մաքսային միության տվյալ անդամ պետության գործադիր իշխանության մյուս մարմնի հետ համաձայնեցնելով, հայտատուն Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության՝ լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնող մարմին է ներկայացնում նշված մարմնի կողմից սահմանվող փաստաթղթերի ցանկը:

8. Սույն Հիմնադրույթի 2-րդ հավելվածում նշված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արտահանումն իրականացվում է առանց լիցենզիաների:

9. Բնական ավաստներ արդյունահանող սուբյեկտների կողմից բնական ավաստների արտահանումն իրականացվում է՝ հաշվի առնելով Մաքսային միության այն անդամ պետության ազգային օրենսդրության պահանջները, որի ռեզիդենտներն են նշված սուբյեկտները, Մաքսային միության այն անդամ պետության մասնագիտացված մաքսակետերով, որի տարածքում արդյունահանվել են բնական ավաստները:

10. Հազվագյուտ թանկարժեք քարերի եւ (կամ) հազվագյուտ բնակտորների արտահանումն իրականացվում է՝ հաշվի առնելով Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության պահանջները, որի տարածքում արդյունահանվել են հազվագյուտ թանկարժեք քարերը եւ (կամ) հազվագյուտ բնակտորները, տվյալ պետության մասնագիտացված մաքսակետերով:

11. Չտարկման ոչ ենթակա թանկարժեք մետաղների բնակտորների արտահանումն իրականացվում է, լիցենզիաների հիման վրա, Մաքսային միության անդամ պետությունների մասնագիտացված մաքսակետերով:

12. Մաքսային միության անդամ պետության օրինական վճարամիջոց հանդիսացող՝ թանկարժեք մետաղից մետաղադրամների արտահանումն իրականացնում են այդ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերը եւ վարկային կազմակերպությունները:

13. Սույն Հիմնադրույթի 2-րդ հավելվածում նշված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արտահանումը չի թույլատրվում (բացառությամբ միայն թանկարժեք քարերով ներդիրներ ունեցող կամ թանկարժեք քարերով ներդիրներ չունեցող թանկարժեք մետաղներից մետաղադրամների, ՄՄ ԱՏԳ ԱԱ 7118 ծածկագիր), եթե դրանց՝ արտաքին առևտրային պայմանագրում սահմանված պայմանագրային արժեքը պակաս է դրանց մեջ պարունակվող թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ընդհանուր այն արժեքից, որը որոշվում է սույն Հիմնադրույթի 8-րդ հավելվածով նախատեսված կարգով:

Այդ ապրանքներում թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արժեքը որոշվում է արտադրող ձեռնարկության այն փաստաթղթերի հիման վրա, որոնք արտահանողը ներկայացնում է պետական վերահսկողությունն անցնելու ժամանակ: Պետական վերահսկողություն անցկացնելու եւ նշված ապրանքների մեջ պարունակվող թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերը գնահատելու արդյունքները հաստատող փաստաթղթերը ձեւակերպվում են Մաքսային միության անդամ պետության պետական վերահսկողների կողմից եւ պարտադիր են մաքսային հսկողություն իրականացնելու նպատակով մաքսային մարմիններ ներկայացնելու համար:

14. Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի (բացառությամբ բնական ալմաստների) եւ հումքային ապրանքների արտահանում, 1-ին, 2-րդ եւ 3-րդ հավելվածների համաձայն, անմիջականորեն իրականացնելու իրավունք ունեն թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերն օրինաչափ կերպով կամ թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի սեփականատերերի հետ գործակալական համաձայնագրերի եւ հանձնաժողովի պայմանագրերի համաձայն տնօրինող այն իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու իրավունք եւ հատուկ հաշվառման են կանգնած՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

15. Բնական ալմաստների արտահանում անմիջականորեն իրականացնելու իրավունք ունեն՝

- բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտները,

- ադամանդներ արտադրող սուբյեկտները եւ բնական ալմաստներից արտադրանք եւ արտադրատեսակներ արտադրող սուբյեկտները՝ հետեւյալ պահանջները պարտադիր կերպով պահպանելու դեպքում (պահանջները տարածվում են միայն սույն Հիմնադրույթի 1-ին հավելվածում նշված բնական ալմաստների վրա).

բնական ալմաստների համապատասխան խմբաքանակը Մաքսային միության անդամ պետությունների ներքին շուկայում չի իրացվում վաճառքի համար դա առաջարկելու օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում,

բնական ալմաստների վաճառքի մասին առաջարկը հրապարակվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքէջում,

արտահանվող խմբաքանակի՝ արտահանման պայմանագրում սահմանված գինը ցածր չէ այն գնից, որով այդ խմբաքանակն առաջարկվել է Մաքսային միության անդամ պետությունների ներքին շուկայում,

- թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող եւ հատուկ հաշվառման կանգնած իրավաբանական անձինք՝ նշված

սուբյեկտների հետ գործակալական համաձայնագրերի եւ հանձնաժողովի պայմանագրերի համաձայն:

16. Սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս պետական վերահսկողությունն իրականացվում է սույն Հիմնադրույթի 6-րդ հավելվածով սահմանված միասնական կանոններին համապատասխան:

Սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղները, ինչպես նաեւ սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված թանկարժեք մետաղների ջարդոնն ու մնացորդները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս պետական վերահսկողությունն իրականացվում է սույն Հիմնադրույթի 9-րդ հավելվածով սահմանված միասնական կանոններին համապատասխան:

17. Սույն Հիմնադրույթի 4-րդ եւ 15-րդ կետերի պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է լիազորված կազմակերպությունների կողմից պետական վերահսկողության գործընթացում՝ Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրականացվում են մաքսային գործառնությունները:

18. Չմշակված եւ մշակված թանկարժեք քարերի (բացի ալմաստներից եւ ադամանդներից) խմբաքանակները չեն կարող արտահանվել, եթե դրանց պայմանագրային արժեքն ավելի քան 5 տոկոսով ցածր է այն արժեքից, որը սահմանվել է թանկարժեք քարերի տեսակավորման որակի եւ գնահատման նկատմամբ պետական վերահսկողություն անցկացնելու ժամանակ:

19. Ձուլակտորների տեսքով զտարկված թանկարժեք մետաղների հետ վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող արտահանման գործառնությունների նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների իշխանության հատուկ լիազոր մարմինների կողմից՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը



համապատասխան:

20. Սույն Հիմնադրույթի 10-րդ, 11-րդ եւ 14-րդ կետերի պայմանները պահպանելու նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է սույն Հիմնադրույթի 9-րդ հավելվածին համապատասխան:

21. Պետական վերահսկողություն անցկացնելու արդյունքները հաստատող փաստաթղթերը ձեւակերպվում են Մաքսային միության անդամ պետությունների լիազորված կազմակերպությունների կողմից եւ պարտադիր են մաքսային գործառնություններ իրականացնելու համար՝ բացառությամբ ապրանքները «մաքսային տարանցում», «վերաարտահանում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու դեպքերի (այն դեպքում, եթե Մաքսային միության մաքսային տարածք ժամանած թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերը շարունակում են մնալ Մաքսային միության անդամ պետության պետական սահմանի անցակետում կամ գտնվում են անցակետից ոչ հեռու տեղակայված մաքսային հսկողության այլ գոտում եւ նախկինում մաքսային որեւէ ընթացակարգով չեն ձեւակերպվել), ինչպես նաեւ մեկնման դեպքերի՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ պարբերությանը համապատասխան:

22. Սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղները, 3-րդ հավելվածում նշված թանկարժեք մետաղների ջարդոնը եւ մնացորդները (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7112 ծածկագիր) արտահանելիս իրականացվում է գների պետական վերահսկողություն՝ սույն Հիմնադրույթի 8-րդ հավելվածով սահմանված կարգով:

Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածքում արդյունահանված եւ սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված չմշակված թանկարժեք մետաղները, թանկարժեք մետաղների հանքաքարերը եւ խտանյութերը (ՄՄ ԱՏԳ ԱԱ 2616 ծածկագիր) արտահանելիս գների պետական վերահսկողությունն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում դրանք արդյունահանվել են, եւ որի տարածքից դրանք արտահանվում են:

23. Թույլատրվում է կիրառել «Մաքսային միության մաքսային տարածքում վերամշակում», «Մաքսային միության մաքսային տարածքից դուրս վերամշակում» եւ «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերը:

Թույլատրվում է վերամշակման ենթակա թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ հումքային ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք:

Թույլատրվում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք՝ սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղների տեսքով, ինչպես նաեւ սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված չմշակված թանկարժեք մետաղների տեսքով:

Թույլատրվում է սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից վերամշակման համար՝ հաշվի առնելով սույն Հիմնադրույթի 10-րդ հավելվածով նախատեսված առանձնահատկությունները:

Թույլատրվում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից՝ սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի տեսքով, ինչպես նաեւ սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված չմշակված թանկարժեք մետաղների տեսքով:

24. Վերամշակման համար թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք եւ արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից կարող է իրականացվել միայն այն իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի կողմից, որոնք օգտագործում են թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերն իրենց արտադրական գործունեության մեջ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերամշակման գործողությունը ապրանքների վերանորոգումն է, այդ թվում՝ բաղկացուցիչ մասերի փոխարինումը՝ «ներքին սպառման համար վերամշակում»,

«Մաքսային միության մաքսային տարածքում վերամշակում», «Մաքսային միության մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերին համապատասխան՝ բացի սույն կետի 2-րդ պարբերության մեջ նշված դեպքերից:

«Ներքին սպառման համար վերամշակում», «Մաքսային միության մաքսային տարածքում վերամշակում», «Մաքսային միության մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող բնական ավաստները եւ ադամանդները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու իրավունք ունեն բացառապես ադամանդներ արտադրող սուբյեկտները:

Վերամշակման համար թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերը, ինչպես նաեւ հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս մաքսային ընթացակարգի հայտատուն, Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի կամ կազմակերպության հետ համաձայնեցնելով, մաքսային նպատակներով որոշում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները՝ ելնելով պայմանագրային այն պայմաններից, որոնց դեպքում իրականացվում է թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի վերամշակումը:

Մաքսային նպատակներով վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելը թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի համար (բացի բնական ավաստներից եւ ադամանդներից) սահմանվում է սույն Հիմնադրույթի 11-րդ հավելվածով նախատեսված կարգով, իսկ բնական ավաստների եւ ադամանդների համար՝ սույն Հիմնադրույթի 12-րդ հավելվածով:

25. Մաքսային միության մաքսային տարածքից բնական ավաստների արտահանումը վերամշակման համար իրականացվում է «Մաքսային միության մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգին համապատասխան՝ պայմանով, որ արտահանման մաքսատուրքի վճարման ապահովումը պարտադիր կերպով կատարվել է՝ հետագայում դրա գումարի վերադարձմամբ:

26. Թույլատրվում է թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ հումքային ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք՝ «բացթողում՝ ներքին սպառման համար», «մաքսային տարանցում», «անմաքս առեւտուր», «հրաժարում՝ հոգուտ պետության», «վերաարտահանում», «ոչնչացում», «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգերին համապատասխան:

Թույլատրվում են «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» եւ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող թանկարժեք մետաղների (բացառությամբ սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշվածների) եւ թանկարժեք քարերի ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք եւ արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից:

27. Մաքսային միության մաքսային տարածքից թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ հումքային ապրանքների արտահանումը «ժամանակավոր արտահանում», «մաքսային տարանցում» եւ «վերաարտահանում» մաքսային ընթացակարգերին համապատասխան, ինչպես նաեւ «Մաքսային միության մաքսային տարածքում վերամշակում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների, ապրանքների թափոնների եւ մնացորդների արտահանումը, «ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ապրանքների ոչնչացումից ստացվող թափոնների արտահանումն իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան՝ առանց լիցենզիաների:

28. Սույն Հիմնադրույթի 1-ին, 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված՝ մաքսային ընթացակարգերով ձեւակերպվող թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ հումքային ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք եւ արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից, ինչպես նաեւ սույն Հիմնադրույթով չնախատեսված դեպքերում, չեն թույլատրվում:

29. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող՝ սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղներին եւ թանկարժեք քարերին, սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված չմշակված թանկարժեք մետաղներին, թանկարժեք մետաղների հանքաքարերին եւ խտանյութերին (ՄՄ

ԱՏԳ ԱԱ 2616 ծածկագիր), թանկարժեք մետաղների ջարդոնին եւ մնացորդներին (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7112 ծածկագիր) առնչվող մաքսային գործառնություններն իրականացվում են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների մասնագիտացված մաքսակետերում Մաքսային միության անդամ պետությունների պետական վերահսկողների պարտադիր մասնակցությամբ՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 30-րդ կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող՝ սույն Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի, սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված թանկարժեք մետաղների ջարդոնի եւ մնացորդների (ՄՄ ԱՏԳ ԱԱ 7112 ծածկագիր) մասով մաքսային գործառնություններն իրականացվում են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների մասնագիտացված մաքսակետերում Մաքսային միության անդամ պետությունների պետական վերահսկողների պարտադիր մասնակցությամբ՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 30-րդ կետի երկրորդ եւ երրորդ պարբերություններով նախատեսված դեպքերի:

Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածքում արդյունահանված եւ սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղների հանքաքարերի եւ խտանյութերի (ՄՄ ԱՏԳ ԱԱ 2616 ծածկագիր) արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում դրանք արդյունահանվել են, եւ որտեղ իրականացվում են դրանց առնչվող մաքսային գործառնությունները:

30. Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի առնչությամբ մաքսային գործառնություններ իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետությունների մասնագիտացված մաքսակետերը եւ մաքսային մարմինների մասնագիտացված բաժիններն ստեղծվում են Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Մաքսային միության անդամ պետությունների պետական սահմանների, Մաքսային միության մաքսային սահմանի անցակետերում տեղակայված՝ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմիններն իրավասու են իրականացնել մաքսային գործառնություններ՝ կապված «մաքսային տարանցում», «վերաարտահանում» մաքսային ընթացակարգերով ձեւակերպումների հետ (եթե Մաքսային միության մաքսային տարածք ժամանած թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերը շարունակում են մնալ Մաքսային միության անդամ պետության պետական սահմանի անցակետում կամ գտնվում են անցակետից ոչ հեռու տեղակայված մաքսային հսկողության այլ գոտում եւ նախկինում մաքսային որեւէ այլ ընթացակարգով չեն ձեւակերպվել), ինչպես նաեւ մեկնման դեպքերի՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերությանը համապատասխան:

Թույլատրվում է մաքսային առանձին գործառնությունների իրականացումը նշված մաքսային մարմինների կողմից, որոնց գործունեության տարածքում տեղակայված են անմաքս առետրի խանութներ՝ բացառությամբ ապրանքների հայտարարագրման ժամանակ իրականացվող մաքսային գործառնությունների:

31. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող թանկարժեք մետաղներից եւ թանկարժեք քարերից արտադրատեսակների հարգադրոշմում իրականացվում է միայն հայտագրված մաքսային ընթացակարգին համապատասխան մաքսավճարների կատարումը հաստատող համապատասխան փաստաթղթերը թանկարժեք մետաղներից եւ թանկարժեք քարերից արտադրատեսակների հարգորոշում եւ հարգադրոշմում իրականացնելու համար Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմիններին (կազմակերպություններին) ներկայացնելու դեպքում:

Նշված արտադրատեսակների հարգադրոշմման կարգը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

32. Սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված հումքային ապրանքների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք իրականացվում է առանց լիցենզիաների՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը

համապատասխան:

Սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված հումքային ապրանքների արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից իրականացվում է՝ հաշվի առնելով Մաքսային միության անդամ պետության օրենսդրության պահանջները՝ լիցենզիաների հիման վրա:

Սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված հումքային ապրանքների արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից իրականացվում է հետևյալ պայմանները բավարարելու դեպքում.

ա) հումքային ապրանքների խմբաքանակները, եթե դրանք նախատեսված են արտահանման համար, պետք է ունենան՝

- թանկարժեք եւ կորզվող հարակից մետաղների պարունակության մասին Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ձեւակերպված փաստաթղթեր,

- Մաքսային միության այն անդամ պետության լիազոր մարմնի (մարմինների) եզրակացությունը (եզրակացությունները), որի տարածքում արդյունահանվել են հումքային ապրանքները՝ դրանցից թանկարժեք մետաղների արդյունաբերական կորզման հնարավորության (անհնարիության) եւ տնտեսական նպատակահարմարության (աննպատակահարմարության) մասին .

բ) հումքային ապրանքների արտահանումը՝ չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղների հանքաքարերի եւ խտանյութերի, թանկարժեք մետաղների ջարդոնի եւ մնացորդների տեսքով, թույլատրվում է այն դեպքում, եթե արտաքին առևտրային պայմանագրում սահմանված գործարքի գինը ցածր չէ այն մետաղների արժեքից, որոնց կորզումն արդյունաբերական եղանակով տնտեսապես նպատակահարմար է՝ առանց դրանց վերամշակման արժեքի .

գ) Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածքում արդյունահանված հումքային ապրանքների արտահանումը՝ Մաքսային միության մաքսային տարածքից դուրս վերամշակելու համար, թույլատրվում է միայն դրանք Մաքսային միության տվյալ անդամ պետության տարածքում վերամշակելու

տնտեսական աննպատակահարմարության կամ անհնարինության դեպքում, ինչը պետք է հաստատվի լիազոր մարմնի (մարմինների) համապատասխան եզրակացությամբ:

33. Վերամշակման համար հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս մաքսային ընթացակարգի հայտատուն, Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված մարմնի (կազմակերպության) հետ համաձայնեցնելով, մաքսային նպատակներով որոշում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները՝ ելնելով պայմանագրային այն պայմաններից, որոնց դեպքում իրականացվում է թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի վերամշակումը: Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները մաքսային նպատակներով որոշելը սահմանվում է սույն Հիմնադրույթի 11-րդ հավելվածով նախատեսված կարգով:

34. Ֆիզիկական անձինք (ռեզիդենտ եւ ոչ ռեզիդենտ) Մաքսային միության մաքսային տարածք կարող են ներմուծել անձնական, ընտանեկան, կենցաղային եւ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հետ առնչություն չունեցող այլ կարիքների համար նախատեսված թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր՝ Մաքսային միության մաքսային օրենսդրությանը համապատասխան:

35. Անձնական օգտագործման համար նախատեսված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արտահանումը Մաքսային միության մաքսային տարածքից իրականացվում է ֆիզիկական անձանց կողմից՝ առանց քանակական եւ արժեքային սահմանափակումների:

Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող, արտադրական կամ առետրային այլ գործունեության համար չնախատեսված թանկարժեք մետաղներին եւ թանկարժեք քարերին առնչվող մաքսային գործառնություններն իրականացվում են՝ առանց հաշվի առնելու սույն Հիմնադրույթի 29-րդ կետով սահմանված պահանջները:



36. Լիազոր մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

37. Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի խախտումներ թույլ տված անձինք պատասխանատվություն են կրում Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում տեղի է ունեցել խախտումը:

Հավելված 1

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐ, ՈՐՈՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ Է

Ապրանքի կրճատ անվանումը.	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
--------------------------	---------------------

Բնական ալմաստներ՝

7102 21 000 0-ից

- արդյունաբերական, չմշակված կամ պարզապես սղոցված, ճեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված՝ բացառությամբ «բորտ» եւ «դրիլինգ» ձեւ ունեցողների՝ անկախ դրանց չափերից եւ մշակման աստիճանից, ինչպես նաեւ «-3+2» եւ ավելի ցածր մաղված դասերի ալմաստների՝ ներառյալ ալմաստների ցանկացած տեսակի մշակումից ստացված թափոնները, ալմաստի խտանյութը.

- ոչ արդյունաբերական, չմշակված կամ պարզապես 7102 31 000 0

սղոցված, ճեղքված կամ կոպիտ մշակման  
 ենթարկված, որոնք կարող են օգտագործվել  
 ադամանդներ պատրաստելու համար:

Չմշակված ոսկի եւ արծաթ*	7106 10 000 0
(միայն զտարկված ոսկի եւ արծաթ՝ ձուլակտորների,	7106 91 000
թիթեղների, փոշու եւ հատիկների տեսքով, ինչպես	7108 11 000 0
նաեւ մետաղադրամների հատման համար	7108 12 000
օգտագործվող ոսկին)	7108 20 000
Չմշակված պլատին եւ պլատինային խմբի	7110 11 000
մետաղներ*	7110 21 000
(միայն զտարկված պլատին եւ պլատինային խմբի	7110 31 000 0
մետաղներ՝ ձուլակտորների, թիթեղների, փոշու եւ	7110 41 000 0
հատիկների տեսքով)	7110 19 100 0
	7110 29 000 0
Չմշակված թանկարժեք մետաղներ (միայն	7106
զտարկման ոչ ենթակա բնակտորներ)	7108
	7110
Մարգարիտ բնական	7101 10 000 0

Բնական թանկարժեք քարեր՝ չմշակված եւ մշակված 7103 10 000 0

7103 91 000 0

7103 99 000 0

Նյութեր՝ հանքային, այլ (միայն սաթի հազվագյուտ գոյացություններ) 2530 90 000 0-ից

\* Բացառությամբ Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի կողմից արտահանվող թանկարժեք մետաղների:

Հավելված 2

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը  
 և թանկարժեք մետաղների պարունակող  
 հումքային ապրանքները Մաքսային միության  
 մաքսային տարածք ներմուծելու և Մաքսային  
 միության մաքսային տարածքից արտահանելու  
 կարգի մասին հիմնադրույթի

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐ, ՈՐՈՆՑ  
 ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ  
 ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ

Ապրանքի կրճատ անվանումը	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Թանկարժեք մետաղներ՝ արտադրանքի եւ	2843 10
արտադրատեսակների տեսքով	2843 21 000 0
	2843 29 000 0
	2843 30 000 0
	2843 90
	7106 10 000 0 *
	7106 92 000 0 *
	7108 13 *
	7110 19 *
	7110 29 000 0 *

---

7110 39 000 0 \*

7110 49 000 0 \*

7113

7114

7115

9003 19 000 1

9021 29 000 0 \*\*

9113 10 100 0

9608 10 920 0

9608 10 990 0

9608 30 000 0

3006 40 000 0 \*\*\*

7107 00 000 0

7109 00 000 0

7111 00 000 0 8544 \*\*\*

9101\*\*\*

9102\*\*\*

9103\*\*\*

9105 \*\*\*

9111\*\*\*

9112\*\*\*

6804 21 000 0

Թանկարժեք մետաղներից	8205
արտադրատեխնիկական նշանակության արտադրատեսակներ	8207 8522 90 300 0
Բնական ալմաստներ՝ արդյունաբերական, չմշակված կամ պարզապես սղոցված, ճեղքված կամ կոպիտ մշակման ենթարկված, «բորտ» եւ «դրիլինգ» ձեւ ունեցող՝ անկախ դրանց չափերից եւ մշակման աստիճանից, ինչպես նաեւ «-3+2» եւ ավելի ցածր մաղված դասերի ալմաստներ	7102 21 000 0-ից
Ալմաստներ՝ արդյունաբերական, այլ	7102 29 000 0
Փշրանք եւ փոշի՝ ալմաստներից	7105 10 000 0
Ալմաստներ՝ մշակված, բայց չշրջանակված կամ չամրացված, ոչ արդյունաբերական, այլ (ադամանդներ)	7102 39 000 0
Թանկարժեք քարերից եւ բնական մարգարտից արտադրատեսակներ	7116 20-ից 7116 10 000 0- ից
Մետաղադրամներ	7118 ***

\* Բացառությամբ զտարկված թանկարժեք մետաղների՝ ձուլակտորների, թիթեղների, փոշու եւ հատիկների տեսքով, նաեւ չմշակված ձեւերի:

\*\* Միայն թանկարժեք մետաղներից կամ գլանված թանկարժեք մետաղներից:

\*\*\* Միայն թանկարժեք քարերով ներդիրներ ունեցող կամ թանկարժեք քարերով ներդիրներ չունեցող թանկարժեք մետաղներից:



Հավելված 3

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը  
 և թանկարժեք մետաղներ պարունակող  
 հումքային ապրանքները Մաքսային միության  
 մաքսային տարածք ներմուծելու և Մաքսային  
 միության մաքսային տարածքից արտահանելու  
 կարգի մասին հիմնադրույթի

ՉՄՇԱԿՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ  
 ԶԱՐԴՈՆ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐ ԵՎ  
 ԽՏԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ  
 ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ՄԱՔՍԱՅԻՆ  
 ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՈՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ  
 ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ Է

Ապրանքի կրճատ անվանումը	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը
Գունավոր մետաղների հանքաքարեր,	2603 00 000 0
խտանյութեր և մոխիր	2604 00 000 0
	2607 00 000 0
	2608 00 000 0
	2609 00 000 0
	2617
	2620 19 000 0
	2620 21 000 0

	2620 29 000 0
	2620 30 000 0
	2620 99 100 0
	2620 99 950 1
	2620 99 400 0
	2620 99 950 2
	2620 91 000 0
	2620 99 950 3
	2620 99 950 9
	2621
Գունավոր մետաղների արտադրության կիսապատրաստուկներ	7401 00 000 0
	7402 00 000 0
	7501
	7801 99 100 0
Թանկարժեք մետաղների հանքաքարեր, խտանյութեր	2616
Թանկարժեք մետաղների ջարդոն եւ թափոններ	7112
Չմշակված թանկարժեք մետաղներ	7106 91 000
(բացառությամբ զտարկված թանկարժեք մետաղների՝ ձուլակտորների, թիթեղների, փոշու եւ	7108 12 000 9

հասիկների տեսքով)

7110 11 000 9

7110 21 000 9

7110 31 000 0

7110 41 000 0

#### Հավելված 4

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

#### ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԸ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԸ ՀԱԶՎԱԳՅՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՆ ԴԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Թանկարժեք մետաղների հազվագյուտ բնակտորների կատեգորիային կարող են դասվել՝

ա) ոսկու բնակտորները.

– արմատական հանքավայրերից՝

բյուրեղներ, դենդրիտներ եւ դրանց կցաճումներ՝ 1 գրամ եւ ավելի զանգվածով, անկանոն ձեւի կուտակումներ՝ 5 գրամ եւ ավելի զանգվածով.

- ցրոնային հանքավայրերից՝

բյուրեղներ, դենդրիտներ եւ դրանց կցաճումներ՝ 5 գրամ եւ ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության եւ ողորկության ցածր աստիճան .

անկանոն ձեւի կուտակումներ՝ 50 գրամ եւ ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության եւ ողորկության ցածր աստիճան .

անկանոն ձեւի կուտակումներ՝ 1000 գրամ եւ ավելի զանգվածով՝ անկախ հարթեցվածության եւ ողորկության աստիճանից.

բ) արծաթի բնակտորները՝ ցրոնային եւ արմատական հանքավայրերից՝ բյուրեղներ, դենդրիտներ եւ դրանց կցաճումներ՝ 0,5 գրամ եւ ավելի զանգվածով, անկանոն ձեւի կուտակումներ՝ 5 գրամ եւ ավելի զանգվածով.

գ) պլատինի եւ պլատինային խմբի մետաղների բնակտորները.

– արմատական հանքավայրերից՝

բյուրեղներ եւ դրանց կցաճումներ՝ 1 գրամ եւ ավելի զանգվածով.

անկանոն ձեւի կուտակումներ՝ 5 գրամ եւ ավելի զանգվածով.

– ցրոնային հանքավայրերից՝

բյուրեղներ եւ դրանց կցաճումներ՝ 5 գրամ եւ ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության եւ ողորկության ցածր աստիճան .

անկանոն ձեւի կուտակումներ՝ 20 գրամ եւ ավելի զանգվածով, որոնք ունեն հարթեցվածության եւ ողորկության ցածր աստիճան .

անկանոն ձեւի կուտակումներ՝ 200 գրամ եւ ավելի զանգվածով՝ անկախ հարթեցվածության եւ ողորկության աստիճանից.

դ) որեւէ պատմական իրադարձության կամ պատմության, գիտության եւ մշակութային մեջ առանցքային դեր ունեցած հայտնի անձանց հետ առնչություն ունեցող բնակտորները.

ե) երկրում թանկարժեք մետաղների արդյունահանման զարգացման պատմության հետ առնչություն ունեցող բնակտորները.

զ) բնակտորները՝ հայտնի հավաքածուներից, հավաքանիներից, թանգարաններից.

է) արտասովոր ձեւ ունեցող բնակտորները:

2. Հազվագյուտ թանկարժեք քարերի կատեգորիային կարող են դասվել՝

ա) 50 կարատ եւ ավելի քաշով ալմաստները՝ բացի «բորտ» դիրքում նշվածներից.

բ) 20 կարատ եւ ավելի քաշով ադամանդները.

գ) առաջին գույնի (մուգ կանաչ), առաջին եւ երկրորդ տեսակների չմշակված զմրուխտները (հանքակտորները, բյուրեղները կամ զմրուխտների բյուրեղների սերտաճվածքները), որոնք հետաքրքրություն են ներկայացնում իրենց բյուրեղների կառուցվածքով եւ հանքային համակցությամբ, ինչպես նաեւ 10 միլիմետրից սկսող եւ ավելի չափ ունեցող դրանց բեկորները, առաջին գույնի (մուգ կանաչ), բարձր աստիճանի թափանցիկությամբ՝ ներքին փայլով (կատեգորիան՝ «էքստրա»).

դ) 10 կարատ եւ ավելի քաշով երեսակված զմրուխտները, որոնք բացառիկ են իրենց գույնով, ձեւով եւ որակով, առաջին գույնի (մուգ կանաչ), առաջին եւ երկրորդ խմբերի մաքրությամբ.

ե) չմշակված սուտակները, շափյուղաները՝ հագեցած գունային երանգներով, եւ ալեքսանդրիտները՝ ուժեղ ալեքսանդրիտային էֆեկտով (հանքակտորները, բյուրեղները կամ բյուրեղների սերտաճվածքները), առաջին եւ երկրորդ տեսակների, որոնք հետաքրքրություն են ներկայացնում իրենց բյուրեղների ձեւով, հանքային համակցությամբ՝ լավ արտահայտված բնական ձեւ ունեցող բյուրեղներով.

զ) 10 կարատ եւ ավելի քաշով երեսակված սուտակները՝ արնակարմիր գույնի, «բիրմայական» տիպի, առաջին խմբի մաքրությամբ.

է) 10 կարատ եւ ավելի քաշով երեսակված շափյուղաները՝ կապույտ տերեփուկի գույնի, «քաշմիրյան» տիպի, մաքրության առաջին խմբի, ինչպես նաեւ հազվագյուտ գույների (դեղին, կանաչ, նարնջագույն, մանուշակագույն).

ը) 5 կարատ եւ ավելի քաշով երեսակված ալեքսանդրիտները՝ ուժեղ ալեքսանդրիտային էֆեկտով, առաջին եւ երկրորդ խմբերի մաքրությամբ.

թ) 5 կարատից ավելի քաշով մարգարիտները՝ սպիտակ, երկնագույն եւ սեւ գույների, լավ փայլ ունեցող՝ սադափագույն նրբերանգով, տարբեր ձեւի՝ ուղիղ, գնդաձեւ, ձվաձեւ, կաթիլաձեւ («կոկոն») եւ անկանոն ձեւի («բարոկկո»).

ժ) որեւէ պատմական իրադարձության կամ պատմության, գիտության եւ մշակույթի մեջ առանցքային դեր ունեցած հայտնի անձանց հետ առնչություն

ունեցող թանկարժեք քարերը:

3. Սույն Հիմնադրույթի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներին համապատասխանող թանկարժեք մետաղների բնակտորները նախքան շրջանառության մեջ մտնելը պետք է նախապես ընտրվեն եւ դրանք արդյունահանող սուբյեկտների կողմից ներկայացվեն Մաքսային միության այն անդամ պետության գործադիր իշխանության լիազոր մարմնի՝ թանկարժեք մետաղների բնակտորների հարցերով փորձագիտական հանձնաժողով, որի տարածքում արդյունահանվել են նշված բնակտորները:

Սույն Հիմնադրույթի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխանող թանկարժեք քարերը նախքան շրջանառության մեջ մտնելը պետք է ընտրվեն եւ դրանց տեսակավորումը, նախնական դասակարգումը եւ նախնական գնահատումն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացվեն Մաքսային միության այն անդամ պետության գործադիր իշխանության լիազոր մարմնի՝ թանկարժեք քարերի առանձին տեսակների հարցերով փորձագիտական հանձնաժողովներ, որի տարածքում արդյունահանվել են նշված թանկարժեք քարերը:

4. Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի բնակտորները հազվագյուտների կատեգորիային դասելու մասին որոշումներն ընդունում են փորձագիտական հանձնաժողովները՝ իրենց կողմից անցկացվող փորձաքննության արդյունքների հիման վրա:

Թանկարժեք մետաղների հազվագյուտ բնակտորների եւ հազվագյուտ թանկարժեք քարերի համար համապատասխան փորձագիտական հանձնաժողովների կողմից ձեւակերպվում են փաստաթղթեր, որոնցով հաստատվում է դրանք հազվագյուտների կատեգորիային դասելու փաստը, եւ դրանք ենթակա են հատուկ հաշվառման: Այդ արժեքները հաշվառելու ձեւերը հաստատում են Մաքսային միության այն անդամ պետության գործադիր իշխանության լիազոր մարմինները, որի տարածքում արդյունահանվել են նշված բնակտորները եւ թանկարժեք քարերը:

5. Թանկարժեք մետաղների բնակտորների հարցերով փորձագիտական հանձնաժողովի եւ թանկարժեք քարերի առանձին տեսակների հարցերով փորձագիտական հանձնաժողովների մասին հիմնադրույթները հաստատվում են Մաքսային միության այն անդամ պետության գործադիր իշխանության լիազոր մարմինների կողմից, որի տարածքում արդյունահանվել են նշված բնակտորները եւ թանկարժեք քարերը:



## Հավելված 5

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

### ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԸ ԶՏԱՐԿՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻՆ ԴԱՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Թանկարժեք մետաղների՝ զտարկման ոչ ենթակա բնակտորներ (այսուհետ՝ բնակտորներ) են համարվում բնակտորավոր թանկարժեք մետաղների առանձնացումները, որոնք իրենց չափերով կտրուկ տարբերվում են տվյալ կոնկրետ հանքավայրում թանկարժեք մետաղի գերակշիռ մասնիկներից եւ ունեն 0,3 գրամից ավելի զանգված, առանձնացված են թանկարժեք մետաղների հանքային հումքից, նախատեսված են ներքին եւ արտաքին շուկաներում՝ շրջանառության, արտադրական, գիտական, սոցիալ-մշակութային նպատակներով օգտագործվելու համար, եւ չեն դասվում հազվագյուտների շարքին:

2. Սույն Հիմնադրույթի 1-ին կետի պահանջներին համապատասխանող բնակտորները դրանք արդյունահանող սուբյեկտներն ընտրում են ինքնուրույն՝ իրենց կողմից հաստատված կարգով, եւ նշված բնակտորները նրանց հաշվեկշռում հաշվառվում են առանձին տողով՝ ըստ զանգվածի եւ քանակի:

3. Բնակտորների խմբաքանակը պետք է բաժանվի ըստ խոշորության դասերի՝ նշելով բնակտորների քանակը եւ դրանց ընդհանուր քաշը՝ խոշորության յուրաքանչյուր դասի համար, եւ համալրվի ընտրված բնակտորների կոնկրետ հանքավայրի թանկարժեք մետաղի խոշորությունը որոշող այն մաղային անալիզի

տվյալներով (ըստ երկրաբանական կամ շահագործման նպատակով հետախուզման տվյալների), որով հաստատվում է բնակտորների՝ տվյալ հանքավայրում թանկարժեք մետաղի գերակշիռ մասնիկներից իրենց չափերով կտրուկ տարբերվելու փաստը:

## Հավելված 6

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼԻՍ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼԻՍ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Սույն կանոնները մշակվել են՝ ի կատարումն «Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի (այսուհետ՝ Հիմնադրույթ), ինչպես նաեւ ի կատարումն չմշակված բնական ավաստների հավաստագրման միջազգային սխեմայի պահանջների, եւ դրանցով սահմանվում են թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս պետական վերահսկողություն իրականացնելու կանոնները (այսուհետ՝ պետական վերահսկողություն):

2. Պետական վերահսկողությունն իրականացնում են Մաքսային միության անդամ պետությունների լիազորված այն կազմակերպությունները, որոնք որոշվում են այդ պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան:

3. Պետական վերահսկողության նպատակը թանկարժեք քարերի եւ դրանցից

արտադրատեսակների հետ արտաքին տնտեսական գործարքներ իրականացնելիս Մաքսային միության անդամ պետության օրենսդրությունը պահպանելու ստուգումն է:

4. Պետական վերահսկողությունն անցկացնելիս գործունեության հիմնական ուղղություններն են՝

ա) միասնական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի եւ ուղեկցող փաստաթղթերի հետ թանկարժեք քարերի տեսակավորման որակի եւ գնահատման համապատասխանության ստուգումը,

բ) նորմատիվատեխնիկական փաստաթղթերի եւ ուղեկցող փաստաթղթերի հետ թանկարժեք քարերից արտադրատեսակների համապատասխանության ստուգումը,

գ) Մաքսային միության տարածքում գործող միասնական դասակարգիչները, գնացուցակները, նմուշները կիրառելու հիմնավորվածության ստուգումը,

դ) թանկարժեք քարերի առաջնային դասակարգման ժամանակ թանկարժեք քարերը հազվագյուտների կատեգորիային դասելու սահմանված կարգը պահպանելու ստուգումը,

ե) թանկարժեք քարերը Մաքսային միության անդամ պետությունների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդերում ներառելու նպատակով դրանք ձեռք բերելու համար Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությամբ սահմանված նախապատվության իրավունքը պահպանելու ստուգումը,

զ) Քիմբերլի գործընթացի չմշակված բնական ալմաստների հավաստագրման միջազգային սխեմայի պահանջները պահպանելու ստուգումը:

5. Գործունեության հիմնական ուղղություններն իրագործելու նպատակով իրականացվում են հետեւյալ ընթացակարգերը՝

ա) արտահանվող թանկարժեք քարերի ծագման եւ դրանք տնօրինելու օրինականության ստուգումը,

բ) արտահանվող թանկարժեք քարերի տեսակավորման որակի նկատմամբ վերահսկողությունը,

գ) թանկարժեք քարերը հիմնականում Մաքսային միության անդամ պետությունների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդերում ներառելու պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

դ) թանկարժեք քարերի՝ նույնականացման գործընթացում որոշվող դասակարգման հատկանիշները ճիշտ կերպով սահմանելու նկատմամբ վերահսկողությունը,

ե) թանկարժեք քարերի (բացառությամբ չմշակված ալմաստների եւ ադամանդների) արտահանվող խմբաքանակների պայմանագրային արժեքի նկատմամբ վերահսկողությունը՝ պետական վերահսկողության արդյունքում սահմանված արժեքից դրա՝ 5 տոկոսից ոչ պակաս ունեցած շեղման մասով,

զ) ադամանդներ արտադրող սուբյեկտների կողմից արտահանելու համար նախատեսված չմշակված ալմաստների խմբաքանակը Մաքսային միության անդամ պետությունների ներքին շուկայում իրացնելու նպատակով 10 աշխատանքային օրվա ընթացքում պարտադիր առաջարկի նկատմամբ վերահսկողությունը,

է) «Մաքսային միության մաքսային տարածքից դուրս վերամշակում», «Մաքսային միության մաքսային տարածքում վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում» մաքսային ընթացակարգերը կազմակերպությունների կողմից կիրառելիս Մաքսային միություն ներմուծվող մշակված թանկարժեք քարերի նույնականացումը եւ ծագման ստուգումը՝ Մաքսային միության մաքսային տարածքից նախկինում արտահանված չմշակված թանկարժեք քարերից դրանց պատրաստված լինելու հնարավորությունը որոշելու նպատակով, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող մշակված թանկարժեք քարերի նույնականացումը եւ ծագման ստուգումը՝ Մաքսային միության մաքսային տարածք նախկինում ներմուծված չմշակված թանկարժեք քարերից դրանց պատրաստված լինելու հնարավորությունը որոշելու նպատակով,

ը) Մաքսային միության անդամ պետությունների չմշակված բնական

ալմաստների արտահանման հավաստագրերի ձեւակերպումը, տրամադրումը եւ հաշվառումը, ինչպես նաեւ՝ արտահանող պետության բնական ալմաստների արտահանման հավաստագրերի (Քիմբերլի գործընթացի հավաստագիր) առկայության ստուգումը եւ հաշվառումը՝ չմշակված բնական ալմաստներ ներմուծելիս չմշակված բնական ալմաստների հավաստագրման միջազգային սխեման իրականացնելու նպատակով,

թ) Մաքսային միության անդամ պետությունների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդերից եւ Մաքսային միության անդամ պետությունների սուբյեկտների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդերից թանկարժեք քարերը ժամանակավորապես ելք անելու պայմանների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

ժ) պետական վերահսկողության արդյունքները հաստատող փաստաթղթերի ձեւակերպումը:

6. Պետական վերահսկողությունն իրականացնելու համար լիազորված կազմակերպություններին են ներկայացվում տվյալներ եւ փաստաթղթեր՝

- դիմում-հայտ՝ նշելով թանկարժեք քարեր ներմուծող (արտահանող) կազմակերպության վավերապայմանները՝ պետական վերահսկողությունն անցկացնելու համար անհրաժեշտ կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի հետ միասին, ներմուծման (արտահանման) հայտագրված նպատակները եւ պետական վերահսկողությունն անցկացնելու ենթադրվող ամսաթիվը,

- արտաքին առևտրային պայմանագիր (համաձայնագիր), որի հիման վրա իրականացվում է թանկարժեք քարերի ներմուծումը (արտահանումը)՝ մասնագրերի եւ ուղեկցող փաստաթղթերի հետ միասին,

- փաստաթուղթ, որով հաստատվում է թանկարժեք քարեր ներմուծող (արտահանող) կազմակերպության՝ թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու իրավունքը եւ այդ կազմակերպության՝ Մաքսային միության այն անդամ պետության լիազորված կազմակերպությունում հատուկ հաշվառման վերցված լինելը, որի ռեզիդենտներն են տվյալ կազմակերպությունները.

- կազմակերպության կանոնադրական եւ գրանցման փաստաթղթեր,

- տվյալներ՝ կազմակերպության փաստացի հասցեի մասին,

- կազմակերպության վկայական՝ պատասխանատու ներկայացուցչի անձը հաստատող եւ պետական վերահսկողությունն անցկացնելու նպատակով փաստաթղթեր եւ թանկարժեք քարեր ներկայացնելու համար նրան իրավունք տվող:

7. Բնական ալմաստները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս, ի լրումն սույն կանոնների 6-րդ կետում նշված փաստաթղթերի, պետք է ներկայացվի արտահանող պետության բնական ալմաստների արտահանման հավաստագիրը (Քիմբերլի գործընթացի հավաստագիր), որը ձեւակերպված է չմշակված բնական ալմաստների հավաստագրման միջազգային սխեմայի պահանջներին համապատասխան:

8. Չմշակված թանկարժեք քարերի արտահանում իրականացնելիս, ի լրումն սույն կանոնների 6-րդ կետում նշված փաստաթղթերի, պետք է ներկայացվեն՝

- Մաքսային միության անդամ պետությունների պետական իշխանության լիազոր գործադիր մարմնի կողմից տրամադրվող լիցենզիա՝ չմշակված թանկարժեք քարերի արտահանման համար,

- Մաքսային միության անդամ պետությունների տարածքում չմշակված թանկարժեք քարերի գնման պայմանագրեր՝ հանձնման ակտերի եւ մասնագրերի (կոմպլեկտայնության ցանկերի) հետ միասին (այդ թվում՝ տվյալ պայմանագրով ձեռք բերված թանկարժեք քարերի խմբաքանակի մաս արտահանելու դեպքում),

- արտահանողի գործարքների հաշվառման հաստատում (Մաքսային միության անդամ պետությունների ներքին շուկայում չմշակված թանկարժեք քարերի ձեռքբերում)՝ ըստ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված թանկարժեք քարերի գնման պայմանագրերի,

- չմշակված թանկարժեք քարերի արտահանվող խմբաքանակի քաշի եւ արժեքի մասին ընդհանուր տեղեկանք՝ ըստ հումքի մասին յուրաքանչյուր

պայմանագրի՝ սույն կանոնների 1-ին հավելվածի համաձայն:

9. Մշակված թանկարժեք քարերի արտահանում իրականացնելիս, ի լրումն սույն կանոնների 6-րդ կետում նշված փաստաթղթերի, պետք է ներկայացվեն.

- Մաքսային միության անդամ պետությունների պետական իշխանության լիազոր գործադիր մարմնի կողմից տրամադրվող լիցենզիա՝ թանկարժեք քարերի արտահանման համար (ադամանդներից բացի),

- բեռնառաքման մասնագիր, որում արտացոլված է մշակված թանկարժեք քարերի ամբողջական տեսականին՝ քանակական եւ արժեքային արտահայտությամբ,

- ընդհանրացված մասնագիր՝ ըստ չափաքաշային խմբերի,

- արտահանվող քարերի յուրաքանչյուր խմբաքանակի պատրաստման համար չմշակված թանկարժեք քարերի փաստացի օգտագործման մասին տեղեկանք՝ սույն կանոնների 2-րդ հավելվածի համաձայն,

- 10, 80 կարատ եւ ավելի քաշով չմշակված ալմաստների օգտագործման մասին տեղեկանք՝ սույն կանոնների 3-րդ հավելվածի համաձայն,

- 6 կարատից ավելի ադամանդների գնահատման մասին ձեռնարկության արձանագրություն (ակտ),

- Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության լիազոր մարմնի՝ թանկարժեք քարերի հարցերով փորձագիտական հանձնաժողովի արձանագրություն (եթե ձեռքբերված չմշակված թանկարժեք քարերի կամ թանկարժեք քարերի պատրաստի արտադրանքի մեջ առկա են այնպիսի թանկարժեք քարեր, որոնք իրենք բնութագրերով կարող են դասվել հազվագյուտների կատեգորիային),

- թանկարժեք քարերի ծագումը (ձեռքբերումը) եւ դրանք տնօրինելու օրինականությունը հաստատող փաստաթղթեր՝ պայմանագրեր, հանձնաժողովի պայմանագիր կամ գործակալական համաձայնագիր, չմշակված թանկարժեք քարերի հանձնման ակտեր, կոմպլեկտայնության ցանկեր, սահմանված կարգով



հաշվառված չմշակված թանկարժեք քարերի հետ գործարքների ակտեր:

10. Թանկարժեք քարերից արտադրատեխնիկական նշանակության արտադրատեսակների արտահանում իրականացնելիս, ի լրումն սույն կանոնների 6-րդ կետում նշված փաստաթղթերի, պետք է ներկայացվեն՝

- բեռնառաքման մասնագիր, որում արտացոլված է ապրանքների ամբողջական տեսականին՝ քանակական եւ արժեքային արտահայտությամբ,

- արտահանվող ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակի պատրաստման համար թանկարժեք քարերի փաստացի օգտագործման մասին տեղեկանք՝ սույն կանոնների 4-րդ հավելվածի համաձայն,

- արտահանվող արտադրատեսակների պատրաստման համար օգտագործվող թանկարժեք քարերի ծագումը (ձեռքբերումը) հաստատող փաստաթղթեր՝ պայմանագրեր, հանձնաժողովի պայմանագիր կամ գործակալական համաձայնագիր, չմշակված թանկարժեք քարերի հանձնման ակտեր, կոմպլեկտայնության ցանկեր, սահմանված կարգով հաշվառված չմշակված թանկարժեք քարերի հետ գործարքների ակտեր,

- արտահանվող ապրանքների համար նորմատիվատեխնիկական փաստաթղթեր՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

11. Ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է ստորագրվեն ղեկավարի կողմից եւ վավերացվեն ձեռնարկության կնիքով, օրինակները պետք է կարվեն, վավերացվեն ղեկավարի ստորագրությամբ եւ կազմակերպության կնիքով:

12. Պետական վերահսկողության նպատակներով կարող է պահանջվել տեղեկատվություն՝ մագնիսական կրիչների վրա՝ սահմանված ձեւափաշով:

13. Թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս լիազորված կազմակերպությունների եւ մաքսային մարմինների փոխգործակցության կարգը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

14. Պետական վերահսկողության արդյունքները ձեւակերպվում են պետական վերահսկողության ակտով, որի ձեւը ներկայացված է սույն կանոնների 5-րդ հավելվածում:

Չմշակված բնական ալմաստների արտահանվող բոլոր խմբաքանակների համար տրվում է չմշակված բնական ալմաստների արտահանման հավաստագիր, որը ձեւակերպված է Մաքսային միության անդամ պետության ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Պետական վերահսկողության ակտերում արտացոլված են հետեւյալ տեղեկությունները.

ա) թանկարժեք քարերը ներմուծելիս (արտահանելիս) թանկարժեք քարերի տեսակավորման որակի եւ գնահատման նկատմամբ պետական վերահսկողության սահմանված բոլոր ընթացակարգերի, ինչպես նաեւ այն գործողությունների իրականացման փաստի հաստատումը, որոնք ուղղված են բնական ալմաստների հավաստագրման միջազգային սխեմայի պահանջների կատարմանը,

բ) թանկարժեք քարերի խմբաքանակի մաքսային ձեւակերպում իրականացնելու հնարավորության վերաբերյալ առաջարկությունների հետ միասին խախտումների բացակայության մասին եզրակացությունները կամ պետական վերահսկողությունն իրականացնելու գործընթացում հայտնաբերված օրենսդրության եւ միջազգային պարտավորությունների այնպիսի խախտումների մասին եզրակացությունները, որոնք խոչընդոտում են մաքսային ձեւակերպման իրականացմանը,

գ) բնական ալմաստների խմբաքանակը մաքսային տարածք առանց հավաստագրի կամ Քիմբերլի գործընթացի հավաստագրման միջազգային սխեմայի պահանջների խախտումներով ներմուծելու դեպքում պետական վերահսկողության ակտում նշվում է եզրակացություն՝ նշված խմբաքանակն արտահանող պետություն վերադարձնելու անհրաժեշտության մասին:

16. Թանկարժեք քարերի հետ արտաքին առևտրային գործառնություններ իրականացնելիս պետական վերահսկողություն անցկացնելու ժամանակ

օրենսդրության խախտումներ կամ հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում համապատասխան նյութերն ուղարկվում են Մաքսային միության անդամ պետության լիցենզավորող եւ իրավապահ մարմիններ:

17. Պետական վերահսկողության անցկացման արդյունքները կարող են բողոքարկվել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

Թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս պետական վերահսկողություն իրականացնելու կանոնների

ՏԵՂԵԿԱՆՔ

չմշակված թանկարժեք քարերն օգտագործելու մասին

\_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_ արտահանման պայմանագրի

Համարը՝ ը/կ	Հումքին առնչվող փաստաթղթե- րի համարները, ամսաթիվը, ալմաստի հումք վաճառողը	Հանձնման ակտերի համարները, կոմպլեկտայ- նության ցանկերի համարները	Չմշակված թանկարժեք քարերը՝ ըստ պայմանագրերի, հանձնման ակտերի, կոմպլեկտայ- նության ցանկերի	Չմշակված թանկարժեք քարերի պատրաստման համար օգտագործված՝ արտահանման համար իրացման	Չմշակված թանկարժեք քարերը՝ մշակված թանկարժեք քարերի պատրաստման համար օգտագործված՝ ներքին	Չմշակված թանկարժեք քարերը՝ երկրորդային շուկայում վաճառված	Չմշակված թանկարժեք քարերը՝ նախկինում արտահանված	Չմշակված թանկարժեք քարերը՝ արտահանման համար հայտագրվող	Չմշակված թանկարժեք քարերի մնացորդը՝ պահեստում կամ արտադրության մեջ
----------------	---	--	---	---	---	--	---	---	--

				նպատակով		շուկայում իրացման նպատակով									
				Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար

Կազմակերպության ղեկավար՝

Գլխավոր հաշվապահ՝

Կ.Տ.



1	2	3	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար		11	Քաշը, կարատ- ները	Արժեքը, ԱՄՆ դոլար
								Հաշվարկ- ված	Պայմանա- գրային			
			4	5	6	7	8	9	10		12	1 3
1. Արտա- հանումը												
Ներքին շուկան												
.												
.												
.												
	ԸՆԴԱՄԵՆԸ.											

Կազմակերպության ղեկավար՝

Կ.Տ.





									խումբ)		ավելացումներով), 1 կարատի համար սահմանված, ԱՄՆ դոլար	(զեղչերով, ավելացումներով), ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1	2	3	4	5	4.1	5.1	6	7	8	9	10	11	12
1.													
Ընդամենը.													
...													
Ընդհանուրը.													

**Ծանոթագրություն.**

- Անհրաժեշտ է ամփոփել արդյունքները՝ 6 կարատից ավելի քաշով ադամանդների քանակի, քաշի եւ արժեքի (հաշվարկված եւ պայմանագրային) մասով:

- Եթե օգտագործվել է բյուրեղի մի մասը, ապա 4, 5 սյունակներում նշվում են բյուրեղի սկզբնական քաշը եւ արժեքը, 4.1 սյունակում՝ բյուրեղի օգտագործված մասի քաշը, եւ միեւնույն սյունակում աստղանիշով (\*) նշվում է բյուրեղի չօգտագործված մասի քաշը:

- Եթե բյուրեղի մի մասը նախկինում վերամշակվել է, ապա 4, 5 սյունակներում նշվում են բյուրեղի սկզբնական քաշը եւ արժեքը, 4.1 սյունակում՝ նախկինում օգտագործված մասի քաշը՝ վանդականիշով (#), եւ օգտագործված մասի քաշը՝ ադամանդների ընթացիկ բեռնառաքման մասով:

- Եթե հումքի մասին պայմանագրով մնացորդներն օգտագործվել են տեխնոլոգիական կարիքների համար, ապա անհրաժեշտ է դա արտացոլել ծանոթագրության մեջ՝ նշելով հումքի դուրսգրումը հաստատող փաստաթղթերը:

- Եթե լրացվում է 9-րդ սյունակը, ապա թույլատրվում է միավորել միջին եւ փոքր չափերի ստացված ադամանդները:

Կազմակերպության ղեկավար՝

Կ.Տ.




\* Մշակումը՝ սեփական արտադրության մեջ

Կազմակերպության ղեկավար՝

Գլխավոր հաշվապահ՝

Կ.Տ.

Հավելված 5

Թանկարժեք քարերը Մաքսային միության  
մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային  
միության մաքսային տարածքից արտահանելիս  
պետական վերահսկողություն իրականացնելու  
կանոնների

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱԿՏ համար \_\_\_\_/\_\_\_\_

(պետական վերահսկողությունն անցկացնելու վայրը) «\_\_\_\_» \_\_\_\_\_ թ.

«Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան՝ Մաքսային միության անդամ պետության լիազորված կազմակերպության ներկայացուցիչների կողմից անցկացվել է խմբաքանակի պետական վերահսկողություն՝ արտահանող (ներմուծող) կազմակերպության գրության հիման վրա:

Գործարքի վավերապայմանները.

Սեփականատեր հանդիսացող \_\_\_\_\_

կազմակերպության անվանումը \*

Արտահանող (ներմուծող) \_\_\_\_\_

կազմակերպության անվանումը

Ներմուծողի (արտահանողի) \_\_\_\_\_

անվանումը

Բեռնաստացողի (բեռնառաքողի)

---

անվանումը

Պայմանագիրը

---

Մասնագիրը

---

Հաշիվ-ապրանքագիրը

---

(ՔԳ) հավաստագիր

---

(չմշակված բնական ավաստների  
ներմուծումը)

Խմբաքանակի ընդհանուր քաշը

---

Խմբաքանակի արժեքը

---

Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ  
ԱՏԳ ԱԱ-ի

---

Տեղերի քանակը

---

Ներմուծող/արտահանող

---

պետությունները

Թույլատրական փաստաթղթերը.  
լիցենզիա

Ապրանքների վերամշակման  
թույլտվություն

---

Վերահսկողությունն անցկացնելու ժամանակ օգտագործվել են հետևյալ սարքերն ու գործիքները.

---

---

Պետական վերահսկողության արդյունքները եւ եզրակացությունները.

---

---

Պետական վերահսկողությունն անցկացվել է նախքան մաքսային հսկողությունը՝ մաքսային հսկողության գործընթացում:

Պետական վերահսկողության ավարտին բեռը փաթեթավորվել է \_\_\_\_\_ տեղով եւ կապարակնքվել՝ ստորեւ նշվածների կնիքներով.

արտահանող (ներմուծող) կազմակերպության \_\_\_\_\_ համարի

մաքսային մարմնի պաշտոնատար անձի \_\_\_\_\_ համարի

լիազորված կազմակերպության ներկայացուցչի \_\_\_\_\_ համարի

Լիազորված կազմակերպության ներկայացուցիչներ. \_\_\_\_\_

\_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

\_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

Կազմակերպության կողմից պետական վերահսկողության համար ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը հաստատում եմ: Պետական վերահսկող-փորձագետների՝ արժեքների հետ ունեցած աշխատանքի նկատմամբ պահանջներ չունեմ: (Կազմակերպության լիազորագիրը ներկայացված է):

Արտահանող (ներմուծող) կազմակերպության ներկայացուցիչ

\_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

Պետական վերահսկողության անցկացումը հաստատում եմ.

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Պետական վերահսկողության ներկայացուցիչ \_\_\_\_\_ /  
\_\_\_\_\_ /

Կ.Տ.

Բնական ալմաստների արտահանման հավաստագիր\*

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_ համարի

Լիազորված կազմակերպության՝

հավաստագիրը ձեւակերպած ներկայացուցիչ \_\_\_\_\_ /  
\_\_\_\_\_ /

Կ.Տ.

\* Բնական ալմաստների արտահանման դեպքում:



## Հավելված 7

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը  
եւ թանկարժեք մետաղներ պարունակող  
հումքային ապրանքները Մաքսային միության  
մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային  
միության մաքսային տարածքից արտահանելու  
կարգի մասին հիմնադրույթի

Թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ թանկարժեք մետաղներ  
պարունակող հումքային ապրանքների արտահանման լիցենզիան ձեւակերպելու  
համար հայտատուն, ի լրումն սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետում  
նշված փաստաթղթերի, ներկայացնում է հետեւյալ փաստաթղթերը.

### 1. Չմշակված բնական ալմաստներ

#### 1. Բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտներ՝

- թանկարժեք քարերի հետ գործարքների կատարման նկատմամբ  
վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր  
մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- ընդերքի օգտագործման իրավունքի մասին պայմանագրի կամ լիցենզիայի  
պատճենը:

2. Ադամանդներ արտադրող սուբյեկտներ եւ բնական ալմաստներից  
արտադրանք եւ արտադրատեսակներ արտադրող սուբյեկտներ՝

- թանկարժեք քարերի հետ գործարքների կատարման նկատմամբ  
վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր  
մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- հատուկ հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը,

- այն պայմանագրերի պատճենները, որոնցով հաստատվում է բնական ալմաստների գնումը՝ բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտներից կամ Մաքսային միության այն անդամ պետության պետական ֆոնդում, որի տարածքում արդյունահանվել են բնական ալմաստները, ինչպես նաև ներքին շուկայում:

3. Բնական ալմաստներ արտադրող սուբյեկտների եւ ադամանդներ արտադրող սուբյեկտների հետ պայմանագրերի համաձայն՝ թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող եւ հատուկ հաշվառման կանգնած կազմակերպություններ՝

բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտներին պատկանող բնական ալմաստներն արտահանելիս՝

- թանկարժեք քարերի հետ գործարքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտի հետ կնքվող՝ հանձնաժողովի պայմանագրի կամ գործակալական համաձայնագրի պատճենը,

- բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտի՝ ընդերքի օգտագործման իրավունքի մասին պայմանագրի կամ լիցենզիայի պատճենը,

- հատուկ հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը.

ադամանդներ արտադրող սուբյեկտներին պատկանող բնական ալմաստներն արտահանելիս՝

- թանկարժեք քարերի հետ գործարքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- ադամանդներ արտադրող սուբյեկտի հետ կնքվող՝ հանձնաժողովի պայմանագրի կամ գործակալական համաձայնագրի պատճենը,

- արտահանողի՝ հատուկ հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը,

- այն կազմակերպության՝ հատուկ հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը, որի ապրանքն արտահանվում է,

- այն կազմակերպության՝ հարկային մարմնում հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը, որի ապրանքն արտահանվում է,

- այն պայմանագրերի պատճենները, որոնցով հաստատվում է բնական ալմաստների գնումը՝ բնական ալմաստներ արդյունահանող սուբյեկտներից կամ Մաքսային միության այն անդամ պետության պետական ֆոնդում, որի տարածքում արդյունահանվել են բնական ալմաստները, ինչպես նաև ներքին շուկայում:

II. Ձտարկված ոսկի, արծաթ, պլատին եւ պլատինային խմբի մետաղներ (այսուհետ՝ զտարկված թանկարժեք մետաղներ)

1. Վարկային կազմակերպություններ՝

- Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի՝ թանկարժեք մետաղների հետ գործառնություններ իրականացնելու իրավունքի լիցենզիայի պատճենը,

- զտարկված թանկարժեք մետաղների սեփականությունը հաստատող պայմանագրերի կամ զտարկված թանկարժեք մետաղների սեփականատերերի հետ կնքված՝ հանձնաժողովի պայմանագրի (գործակալական համաձայնագրի) պատճենները,

- Մաքսային միության անդամ պետության բյուջեին ունեցած պարտքի բացակայությունը հաստատող փաստաթուղթը:

2. Արդյունահանող սուբյեկտներ՝

- թանկարժեք մետաղների հետ գործարքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- ընդերքի օգտագործման իրավունքի մասին պայմանագրի կամ լիցենզիայի

պատճենը:

3. Զտարկված թանկարժեք մետաղներ արտադրող սուբյեկտներ եւ թանկարժեք մետաղների հետ գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպություններ՝

- թանկարժեք մետաղների հետ գործարքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- հատուկ հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը,

- թանկարժեք մետաղների ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթերի պատճենները:

III. Թանկարժեք քարեր, զտարկման ոչ ենթակա բնակտորներ, մարգարիտ բնական, սաթի հազվագյուտ գոյացություններ

1. Արդյունահանող սուբյեկտներ՝

- թանկարժեք մետաղների, զտարկման ոչ ենթակա բնակտորների, բնական մարգարտի, սաթի հազվագյուտ գոյացությունների հետ կատարվող գործարքների վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- ընդերքի օգտագործման իրավունքի մասին պայմանագրի կամ լիցենզիայի պատճենը:

2. Թանկարժեք քարերի, զտարկման ոչ ենթակա բնակտորների, բնական մարգարտի, սաթի հազվագյուտ գոյացությունների հետ գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպություններ՝

- թանկարժեք քարերի, զտարկման ոչ ենթակա բնակտորների, բնական մարգարտի, սաթի հազվագյուտ գոյացությունների հետ գործարքների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Մաքսային միության անդամ

պետության լիազոր մարմնի հետ համաձայնեցված՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտը,

- թանկարժեք քարերի, զտարկման ոչ ենթակա բնակտորների, բնական մարգարտի եւ սաթի հազվագյուտ գոյացությունների ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթերի պատճենները,

- հատուկ հաշվառման կանգնելու մասին փաստաթղթի պատճենը:

#### IV. Թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքներ

- թանկարժեք եւ կորզվող հարակից մետաղների պարունակության մասին փաստաթղթեր՝ ձեւակերպված Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան,

- Մաքսային միության այն անդամ պետության լիազոր մարմինների եզրակացությունները, որի տարածքում արդյունահանվել են հումքային ապրանքները՝ դրանցից թանկարժեք մետաղների արդյունաբերական կորզման հնարավորության (անհնարիության) եւ տնտեսական նպատակահարմարության (աննպատակահարմարության) մասին,

- ընդերքի օգտագործման իրավունքի մասին պայմանագրի կամ լիցենզիայի պատճենը (արդյունահանող սուբյեկտների համար),

- թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների ձեռքբերման օրինականությունը հաստատող փաստաթղթերի պատճենները (թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների հետ գործառնություններ իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների համար),

- Մաքսային միության անդամ պետության լիազորված կազմակերպության թույլտվությունը՝ անդրսահմանային փոխադրումների համար (թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների մեջ վտանգավոր նյութերի պարունակության դեպքում):

## Հավելված 8

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

Արտահանվող թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը որոշելու

### ԿԱՐԳ

1. Սույն Կարգը մշակվել է «Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան (այսուհետ՝ Հիմնադրույթ)՝ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի իրացման արդյունավետության նկատմամբ պետական վերահսկողություն ապահովելու նպատակով:

2. Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը որոշվում է՝ ելնելով թանկարժեք քարերի համար գնացուցակների մեջ նախատեսված գներից եւ թանկարժեք մետաղների համար համաշխարհային շուկայի գներից:

3. Մաքսային միության տարածքում արդյունահանված եւ մշակված թանկարժեք քարերի համար կիրառվում են գների միասնական գնացուցակներ:

Գնացուցակներով սահմանված գների հիման վրա արդյունահանող եւ մշակող ձեռնարկությունները գները սահմանում են փորձագիտական ճանապարհով՝ հաշվի առնելով գների կոնյունկտուրային տատանումները:

4. Պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով արտահանվող թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը որոշվում է՝ ելնելով Մաքսային միության մաքսային տարածքում գործող գներից, որոնք կիրառվում են արտաքին առետրային պայմանագրի պայմաններին համապատասխան:

Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող կամ ոսկերչական իրերի պատրաստման ժամանակ օգտագործված, այդ թվում՝ նախկինում որպես հումք ներմուծված թանկարժեք քարերից պատրաստված՝ մշակված քարերի խմբաքանակի համար հաստատված գնացուցակներ չլինելու դեպքում պետական վերահսկողության նպատակով կիրառվում են պայմանագրային գները:

Կիրառվող գների մակարդակը հիմնավորելու համար արտադրող ձեռնարկությունները պարտավոր են ներկայացնել հաշվարկային նյութեր եւ համաշխարհային գների մակարդակի հետ պայմանագրային գների համապատասխան լինելու մասին տեխնիկա-տնտեսական հիմնավորում:

5. Արտադրանքի եւ արտադրատեսակների տեսքով, այդ թվում՝ ոսկերչական իրերի եւ թանկարժեք մետաղներից կենցաղային այլ ապրանքների տեսքով արտահանվող թանկարժեք մետաղների ընդհանուր արժեքը պետական վերահսկողության նպատակով որոշվում է՝ հաշվի առնելով նշված արտադրատեսակների մեջ պարունակվող՝ արտահանվող քիմիապես մաքուր թանկարժեք մետաղների զանգվածը եւ արտաքին առետրային պայմանագրի պայմաններին համապատասխան կիրառվող թանկարժեք մետաղների համաշխարհային շուկայի գները:

6. Մաքսային միության տարածքից արտահանվող թանկարժեք մետաղներից եւ թանկարժեք քարերից ոսկերչական իրերի ընդհանուր արժեքը որոշվում է՝ հաշվի առնելով թանկարժեք մետաղների համար համաշխարհային շուկայի գները եւ մշակված թանկարժեք քարերի գները, որոնք կիրառվում են սույն Կարգի 4-րդ եւ 5-

րդ կետերի պայմաններին համապատասխան:

7. Պետական վերահսկողություն իրականացնելու եւ արտահանվող ապրանքների մեջ պարունակվող թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը որոշելու նպատակով թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր եւ դրանցից արտադրատեսակներ արտահանող կազմակերպությունները ներկայացնում են՝

- պայմանագրային գներում եղած արժեքի եւ Մաքսային միության մաքսային տարածքում գործող գներում եղած արժեքի հաշվարկները (լրացնելու համար առաջարկվող ձեւը կցվում է),

- գնի հիմնավորումը՝ հղում կատարելով հաստատված գնացուցակներին,

- փորձագիտական ճանապարհով որոշված այն գների՝ սահմանված կարգով հաստատված արձանագրությունները (գնացուցակները), որոնց հիման վրա իրականացվում են արժեքի հաշվարկները,

- համաշխարհային շուկայի գների մասին առկա տեղեկությունները, որոնցով հիմնավորվում է պայմանագրային գների ընդունված մակարդակը. նախկինում կիրառված պայմանագրային գները, արտադրող (ծեռք բերող) հիմնական օտարերկրյա ընկերությունների գնացուցակները (տեղեկատուները), հատուկ մամուլում հրապարակվող գների տեղեկատուներն ու գների ինդեքսները:

8. Արտաքին առևտրային պայմանագրում սահմանված՝ արտահանվող ապրանքների պայմանագրային արժեքը չի կարող պակաս լինել թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի՝ սույն Կարգին համապատասխան որոշված ընդհանուր արժեքից:



## Հավելված

Արտահանվող թանկարժեք մետաղների եւ  
թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը  
որոշելու կարգի

Արտահանվող ապրանքների մեջ պարունակվող թանկարժեք մետաղների եւ  
թանկարժեք քարերի ընդհանուր արժեքի հաշվարկման առաջարկվող ձևը

Արտադրատեսակների անվանումը եւ բնութագիրը	Քանակը, գանգվածը	Գինը, ԱՄՆ դոլար		Հիմնավորումը (գնացուցակի համարը եւ դիրքը՝ ըստ գնացուցակի) **	Պայմանագրային արժեքը ԱՄՆ դոլար (սյուն. 2x3)	Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ընդհանուր *** արժեքը, ԱՄՆ դոլար (սյուն. 2x4)
		Պայմանագրային	Գնացուցակային՝ թանկարժեք քարերի համար, համաշխարհային գին՝ թանկարժեք մետաղների համար			
1	2	3	4	5	6	7
Պայմանագրային արժեքը,	-	-	-		+	+
այդ թվում՝						

Ա արտադրա- տեսակ, հատ	+	+	-		+	+
այդ թվում՝						
ուսկի, գրամներ *	+	-	+		-	+
ադամանդ- ներ, կարատներ	+	-	+		-	+
զմրուխտներ, կարատներ	+	-	+		-	+
մարգարիտ, կարատներ	+	-	+		-	+

\* Թանկարժեք մետաղների մասով նշվում է զանգվածը՝ լիգատուրայով եւ մաքրությամբ:

\*\* Թանկարժեք մետաղների մասով նշվում է այն ամսաթիվը (սյուն. 5), որով սահմանված է համաշխարհային շուկայի գինը (սյուն. 4):

\*\*\* Արտադրատեսակների մեջ ընդհանուր արժեքը նշվում է որպես համապատասխան թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արժեքի հանրագումար:

## Հավելված 9

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼԻՍ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼԻՍ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

1. Սույն Կարգը մշակվել է՝ ի կատարումն «Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի (այսուհետ՝ Հիմնադրույթ), եւ դրանով սահմանվում են թանկարժեք մետաղները Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս եւ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս պետական վերահսկողություն իրականացնելու կանոնները:

2. Թանկարժեք մետաղները Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս եւ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս պետական վերահսկողությունն (այսուհետ՝ պետական վերահսկողություն) իրականացնում են Մաքսային միության անդամ պետությունների այն կազմակերպությունները, որոնք լիազորված են Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ լիազորված կազմակերպություններ):

3. Պետական վերահսկողությունն անցկացվում է՝ ստուգելու համար.

- պահանջների պահպանումը՝ Մաքսային միության մաքսային տարածքից թանկարժեք մետաղներն արտահանելու իրավունքն իրականացնելիս (բացառությամբ Մաքսային միության անդամ պետությունների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդերից եւ Մաքսային միության անդամ պետությունների սուբյեկտների թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդերից թանկարժեք մետաղները ելք անելու),

- թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող արտահանվող եւ ներմուծվող ապրանքների խմբաքանակի համապատասխանությունը ուղեկցող փաստաթղթերի, այդ թվում՝ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի տվյալներին,

- արտահանվող թանկարժեք մետաղների ծագման աղբյուրները,

- արտահանվող ապրանքների մեջ պարունակվող թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը որոշելու հիմնավորվածությունը՝ Հիմնադրույթի 8-րդ հավելվածով սահմանված կարգով,

- թանկարժեք մետաղների հետ գործարքներ կատարելիս Մաքսային միության անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանումը:

4. Թանկարժեք մետաղները եւ թանկարժեք քարերը Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս եւ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս պետական վերահսկողություն իրականացնելու համար, կախված Հիմնադրույթի 1-ին եւ 2-րդ հավելվածներում նշված թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի տեսակից, ինչպես նաեւ Հիմնադրույթի 3-րդ հավելվածում նշված թանկարժեք մետաղների ջարդոնից եւ թափոններից, լիազորված կազմակերպություններն ուսումնասիրում են հետեւյալ անհրաժեշտ փաստաթղթերը.

- դիմում-հայտը, որտեղ նշվում են կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ տվյալները, իրավաբանական հասցեն եւ պետական վերահսկողությունն իրականացնելու համար անհրաժեշտ կից ներկայացվող

փաստաթղթերի ցանկը,

- արտահանման լիցենզիան,

- պայմանագրի (համաձայնագրի) պատճենը՝ ռուսերենով, (ռուսերենով պայմանագիր (համաձայնագիր) չլինելու դեպքում պայմանագրի (համաձայնագրի) պատճենին պետք է կցվի ամրացված եւ հայտատուի կողմից վավերացված թարգմանությունը՝ նշելով պաշտոնն ու ամսաթիվը, հայտատուի ստորագրությունն ու կնիքը),

- Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող եւ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծվող՝ թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների մասնագիրը, որում նշվում է ամբողջական տեսականին՝ քանակական եւ արժեքային արտահայտությամբ,

- արտահանվող թանկարժեք մետաղների պայմանագրային արժեքի մակարդակի հիմնավորումը եւ դրանց համապատասխանությունը համաշխարհային գներին, ապրանքների մեջ պարունակվող արտահանվող թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի այն արժեքի հաշվարկը, որը պետական վերահսկողության նպատակով հաշվարկված է արտահանվող թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի ընդհանուր արժեքը որոշելու կարգին համապատասխան (<հիմնադրույթի 8-րդ հավելված>),

- թանկարժեք մետաղների ծագման աղբյուրը հաստատող փաստաթուղթը,

- փաստաթուղթը, որով հաստատվում է գործադիր իշխանության պետական հատուկ լիազոր մարմնի հրաժարումը՝ Մաքսային միության անդամ պետության թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի պետական ֆոնդը համալրելու համար թանկարժեք մետաղների գնումից, եւ Մաքսային միության անդամ պետության սուբյեկտների գործադիր իշխանության լիազոր մարմնի հրաժարումը՝ թանկարժեք մետաղների ձեռքբերման նախապատվության իրավունքից (ներկայացվում է արդյունահանող եւ արտադրող սուբյեկտների կողմից), եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսվում է այդպիսի նախապատվության իրավունք,

- արտահանվող ապրանքների համար նորմատիվատեխնիկական փաստաթղթերը (Մաքսային միության անդամ պետություններում սահմանված ԳՕՍՍ, ՕՍՍ, ՏՈՒ ստանդարտներ) (բացառությամբ ոսկերչական իրերի):

5. Թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքներ արտահանելիս պետական վերահսկողության արդյունքները ձեւակերպվում են Մաքսային միության անդամ պետության տարածքից արտահանվող, թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների արժեքի գնահատման եւ պետական վերահսկողության ակտով (սույն Կարգի 1-ին հավելված): Նշված ակտի «Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արժեքի գնահատման եւ պետական վերահսկողության արդյունքները» բաժնում լիազորված կազմակերպությունը պետք է արտացոլի.

- ներկայացված ապրանքի (արտադրատեսակների) համապատասխանությունը /անհամապատասխանությունը պայմանագրում եւ ուղեկցող փաստաթղթերում նշված տվյալներին (ապրանքի անվանումը, զանգվածը, քանակը, համապատասխանությունը՝ ստանդարտներին եւ այլն),

- թանկարժեք մետաղների/թանկարժեք քարերի արժեքի՝ Հիմնադրույթի 8-րդ հավելվածով սահմանված կարգին համապատասխան իրականացված գնահատումը,

- թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի հետ գործարքներ կատարելիս Մաքսային միության անդամ պետության օրենսդրության պահանջների խախտումների բացակայությունը/առկայությունը, ինչպես նաեւ պետական վերահսկողություն իրականացնելիս արձանագրված այլ դիտարկումներ:

Խախտումների բացակայության դեպքում լիազորված կազմակերպությունը նշված բաժնում պետք է կատարի «ներկայացված ապրանքի (արտադրատեսակների) հետ թույլատրվում է հետագայում իրականացնել մաքսային ձեւակերպում» գրառումը, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում կատարվում է «ներկայացված ապրանքի (արտադրատեսակների) հետ չի թույլատրվում հետագայում իրականացնել մաքսային ձեւակերպում» գրառումը:

6. Թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս պետական վերահսկողության արդյունքները ձեւակերպվում են Մաքսային միության անդամ պետության տարածք ներմուծվող, թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների պետական վերահսկողության ակտով (սույն Կարգի 2-ին հավելվածի համաձայն): Նշված ակտի «Պետական վերահսկողության արդյունքները» բաժնում լիազորված կազմակերպությունը պետք է արտացոլի ներկայացված ապրանքի (արտադրատեսակների) համապատասխանությունը/անհամապատասխանությունը պայմանագրում եւ ուղեկցող փաստաթղթերում նշված տվյալներին (ապրանքի անվանումը, զանգվածը եւ քանակը):

Իսխտումների բացակայության դեպքում լիազորված կազմակերպությունը նշված բաժնում պետք է կատարի «ներկայացված ապրանքի (արտադրատեսակների) հետ թույլատրվում է հետագայում իրականացնել մաքսային ձեւակերպում» գրառումը, իսկ խախտումներ հայտնաբերելու դեպքում կատարվում է «ներկայացված ապրանքի (արտադրատեսակների) հետ չի թույլատրվում հետագայում իրականացնել մաքսային ձեւակերպում» գրառումը:

7. Պետական վերահսկողություն իրականացնելու համար ստուգման ժամանակ լիազորված կազմակերպության կողմից ուսումնասիրվում է արտահանվող կամ ներմուծվող, թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների ամբողջ խմբաքանակը:

8. Պետական վերահսկողություն անցկացնելու դեպքում թանկարժեք մետաղներն արտահանելիս մաքսային հսկողության ներքո մաքսային ձեւակերպման գործընթացում պետական վերահսկողությունն անցկացվում է մասնագիտացված մաքսակետերում կամ մաքսային մարմինների մասնագիտացված բաժիններում: Պետական վերահսկողության ավարտին ապրանքները փաթեթավորվում եւ կապարակնքվում են (կնքվում են) հայտատուի ներկայացուցչի, վերահսկողի եւ մասնագիտացված մաքսակետի կամ մաքսային մարմնի մասնագիտացված բաժնի աշխատակցի կողմից:

Պետական վերահսկողություն անցկացնելու դեպքում թանկարժեք մետաղներն

արտահանելիս, նախքան դրանք մաքսային մարմինն ներկայացնելը, պետական վերահսկողությունն անցկացվում է այն ձեռնարկություններում եւ կազմակերպություններում, որտեղ սահմանված է մշտական պետական վերահսկողություն: Պետական վերահսկողության ավարտին ապրանքները փաթեթավորվում եւ կապարակնքվում են (կնքվում են) հայտատուի ներկայացուցչի եւ վերահսկողի կողմից:

9. Պետական վերահսկողություն իրականացնելիս հայտատուն պետք է ներկայացնի թանկարժեք մետաղների ամբողջ խմբաքանակը: Ընդ որում, պետական վերահսկողությունը պետք է անցկացվի հինգ օրը չգերազանցող ժամկետում՝ թանկարժեք մետաղների խմբաքանակը վերահսկողներին ներկայացնելու պահից:

10. Եթե մաքսային հսկողության գործընթացում անցկացվող պետական վերահսկողությունը չի կարող ավարտվել նախքան աշխատաժամանակի ավարտը, ապա թանկարժեք մետաղների խմբաքանակը փաթեթավորվում եւ կապարակնքվում է (կնքվում է) վերահսկողությունն իրականացնող անձի, հայտատուի ներկայացուցչի եւ մասնագիտացված մաքսակետի կամ մաքսային մարմնի մասնագիտացված բաժնի աշխատակցի կողմից:

11. Թանկարժեք մետաղներն արտահանելիս պետական վերահսկողության արդյունքները ձեւակերպվում են Մաքսային միության մաքսային տարածքից արտահանվող, թանկարժեք մետաղների արժեքի գնահատման եւ թանկարժեք մետաղներն արտահանելիս պետական վերահսկողության ակտով՝ սույն Կարգի 3-րդ հավելվածի համաձայն: Սույն կետում նշված ակտը կազմվում է երեք օրինակից. առաջին եւ երկրորդ օրինակները տրվում են հայտատուին: Առաջին օրինակը նախատեսվում է մաքսային մարմին ներկայացնելու համար: Երրորդ օրինակը մնում է պետական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունում: Ակտն ստորագրվում է լիազորված կազմակերպության ներկայացուցչի կողմից:

12. Պետական վերահսկողության արդյունքները հաստատող ակտը պարտադիր է մաքսային հսկողություն իրականացնելու համար:



13. Կազմակերպությունները, որտեղ անցկացվում է պետական վերահսկողությունը, պարտավոր են ապահովել դրա անցկացման համար անհրաժեշտ պայմաններ:

14. Պետական վերահսկողության գործընթացում Մաքսային միության անդամ պետության օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում համապատասխան նյութերն ուղարկվում են լիցենզավորող եւ իրավապահ մարմիններ:

15. Պետական վերահսկողների գործողությունները կարող են բողոքարկվել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

Թանկարժեք մետաղները Մաքսային միության  
մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային  
միության մաքսային տարածքից  
արտահանելիս պետական վերահսկողություն  
իրականացնելու կարգի

ԱԿՏ

Մաքսային միության անդամ պետության տարածքից արտահանվող՝  
թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների  
արժեքի գնահատման եւ պետական վերահսկողության

\_\_\_\_\_ համար \_\_\_\_\_  
(ամսաթիվը) (պետական վերահսկողությունն անցկացնելու վայրը)

«Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ  
պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք  
ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի  
մասին» հիմնադրույթին համապատասխան լիազորված կազմակերպության  
կողմից

\_\_\_\_\_  
(երկիր, կազմակերպության անվանում, պետական վերահսկողի պաշտոն,  
Ա.Ա.Հ.)

անցկացվել է պետական վերահսկողություն

\_\_\_\_\_ համար \_\_\_\_\_  
(պետական վերահսկողությունն անցկացնելու վայրը)

ապրանքի

---

(ապրանքի անվանումը)

հայտատուի կողմից ներկայացված

---

(կազմակերպության անվանում/անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ)

\_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_ պայմանագրով արտահանելու համար:

Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու հայտատուի իրավունքը հաստատող փաստաթուղթ.

\_\_\_\_\_ -ի \_\_\_\_\_ համար \_\_\_\_\_

(փաստաթղթի անվանումը)

տրված է

---

(մարմնի անվանումը)

Պայմանագրին եւ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան՝ ապրանքի քաշը կազմում է \_\_\_\_\_ գրամ:

(զտաքաշը)

Թանկարժեք մետաղների անվանումն ու քաշը (ոսկերչական եւ կենցաղային նշանակության մյուս արտադրատեսակների համար նշվում է միայն հիմնական մաքուր մետաղի քաշը՝ ըստ հարգի).

մաքուր ոսկու քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր արծաթի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր պլատինի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր պալադիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր իրիդիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր ռոդիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր ռուտենիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր օսմիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ:

Ոսկերչական իրերում ներդիրների քաշը՝ թանկարժեք մետաղների բնակտորների տեսքով.

ոսկյա՝ \_\_\_\_\_ գրամ, արծաթյա՝ \_\_\_\_\_ գրամ, պլատինե՝ \_\_\_\_\_ գրամ:

Թանկարժեք քարերի անվանումը եւ քաշը (ոսկերչական իրերի եւ կենցաղային նշանակության մյուս արտադրատեսակների համար).

ալմաստներ՝ մշակված (ադամանդներ)՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

զմրուխտներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

սուտակներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

շափյուղաներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

ալեքսանդրիտներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

բնական մարգարիտ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով:

Ապրանքի քանակը՝ \_\_\_\_\_ հատ:

Ապրանքի պայմանագրային արժեքը՝ \_\_\_\_\_:

(արժույթով՝ ըստ պայմանագրի)

Թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների արժեքի գնահատման եւ պետական վերահսկողության արդյունքները.

\_\_\_\_\_

---

---

---

Պետական վերահսկողությունն անցկացվել է հայտատուի ներկայացուցչի ներկայությամբ

---

(պաշտոն, Ա.Ա.Հ, լիազորագրի համար)

Ապրանքը կապարակնքված է կնիքներով՝

պետական վերահսկողի \_\_\_\_\_ համարի,

հայտատուի \_\_\_\_\_ համարի:

Պետական վերահսկող՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը հաստատում եմ, պետական վերահսկողության անցկացման նկատմամբ պահանջներ չունեմ, ապրանքն ստացվել է ամբողջ ծավալով:

Հայտատուի ներկայացուցիչ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Հավելված 2

Թանկարժեք մետաղները Մաքսային միության  
մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային  
միության մաքսային տարածքից  
արտահանելիս պետական վերահսկողություն  
իրականացնելու կարգի

ԱԿՏ

Մաքսային միության անդամ պետության տարածք ներմուծվող՝ թանկարժեք  
մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ապրանքների պետական  
վերահսկողության

\_\_\_\_\_ համար \_\_\_\_\_  
(ամսաթիվը) (պետական վերահսկողությունն անցկացնելու վայրը)

«Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ  
պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք  
ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի  
մասին» հիմնադրույթին համապատասխան լիազորված կազմակերպության կողմից

\_\_\_\_\_ (երկիր, կազմակերպության անվանում, պետական վերահսկողի պաշտոն, Ա.Ա.Հ.)

անցկացվել է պետական վերահսկողություն

\_\_\_\_\_ (պետական վերահսկողություն անցկացնելու վայրը)

ապրանքի

---

(ապրանքի անվանումը)

հայտատուի կողմից ներկայացված

---

(կազմակերպության անվանում/անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.Հ)

\_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_ պայմանագրով ներմուծելու համար:

Թանկարժեք մետաղներով եւ թանկարժեք քարերով գործառնություններ  
իրականացնելու հայտատուի իրավունքը հաստատող փաստաթուղթ.

\_\_\_\_\_ -ի \_\_\_\_\_ համար \_\_\_\_\_

(փաստաթղթի անվանումը)

տրված է

\_\_\_\_\_ :

(մարմնի անվանումը)

Պայմանագրին եւ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան՝

ապրանքի քաշը կազմում է \_\_\_\_\_

գրամ:

(զտաքաշը)

Թանկարժեք մետաղների անվանումն ու քաշը (ոսկերչական իրերի եւ

կենցաղային նշանակության մյուս արտադրատեսակների համար նշվում է միայն հիմնական մաքուր մետաղի քաշը).

մաքուր ոսկու քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր արծաթի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր պլատինի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր պալադիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր իրիդիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր ռոդիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր ռուտենիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

մաքուր օսմիումի քաշը՝ \_\_\_\_\_ գրամ:

Թանկարժեք քարերի անվանումը եւ քաշը (ոսկերչական իրերի եւ կենցաղային նշանակության մյուս արտադրատեսակների համար).

ալմաստներ՝ մշակված (ադամանդներ)՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

զմրուխտներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

սուտակներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

շափյուղաներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

ալեքսանդրիտներ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով,

բնական մարգարիտ՝ \_\_\_\_\_ կարատ քաշով:

Ապրանքի քանակը՝ \_\_\_\_\_ հատ:

Թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր պարունակող ներմուծվող ապրանքների պետական վերահսկողության արդյունքները.



---

---

---

---

---

Պետական վերահսկողությունն անցկացվել է հայտատուի ներկայացուցչի

---

---

(պաշտոն, Ա.Ա.Հ, լիազորագրի համար)

Եւ մաքսային մարմնի ներկայացուցչի ներկայությամբ

---

---

(պաշտոն, Ա.Ա.Հ)

Ապրանքը կապարակնքված է կնիքներով՝

պետական վերահսկողի \_\_\_\_\_ համարի,

հայտատուի \_\_\_\_\_ համարի:

Մաքսային մարմնի ներկայացուցիչ թիվ

\_\_\_\_\_ / \_\_\_\_\_ /

(ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

Պետական վերահսկող՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը հաստատում եմ,  
պետական վերահսկողության անցկացման նկատմամբ պահանջներ չունենմ,  
ապրանքն ստացվել է ամբողջ ծավալով:

Հայտատուի ներկայացուցիչ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Հավելված 3

Թանկարժեք մետաղները Մաքսային միության  
մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային  
միության մաքսային տարածքից  
արտահանելիս պետական վերահսկողություն  
իրականացնելու կարգի

ԱԿՏ

Մաքսային միությունից արտահանվող թանկարժեք մետաղների արժեքի  
գնահատման եւ պետական վերահսկողության

\_\_\_\_\_ համար \_\_\_\_\_  
(ամսաթիվը) (պետական վերահսկողությունն անցկացնելու վայրը)

«Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ  
պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք  
ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի  
մասին» հիմնադրույթին համապատասխան (նշվում է Մաքսային միության անդամ  
պետությունը) լիազորված կազմակերպության կողմից

\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
(կազմակերպության անվանում, պաշտոն, Ա.Ա.Հ.)

անցկացվել է պետական վերահսկողություն \_\_\_\_\_  
(պետական վերահսկողություն անցկացնելու վայրը)

ապրանքի  
\_\_\_\_\_

---

(ապրանքի անվանումը)

հայտատուի կողմից ներկայացված \_\_\_\_\_

\_\_\_\_\_ ,

(կազմակերպության անվանում/անհատ ձեռնարկատիրոջ Ա.Ա.<)

\_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_ պայմանագրով արտահանելու համար:

Մաքսային միության անդամ պետության \_\_\_\_\_-ի լիցենզիա համար

\_\_\_\_\_

Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի հետ գործառնություններ

իրականացնելու հայտատուի իրավունքը հաստատող փաստաթուղթ

\_\_\_\_\_ -ի \_\_\_\_\_ համար \_\_\_\_\_

(փաստաթղթի անվանումը)

Պայմանագրին եւ ուղեկցող փաստաթղթերին համապատասխան՝ ապրանքի քաշը կազմում է \_\_\_\_\_,

թանկարժեք մետաղների մաքուր քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

(համաքաշ, զտաքաշ)

ապրանքի քանակը՝ \_\_\_\_\_ հատ,

թանկարժեք մետաղների բնակտորների ընդհանուր քաշը՝ \_\_\_\_\_ գրամ,

արտաքին առևտրային պայմանագրում սահմանված պայմանագրային արժեքը

\_\_\_\_\_ :

(ԱՄՆ դոլարով)

Թանկարժեք մետաղների գնահատման եւ պետական վերահսկողության անցկացման արդյունքները

---

---

---

---

---

---

Արտահանվող թանկարժեք մետաղների պետական վերահսկողությունն  
անցկացվել է հայտատուի ներկայացուցչի ներկայությամբ

---

---

(պաշտոն, Ա.Ա.Հ, լիազորագրի համար)

Ապրանքը կապարակնքված է կնիքներով՝

Լիազորված կազմակերպության \_\_\_\_\_ համարի ,

հայտատուի \_\_\_\_\_ համարի;

Լիազորված կազմակերպության ներկայացուցիչ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը հաստատում եմ, պետական  
վերահսկողության անցկացման նկատմամբ պահանջներ չունեմ, ապրանքն  
ստացվել է ամբողջ ծավալով:

Հայտատուի ներկայացուցիչ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

Հավելված 10

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՎԱԾՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՑԱՆԿ, ՈՐՈՒՔ «ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՁԵՎԱԿԵՐՊԵԼԻՍ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրանքի կրճատ անվանումը	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Ծանոթագրություն
Թանկարժեք մետաղներ կամ թանկարժեք մետաղներից պատվածք ունեցող մետաղներ ***	7106 7107 00 000 0 7108 7109 00 000 0 7110 7111 00 000 0	Եթե վերամշակումից հետո ստացվելիք արդյունքներ են հանդիսանում ոսկերչական իրերը, վարպետների պատրաստած ոսկյա եւ արծաթյա իրերը, այլ արտադրատեսակներ եւ դրանց մասերը  (ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրերը՝  7113, 7114,

		<p>9003 19 000 1,  9021 29 000 0*,  9101 **, 9102 **,  9103 **, 9105 **,  9111 **, 9112 **,  9113 10 100 0,  9608 10 920 0,  9608 10 990 0,  9608 30 000 0)</p> <p>թանկարժեք մետաղներից կամ  թանկարժեք մետաղներից  պատվածք ունեցող  մետաղներից</p>
--	--	--

\* Միայն թանկարժեք մետաղներից կամ գլանված թանկարժեք մետաղներից:

\*\* Միայն թանկարժեք քարերով ներդիրներ ունեցող կամ թանկարժեք քարերով ներդիրներ չունեցող թանկարժեք մետաղներից:

\*\*\* Թույլատրվում է արտահանումը Մաքսային միության անդամ պետությունների հայտերի հիման վրա Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ամեն տարի սահմանվող ծավալներով:

## Հավելված 11

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼԻՍ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼԻՍ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀՈՒՄՔԱՅԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵԼՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Վերամշակման համար Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների որոշման կարգը (այսուհետ՝ Կարգ) մշակվել է «Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան (այսուհետ՝ Հիմնադրույթ):

2. Կարգը կիրառվում է կազմակերպությունների եւ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հայտատու) կողմից՝ թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակումից



հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու համար, դրանք «մաքսային տարածքում վերամշակում», «ներքին սպառման համար վերամշակում», «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձեակերպելիս:

Նշված մաքսային ընթացակարգերի հայտատուները պարտավոր են օգտագործել թանկարժեք մետաղները եւ (կամ) թանկարժեք քարերը իրենց արտադրական գործունեության մեջ:

«Արտադրական գործունեություն» ասելով պետք է հասկանալ աշխատողների գործողությունների ամբողջությունը՝ ռեսուրսները պատրաստի արտադրանք դարձնելու համար անհրաժեշտ աշխատանքի միջոցների կիրառմամբ, որոնք ներառում են թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի արտադրությունն ու վերամշակումը:

3. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշվում են հետեւյալ կարգով:

3.1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու համար ելակետային նյութեր են՝

ա) Մաքսային միության անդամ պետություններում սահմանված նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, հայտատուի եւ (կամ) վերամշակողի տեխնոլոգիական ծառայությունների հաշվարկները, տեխնոլոգիական գործընթացը կանոնակարգող այլ փաստաթղթեր.

բ) արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը:

Արտադրանքի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը ներկայացվում է արտադրատեսակի (արտադրատեսակների խմբի) պատրաստման տեխնոլոգիական քարտի (սխեմայի) տեսքով՝ Կարգի 1-ին հավելվածի համաձայն, եւ իրենից ներկայացնում է դրա արտադրության քայլ առ քայլ նկարագիրը՝ յուրաքանչյուր գործողության համար գոյացող անվերադարձելի կորուստների նշումով (տոկոսներով եւ գրամներով՝ դրա պատրաստման համար օգտագործված թանկարժեք մետաղների եւ (կամ) թանկարժեք քարերի (այսուհետ՝ արժեքներ) քաշի

նկատմամբ):

Արժեքների վերամշակման արդյունքում գոյացող թափոնները, որոնք արտադրության ժամանակ կարող են հավաքվել եւ օգտագործվել (նախնական մշակմամբ կամ առանց դրա) ապրանքային արտադրանքի հետագա արտադրության մեջ, չեն դասվում անվերադարձելի կորուստների շարքին:

Տեխնոլոգիական քարտը կազմվում է արտադրատեսակների յուրաքանչյուր խմբի համար (մատանիներ, շղթաներ, ապարանջաններ, կատալիտիկ ցանցեր, զտարկված մետաղներ եւ այլն)՝ վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների այն մասնագրի համաձայն, որն արժեքների վերամշակման պայմանագրի անբաժանելի մասն է:

Արտադրատեսակները միավորվում են խմբերի մեջ՝ ըստ համաձուլվածքների մակնիշների (հարգի) եւ հետեւյալ հատկանիշների. պատկանելությունը՝ մեկ տեսակին (մատանիներ, ականջօղեր եւ այլն), արտադրատեսակի կառուցվածքին նմանությունը, պատրաստման տեխնոլոգիայի միասնականությունը, քաշի աննշան տարբերությունը.

գ) վերամշակողի արտադրական բազայի տեխնիկական բնութագիրը:

3.2. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորման որոշվում է որպես վերամշակումից հետո ստացվելիք այն արդյունքների քանակ, որոնք ստացվում են՝ ելնելով արժեքների քանակի մեկ միավորի վերամշակման փաստացի պայմաններից՝ բացարձակ կամ հարաբերական (տոկոսներով) արժեքով արտահայտված:

Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորման օգտագործելիս վերամշակելու ժամանակ ձեւավորվող վերամշակումից հետո ստացվելիք յուրաքանչյուր արդյունքի քանակը հաշվարկվում է՝ արժեքների քանակը վերամշակումից հետո ստացվելիք տվյալ արդյունքի ելքի նորմայով բազմապատկելու միջոցով:

3.3. Արժեքների կորուստների քանակը որոշվում է՝ ելնելով տեխնոլոգիական գործընթացի առանձնահատկություններից եւ արտադրական հզորությունների

ընութագրերից:

Արժեքների կորուստների նորմաները, ըստ արտադրատեսակների կոնկրետ խմբի, սահմանվում են որպես տվյալ խմբի արտադրատեսակները պատրաստելիս արժեքների՝ առանձին փուլերի ընթացքում առաջացող կորուստների հանրագումար:

Վերամշակելիս արժեքների կորուստների ընդհանուր նորմաները որոշվում են գրամներով՝ որպես կորուստների հանրագումար՝ ըստ արտադրատեսակների յուրաքանչյուր խմբի, տոկոսներով՝ որպես կորուստների հանրագումարի հարաբերակցությունը, ըստ արտադրատեսակների յուրաքանչյուր խմբի, դրանց պատրաստման համար օգտագործված արժեքների զանգվածին:

3.4. Արժեքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելիս կարող են հաշվի առնվել վերամշակումից հետո ստացվելիք թափոնները եւ արժեքների մնացորդները՝ պայմանագրի պայմաններին համապատասխան:

4. Թանկարժեք քարերը վերամշակման համար ներմուծելու (արտահանելու) դեպքում հայտատուի (վերամշակողի) արտադրության վիճակագրական տվյալների հիման վրա հայտատուն լրացուցիչ կազմում է երեսակված թանկարժեք քարերի պատրաստման կանխատեսում՝ ըստ քաշային խմբերի՝ կախված թանկարժեք քարերի երեսակման տեխնիկական պայմաններից (ստանդարտներից) եւ երեսակման ձեւից:

Թանկարժեք քարերի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորման որոշվում է որպես երեսակված թանկարժեք քարերի քաշի տոկոսներով արտահայտված հարաբերակցությունը չմշակված թանկարժեք քարերի քաշին:

Թանկարժեք քարերի վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորման՝ քաշի միավորներով (գրամներ, կարատներ) արտահայտված, որոշվում է որպես չմշակված թանկարժեք քարերի քաշի եւ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմայի տոկոսի արտադրյալ՝ հինգ տոկոսը չգերազանցող չափով նվազեցված (ավելացված)՝ (կախված մշակված թանկարժեք քարերի տեսականուց):

Թանկարժեք քարերի թափոնների քանակը որոշվում է որպես վերամշակման համար արտահանվող (ներմուծվող) թանկարժեք քարերի քաշի եւ թափոնների քանակի այն վիճակագրական գործակցի արտադրյալ, որը սահմանվում է վերամշակման համար արտահանվող (ներմուծվող) թանկարժեք քարերի հետ նույնանման բնութագիր ունեցող թանկարժեք քարերի համար:

5. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները նշվում են վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկում՝ Կարգի 2-րդ հավելվածի համաձայն:

6. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու, հայտատուի կողմից իր արտադրական գործունեության մեջ թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր օգտագործելու փաստն արձանագրելու դեպքում Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնում ուսումնասիրվում են հետեւյալ փաստաթղթերը.

ա) մաքսային ընթացակարգի հայտատուի՝ թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի հետ գործառնություններ իրականացնելու իրավունքը հաստատող փաստաթղթերը,

բ) արժեքների վերամշակման պայմանագրի պատճենը,

գ) ոսկերչական իրերի պատրաստման դեպքում՝ արտադրատեսակների անվանացանկի գրանցման մասին Մաքսային միության անդամ պետության լիազոր մարմնի գրության պատճենը,

դ) հայտատուի մոտ սեփականության իրավունքով կամ օրինական այլ հիմքով արտադրական տարածքների առկայությունը հաստատող փաստաթղթերի պատճենները,

ե) հայտատուի արտադրական բազայի առկայության եւ սեփական արտադրությունում արտադրանքի պատրաստման ծավալի մասին տեղեկությունները՝ Կարգի 3-րդ հավելվածի համաձայն,

զ) վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող)

արդյունքների ցանկերի եւ վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) արժեքների ցանկերի բնօրինակները՝ երեք օրինակից՝ Կարգի 2-րդ եւ 4-րդ հավելվածների համաձայն:

7. Հայտատուն կրում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունը՝ ներկայացված տվյալների եւ փաստաթղթերի ոչ հավաստի լինելու համար:

8. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ հայտատուի հասցեին են ուղարկվում վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկը եւ վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) արժեքների ցանկը՝ Կարգի 2-րդ եւ 4-րդ հավելվածների համաձայն, եւ գրություն, որով հաստատվում է, որ հայտատուն իր արտադրական գործունեության մեջ օգտագործում է թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր՝ ստորագրված Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հավելված 1

Վերամշակման համար Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների որոշման կարգի

Արտադրատեսակի (արտադրատեսակների խմբի) պատրաստման տեխնոլոգիական քարտ (սխեմա)

Արժեքների անվանում \_\_\_\_\_

Վերամշակման համար արժեքների քաշ \_\_\_\_\_

Համարը՝ ը/կ	Արտադրատեսակի (արտադրատեսակների խմբի) պատրաստման քայլ առ քայլ նկարագիր	Կորուստներ	
		%	գրամներ, կարատներ
1	2	3	4
Ա. Ձուլման աշխատանքներ			
1	մոդելային բլոկի պատրաստում		
2	մոդելային բլոկների յուղազերծում սպիրտի մեջ		
3	ձուլման կաղապարների պատրաստում		
4	մոդելային բլոկների յուղազերծում օճառային		

	լուծույթի մեջ		
5	մոդելային կառուցվածքի տաքացում		
6	կադապարների նախապատրաստում լցոնման համար		
7	բովախառնուրդի նախապատրաստում		
8	կադապարների լցոնում		
9	ծուլվածքների տեղահանում եւ մաքրում		
		Ընդամենը.	
<b>Բ. Դրոշմման աշխատանքներ</b>			
1	պրոֆիլի հալում		
2	գլանում		
3	դետալների դրոշմում (կտրում, արտահատում, ծակատում, ծակում, հատվածքի մակերեսային մաքրամշակում, ճկում, արտածգում, շրջասեղմում, կողածռում եւ այլն)		
		Ընդամենը.	

<b>Գ. Մոնտաժման աշխատանքներ</b>			
1	նախապատրաստական աշխատանքներ (մետաղալարի, թերթավոր նյութի կտրում)		
2	ծուլանցքամնացորդի հեռացում		
3	ճկում		

4	տաշում		
5	սղոցում		
6	կետային եռակցում		
7	հարմարակցում		
8	արտադրատեսակների դասավորում՝ ասբեստի թիթեղի վրա		
9	հալանյութով պատում		
10	զոդում		
11	շիկամշակում		
		Ընդամենը.	
Դ. Ոսկերչական իրի ողորկում			
		Ընդամենը.	
Ե. Ոսկերչական ներդիրների եւ քարերի ամրացում			
		Ընդամենը.	
Զ. Արտադրատեսակների պաշտպանական-դեկորատիվ պատում՝ գավլանական մեթոդի կիրառմամբ			
		Ընդամենը.	
Է. Պոլիմերային արձնապատում			
		Ընդամենը.	
		Ընդհանուրը՝ ըստ խմբի.	

Տվյալ տեխնոլոգիական քարտը (սխեման) օրինակելի է եւ կարող է պարունակել ցանկացած այլ բաժիններ եւ ենթաբաժիններ՝ արտադրանքի



պատրաստման տեխնոլոգիական գործընթացին համապատասխան:



													3

Հայտատուի (լիազորված հայտատուի) պաշտոնի անվանումը

Մաքսային միության անդամ  
պետության լիազոր անձի պաշտոնի  
անվանումը

\_\_\_\_\_

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

\_\_\_\_\_

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ :

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.

Վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկը լրացնելու կանոնները՝

1) 2-րդ սյունակում նշվում է հայտատուի անվանումը:

2) 3-րդ սյունակում նշվում են վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների անվանումները:

3) 4-րդ սյունակում նշվում են այն պայմանագրի վավերապայմանները, որին համապատասխան ներմուծվում

(արտահանվում) են վերամշակումից հետո ստացվելիք արդյունքները:

4) 5-րդ սյունակում նշվում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների տասանիշ ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի:

5) 7-րդ սյունակում նշվում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների քանակը՝ չափման միավորներով՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի ապրանքային դիրքի համաձայն (սյունակ 6):

6) 8-րդ սյունակում նշվում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների արժեքը՝ ուրբով:

7) 9–12-րդ սյունակներում նշվում է ապրանքային արտադրանքի, թափոնների, կորուստների եւ մնացորդների քանակը՝ չափման մեկ միավորով:

8) 13-րդ սյունակում նշվում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների եւ մնացորդների մաքսային ձեւակերպումն իրականացնող մաքսային մարմինը:

Հավելված 3

Վերամշակման համար Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների որոշման կարգի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

\_\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ կիսամյակի համար հայտատուի արտադրական բազայի առկայության եւ սեփական արտադրությունում արտադրանքի պատրաստման ծավալի մասին

Հայտատուի անվանումը

Արտադրական բազայի առկայությունը			Սեփական արտադրության արտադրանքը		
Արտադրական հրապարակները, քառ.մ	Տեխնոլոգիական սարքավորումների ցանկը (հաստոցների քանակը եւ տիպը)	Հիմնական արտադրությունում աշխատողների թիվը, մարդ	Արտադրանքի անվանացանկը	Արտադրված է սեփական արտադրությունում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, կգ *	Դրոշմված է (միայն սեփական արտադրության արտադրանքը), հատ

-----

\* Եթե հայտատուն արտադրական գործունեություն է իրականացնում կես տարուց կարճ ժամանակահատվածով, ապա նշվում է արտադրված արտադրանքի քանակը՝ փաստացի աշխատած ժամանակի ընթացքում:

Հայտատուի (լիազորված հայտատուի) պաշտոնի անվանումը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.

Հավելված 4

Վերամշակման համար Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելիս եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելիս թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների որոշման կարգի

ՑԱՆԿ

վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) արժեքների

Համարը՝ ը/կ	Հայտատու	Արժեքների անվանումը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի	Պայմանագիրը	Արժեքների ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի	Չափման միավորը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի	Արժեքների քանակը	Արժեքը, ռուբ.	Մաքսատունը
1	2	3	4	5	6	7	8	9

Հայտատուի պաշտոնի անվանումը

Մաքսային միության անդամ  
պետության լիազոր անձի պաշտոնի  
անվանումը

\_\_\_\_\_  
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

\_\_\_\_\_  
(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_:

Կ.Տ.

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

Կ.Տ.

Վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) արժեքների ցանկը  
լրացնելու կանոնները՝

1) 1-8-րդ սյունակները լրացվում են վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկի համապատասխան սյունակներին նույնանման ձեռով (հավելված 2):

2) 9-րդ սյունակում նշվում է այն մաքսային մարմինը, որում իրականացվում է վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) արժեքների մաքսային ձեակերպումը:



## Հավելված 12

Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին հիմնադրույթի

### ԲՆԱԿԱՆ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԱԴԱՄԱՆԴՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵԼՔԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Կարգը մշակվել է՝ ի կատարումն «Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի (այսուհետ՝ Հիմնադրույթ), եւ դրանով սահմանվում է բնական ալմաստների եւ ադամանդների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները մաքսային նպատակներով որոշելու կարգը:

2. Կարգը տարածվում է բացառապես ադամանդներ արտադրող սուբյեկտների՝ ադամանդներ պատրաստելու նպատակով բնական ալմաստների երեսակում իրականացնելու իրավունք ունեցող իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ հայտատու) վրա՝ Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի ռեզիդենտներն են տվյալ իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը:

3. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու համար «Մաքսային միության մաքսային տարածքում ապրանքների վերամշակում»,

«ներքին սպառման համար ապրանքների վերամշակում» եւ «Մաքսային միության մաքսային տարածքից դուրս ապրանքների վերամշակում» մաքսային ընթացակարգի հայտատուն՝

բնական ալմաստների վերամշակման պայմանագրով սահմանված կողմի հետ համաձայնեցնում է ադամանդների պատրաստման արտադրական գործընթացի տեխնոլոգիական սխեման եւ ադամանդների պատրաստման տեխնիկական պայմանները (ստանդարտները),

կազմում է բնական ալմաստների վերամշակման գործընթացում պատրաստվող ադամանդների պատրաստման (ըստ չափաքաշային խմբերի) կանխատեսումը՝ պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող մասնագրում նշված տեսականուն համապատասխան,

հաշվարկում է վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները:

4. Ամբողջական անվանացանկին համապատասխան տեսակավորված բնական ալմաստների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների հաշվարկը կատարվում է՝ ըստ բնական ալմաստների յուրաքանչյուր դիրքի, որը բնութագրվում է դասակարգման հատկանիշների որոշակի համադրությամբ:

Խոշորացված անվանացանկին համապատասխան տեսակավորված բնական ալմաստների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների հաշվարկը կատարվում է՝ ըստ բնական ալմաստների յուրաքանչյուր խոշորացված դիրքի, որը բնութագրվում է որոշակի խմբային հատկանիշներով:

5. Բնական ալմաստների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների՝ ադամանդների ելքի նորմաները որոշվում են հետեւյալ կարգով՝

5.1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու համար բազային տվյալներ են՝

հաշվարկների ժամանակ օգտագործվող նորմատիվային փաստաթղթերը,

ադամանդների պատրաստման տեխնոլոգիական գործընթացի նկարագիրը,  
օգտագործվող արտադրական հզորությունների ցանկը,

բնական ալմաստների մշակման վիճակագրական տվյալները, որոնք, ըստ բնութագրի եւ չափաքաշային խմբի, նույնանման են վերամշակման համար արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստներին:

5.2. Բնական ալմաստների վերամշակման գործընթացում ստացվող ադամանդների (ըստ չափաքաշային խմբերի) պատրաստման կանխատեսման հաշվարկը ներառում է՝

5.2.1. Հայտատուի վիճակագրական տվյալների հիման վրա ադամանդների ելքի նորմայի տոկոսի նվազագույն, առավելագույն եւ միջին արժեքների սահմանումը՝ ըստ յուրաքանչյուր մեկ կարատում եղած քարերի քանակի:

Ադամանդների ելքի նորմայի տոկոսի արժեքը որոշվում է որպես ադամանդների քաշի (ըստ յուրաքանչյուր մեկ կարատում եղած քարերի քանակի) եւ դրան համապատասխանող բնական ալմաստների քաշի հարաբերակցություն:

5.2.2. Սույն կետի 5.2.1 ենթակետին համապատասխան սահմանված վիճակագրական տվյալների հիման վրա՝ ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի բաշխված ադամանդների քաշի (կարատներով) նվազագույն, առավելագույն եւ միջին արժեքների որոշումը (ըստ ամբողջական կամ խոշորացված անվանացանկին համապատասխան տեսակավորված բնական ալմաստների յուրաքանչյուր բնութագրի եւ դրան համապատասխանող չափաքաշային խմբի):

5.2.3. Ադամանդների քաշի ընդհանուր միջին արժեքի որոշումը (ըստ ամբողջական կամ խոշորացված անվանացանկին համապատասխան տեսակավորված բնական ալմաստների յուրաքանչյուր բնութագրի եւ դրան համապատասխանող չափաքաշային խմբի):

Ադամանդների քաշի ընդհանուր միջին արժեքը հավասար է ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի բաշխված ադամանդների քաշի բոլոր արժեքների հանրագումարին:

5.2.4. Ադամանդների ելքի նորմայի տոկոսի ընդհանուր միջին արժեքի որոշումը (ըստ ամբողջական կամ խոշորացված անվանացանկին համապատասխան տեսակավորված բնական ալմաստների յուրաքանչյուր բնութագրի եւ դրան համապատասխանող չափաքաշային խմբի):

Ադամանդների ելքի նորմայի տոկոսի ընդհանուր միջին արժեքը հավասար է ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի բաշխված ադամանդների ելքի նորմայի տոկոսների բոլոր արժեքների հանրագումարին:

5.2.5. Ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի բաշխված ադամանդների նվազագույն, առավելագույն եւ միջին քաշի որոշումը՝ ըստ վերամշակման համար արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստների ամբողջ զանգվածի:

Ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի բաշխված ադամանդների նվազագույն, առավելագույն եւ միջին քաշը հավասար է ադամանդների քաշի բոլոր համապատասխան արժեքների հանրագումարին՝ հաշվարկված ըստ արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստների ամբողջ զանգվածի:

5.2.6. Ադամանդների պատրաստման կանխատեսման արդյունքում ստացված ադամանդների քաշի ընդհանուր միջին արժեքի որոշումը:

Ադամանդների քաշի ընդհանուր միջին արժեքը հավասար է ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի բաշխված ադամանդների բոլոր քաշերի հանրագումարին:

5.3. Բնական ալմաստների վերամշակման գործընթացում ստացվող՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների (ադամանդների) ելքի նորմայի հաշվարկը ներառում է՝

5.3.1. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների տոկոսի միջին արժեքի որոշումը:

Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների տոկոսի միջին արժեքը հաշվարկվում է որպես ադամանդների պատրաստման կանխատեսման արդյունքում ստացված ադամանդների ընդհանուր քաշի

հարաբերակցության տոկոս՝ վերամշակման պայմանագրով հայտագրված համապատասխան բնական ավաստների քաշին:

5.3.2. Ադամանդների քաշի ելքի նորմայի տոկոսի նվազագույն եւ առավելագույն արժեքների որոշումը:

Ադամանդների քաշի ելքի նորմայի տոկոսի նվազագույն (առավելագույն) արժեքը հաշվարկվում է որպես հինգ տոկոսը չգերազանցող չափով նվազեցված (ավելացված)՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների տոկոսի միջին արժեք՝ ըստ ձեւի, թերությունների եւ գույնի՝ հարակից դիրքերի բնական ավաստների պարունակության թույլտվությանը, ինչպես նաեւ ադամանդների երեսակման ձեւին եւ պարամետրերին համապատասխան:

5.3.3. Ադամանդների ելքի նվազագույն քաշի (կարատներով) որոշումը:

Ադամանդների ելքի նվազագույն քաշը (կարատներով) հավասար է «վերամշակում» մաքսային ռեժիմով արտահանվող (ներմուծվող) բնական ավաստների քաշի եւ հաշվարկային եղանակով ստացված ելքի նորմայի տոկոսի նվազագույն արժեքի արտադրյալին:

5.3.4. Ադամանդների ելքի առավելագույն քաշի (կարատներով) որոշումը:

Ադամանդների ելքի առավելագույն քաշը (կարատներով) հավասար է «վերամշակում» մաքսային ընթացակարգով արտահանվող (ներմուծվող) բնական ավաստների քաշի եւ հաշվարկային եղանակով ստացված ելքի նորմայի տոկոսի առավելագույն արժեքի արտադրյալին:

5.4. Բնական ավաստների վերամշակման արդյունքում ստացված ադամանդներից գոյացող թափոնների քանակի հաշվարկը ներառում է՝

5.4.1. Թափոնների քանակի (նվազագույն եւ առավելագույն) վիճակագրական գործակցի որոշումը (տոկոսներով):

Թափոնների քանակի նվազագույն (առավելագույն) վիճակագրական գործակիցը որոշվում է հայտատուի արտադրության վիճակագրական տվյալների հիման վրա՝ որպես թափոնների առավելագույն (նվազագույն) քաշի եւ մշակված

բնական ալմաստների քաշի հարաբերակցություն՝ արտահայտված տոկոսներով:

5.4.2. Բնական ալմաստների թափոնների քանակի (կարատներով) որոշումը:

Բնական ալմաստների թափոնների քանակը որոշվում է որպես վերամշակման համար արտահանվող (ներմուծվող) բնական ալմաստների քաշի եւ մնացորդների քանակի վիճակագրական գործակցի արտադրյալ:

6. Ադամանդների քաշի (կարատներով) առավելագույն եւ նվազագույն արժեքների մեծությունը եւ թափոնների քանակը (կարատներով) նշվում են բնական ալմաստների վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկում՝ Կարգի 1-ին հավելվածի համաձայն:

7. Բնական ալմաստների եւ ադամանդների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելիս Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված պետական իշխանության գործադիր մարմինը, որի ռեզիդենտն է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին), ուսումնասիրում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա) լիազոր մարմին ներկայացված գրությունը՝ հայտագրվող մաքսային ընթացակարգի տեսակի, անվանման, իրավաբանական անձի կազմակերպարավական ձեւի եւ գտնվելու վայրի կամ անհատ ձեռնարկատիրոջ մշտական բնակության կամ առավելապես գտնվելու վայրի հասցեի, բանկում հաշվարկային հաշվի վավերապայմանների, կոնտակտային հեռախոսների նշումով.

բ) հայտատուի՝ որպես իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի պատճենը՝ կազմակերպությունների համար,

Ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենը՝ անհատ ձեռնարկատիրոջ համար.

գ) հարգորոշման վերահսկողության պետական տեսչությունում հատուկ հաշվառման կանգնելու վկայականի պատճենը՝ հատուկ հաշվառման կանգնելու քարտով.

դ) հայտատուի լիազոր մարմնի արձանագրության (որոշման),

կազմակերպության ղեկավարի նշանակման մասին հրամանի եւ գլխավոր հաշվապահի նշանակման մասին հրամանի պատճենները.

ե) բնական ալմաստների վերամշակման պայմանագրի պատճենը՝ դրան կից ներկայացված մասնագրով (երկու օրինակից).

զ) հայտատուի մասին տեղեկանքը, որը պարունակում է՝

ադամանդների սեփական արտադրության տեխնոլոգիական ցիկլի համառոտ նկարագիրը,

հայտատուի կազմակերպության հաստոցային պարկի մասին տվյալները՝ ըստ տեխնոլոգիական ցիկլի գործընթացների,

տեխնոլոգիական ցիկլի գործընթացներում ներգրավված անձնակազմի թվի մասին տվյալները,

ադամանդների պատրաստման ժամանակ արտադրությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մասին տվյալները՝ դրանց կցելով այդ փաստաթղթերի պատճենները.

է) բնական ալմաստներից ադամանդներ պատրաստելու արտադրական գործընթացի տեխնոլոգիական սխեման, որը կիրառվում է վերամշակման ընթացքում՝ ըստ հայտագրված պայմանագրի.

ը) վերամշակման ընթացքում ադամանդների պատրաստման տեխնիկական պայմանները (ստանդարտները)՝ ըստ հայտագրված պայմանագրի.

թ) հայտատուի արտադրությունում բնական ալմաստների մշակման բնութագրերի վիճակագրական տվյալները, որոնք համապատասխանում են պատրաստի արտադրանքի չափաքաշային խմբերի կտրվածքով վերամշակման համար արտահանվողներին.

ժ) հայտատուի արտադրության՝ վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները.

ժա) ըստ չափաքաշային խմբերի՝ ադամանդների պատրաստման

կանխատեսման հաշվարկը պայմանագրով՝ Կարգի 2-րդ հավելվածի համաձայն.

ժբ) վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների հաշվարկը պայմանագրով՝ Կարգի 3-րդ հավելվածի համաձայն.

ժգ) բնական ալմաստների օգտագործման մասին տեղեկանքը՝ ըստ պայմանագրի՝ Կարգի 4-րդ հավելվածի համաձայն.

ժդ) բնական ալմաստների վերատեսակավորման դեպքում լրացուցիչ ներկայացվում է բնական ալմաստների վերատեսակավորման մասին տեղեկանքը, Կարգի 5-րդ հավելվածի համաձայն, այն փաստաթղթերի պատճենների հետ միասին, որոնց հիման վրա նշված տեղեկանքը կազմվել է.

ժե) հաստատում այն մասին, որ արտահանվող բնական ալմաստների խմբաքանակում զինված ընդհարումների գոտիներում արդյունահանված բնական ալմաստներ («կոնֆլիկտային ալմաստներ») չկան.

ժզ) բնական ալմաստների առուվաճառքի պայմանագրերի եւ սեփականության իրավունքի փոխանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ պայմանագրի պայմաններին համապատասխան.

ժէ) արդյունահանող սուբյեկտների եւ վերամշակող կազմակերպությունների, չմշակված թանկարժեք քարերի այլ մատակարարների եւ վերամշակող կազմակերպությունների միջեւ չմշակված թանկարժեք քարերի հետ կատարված գործարքների ակտերի պատճենները.

ժը) չմշակված թանկարժեք քարերի հետ կատարված գործարքների հաշվառման մասին լիազոր մարմինների կողմից տրված ծանուցումների պատճենները՝ Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի ռեզիդենտն է հայտատուն.

ժթ) վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) բնական ալմաստների ցանկը՝ Կարգի 6-րդ հավելվածի համաձայն (երեք բնօրինակ).

ի) բնական ալմաստների վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկը՝ Կարգի 1-ին հավելվածի համաձայն (երեք



բնօրինակ).

իս) եթե վերամշակման թույլտվության եւ (կամ) արտահանման լիցենզիայի գործողության ավարտից հետո հայտագրվող ապրանքը չի արտահանվել կամ մասամբ է արտահանվել, ապա հայտատուն ներկայացնում է թույլտվության (լիցենզիայի) պատճենը՝ բնական ավմաստների մնացորդների մասին Մաքսային մարմինների կողմից կատարված նշումով:

8. Հայտատուն պատասխանատվություն է կրում ներկայացված տվյալների հավաստիության համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

9. Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները որոշելու ուսումնասիրության արդյունքների հիման վրա՝ հայտատուի հասցեին են ուղարկվում վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) բնական ավմաստների ցանկը՝ Կարգի 6-րդ հավելվածի համաձայն, բնական ավմաստների վերամշակումից հետո ստացվելիք ներմուծվող (արտահանվող) արդյունքների ցանկը՝ Կարգի 1-ին հավելվածի համաձայն, եւ գրություն, որով հաստատվում է, որ հայտատուն ադամանդներ պատրաստելու նպատակով իր արտադրական գործունեության մեջ օգտագործում է բնական ավմաստներ՝ ստորագրված Մաքսային միության այն անդամ պետության լիազոր մարմնի կողմից, որի ռեզիդենտն է հայտատուն:



Հայտատուի ղեկավարի

(լիազորված հայտատուի)

պաշտոնի անվանումը \_\_\_\_\_(Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_(Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.

Մաքսային միության

անդամ պետության լիազոր ներկայացուցչի

պաշտոնի անվանումը \_\_\_\_\_(Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.



	շային խումբը								
1	2	3	4	5	6	7	8	9	10
1			90 - 120 եւ <						
			60 - 90						
			40 - 60						
			30 - 40						
			25 - 30						
			20 - 25						
			15 - 20						
			10 - 15						
			7 - 10						
			6 - 7						
			5 - 6						
			4 - 5						
			3,4 - 4						
			0,30 - 0,39						
			0,40 - 0,49						
0,50 - 0,59									
			եւ այլն						
	ԸՆԴԱՄ ԵՆԸ.								
2									
	ԸՆԴԱՄ ԵՆԸ.								

## Աղյուսակ 2

Ընդամենը՝ ըստ մեկ կարատում եղած քարերի քանակի \_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_  
պայմանագրով

Ադամանդների չափաքաշային խումբը	Ադամանդների քաշը, կարատները		
	նվազագույնը	առավելագույնը	միջին արժեքը
1	2	3	4
90 - 120 եւ <			
60 - 90			
40 - 60			
30 - 40			
25 - 30			
20 - 25			
15 - 20			
10 - 15			
7 - 10			
6 - 7			
5 - 6			
4 - 5			
3,4 - 4			
0,30 - 0,39			
0,40 - 0,49			

0,50 - 0,59			
ԸՆԴԱՄԵՆԸ.			

Ծանոթագրություն.

Հայտատուի տեխնոլոգիական ծառայության

ղեկավարի պաշտոնի անվանումը \_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Հավելված 3

Բնական ալմաստների եւ ադամանդների  
վերամշակումից հետո ստացվելիք  
արդյունքների ելքի նորմաները մաքսային  
նպատակներով որոշելու կարգի

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Հայտատուի ղեկավարի  
պաշտոնի անվանումը

---

(հայտատուի անվանումը)

Կ.Տ.

---

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

«\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաների  
հաշվարկը՝ ըստ \_\_\_\_\_ 20\_\_ թ. թիվ \_\_\_\_\_ պայմանագրի

Համարը՝ ը/կ	Ալմաստի հումքի քաշը, կարատները	Ադամանդների քաշը, կարատները			Վերամշակումից հետո ստացվելիք արդյունքների ելքի նորման, %		
		նվազա- գույնը	առավելա- գույնը	միջին արժեքը	նվազա- գույնը	առավելա- գույնը	միջին արժեքը
1	2	3	4	5	6	7	8



--	--	--	--	--	--	--	--

Ծանոթագրություն.

Թափոնների քանակի հաշվարկը՝ ըստ \_\_\_\_\_ 20 թ. թիվ \_\_\_\_ պայմանագրի

Ալմաստի հումքի քաշը, կարատները	Թափոնների քանակը, կարատները		Ալմաստի հումքի քաշից առաջացած թափոնների քանակը Թափոնների քանակը %	
	նվազագույնը	առավելագույնը	նվազագույնը	առավելագույնը

Թափոնների քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.  $Զթափ = Զա/հ \times Բթափ$ ,

որտեղ՝

Զթափ–ը ալմաստի հումքը մշակելիս առաջացող թափոնների զանգվածն է՝ կարատներով,

Զա/հ–ը ալմաստի հումքի զանգվածն է՝ կարատներով,

Բթափ–ը՝ թափոնների քանակի վիճակագրական գործակիցն է՝ %-ով:

Հայտատուի տեխնոլոգիական ծառայության ղեկավարի պաշտոնի անվանումը \_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Հավելված 4

Բնական ավաստների եւ ադամանդների վերամշակումից  
 հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները մաքսային  
 նպատակներով որոշելու կարգի

Հայտատու՝ \_\_\_\_\_

Բնական ավաստների օգտագործման մասին տեղեկանք՝ ըստ \_\_\_\_\_ թիվ \_\_\_\_\_  
 պայմանագրի

Համարը՝ ը/կ	Ներքին շուկայում գնված ավաստի հումքը								Նախկինում վերամշակման եւ արտահանման համար հայտագրված ավաստի հումքը			Վերամշակման համար արտահանվող ավաստի հումքը			Ավաստի հումքի մնացորդը		
	Պայմանագիրը		Վաճառողը	Հանձնման ակտը		Կոմպլեկտայնության ցանկը		Քաշը, կարատները	Հաշվարկված արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատները	Հաշվարկված արժեքը, ԱՄՆ դոլար	Պայմանագրային արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատները	Հաշվարկված արժեքը, ԱՄՆ դոլար	Պայմանագրային արժեքը, ԱՄՆ դոլար	Քաշը, կարատները	Հաշվարկված արժեքը, ԱՄՆ դոլար
	թիվ	ամսաթիվ	թիվ	ամսաթիվ	թիվ	ամսաթիվ	թիվ										
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18

	ԸՆԴԱՄԵՆԸ՝ ըստ ցանկերի.																
	ԸՆԴՀԱՆՈՒ ՐԸ.																

Հայտատուի ղեկավարի (լիազորված հայտատուի) պաշտոնի անվանումը \_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.



Ընդամենը՝ 20 ____ թվականի համար.													
Ընդհանուրը.													
Փաթեթներն իրար միացնելու դեպքում՝ քաշի տարբերությունը (քաշի շեղումների ակտ ____-ի համար____)													
Ուղարկվել է վերատեսակավորման (____ -ի ռեեստր համար , արժեքներով առաքանիների ընդունման մասին ____ -ի ակտ համար , ____ -ի մասնագիր-բեռնագիր համար )													
Քաշի տարբերությունը՝ վերատեսակավորման ընդունելիս (____ -ի բացման եւ զննման ակտ համար )													
Ընդունված է վերատեսակավորման													
Տեխնոլոգիական կորուստներ (____-ի ակտ համար՝ թանկարժեք քարերի հետ կատարվող տեխնոլոգիական գործողությունների՝ ըստ խմբաքանակի)													
Վերատեսակավորումից հետո արժեքների ____ համարի հանձնման ակտ (____-ի կոմպլեկտայնության ցանկ համար )													
Կատարված աշխատանքների հանձնման-ընդունման ակտ ____-ի համար													

Հայտատուի ղեկավարի (լիազորված հայտատուի) պաշտոնի անվանումը \_\_\_\_\_(Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ \_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 6

Բնական ավաստների եւ ադամանդների վերամշակումից  
 հետո ստացվելիք արդյունքների ելքի նորմաները մաքսային  
 նպատակներով որոշելու կարգի

Վերամշակման համար ներմուծվող (արտահանվող) բնական  
 ավաստների ցանկը

Համարը ը/կ	Հայտատուի անվանումը	Պայմանագիրը, ամսաթիվը եւ համարը	Ապրանքի անվանումը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքի չափման միավորը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքի քանակը, հատ	Ապրանքի արժեքը, ուր.	Ապրանքի ձեակերպումն իրականացնող մաքսային մարմինը
1	2	3	4	5	6	7	8	9

Հայտատուի ղեկավարի (լիազորված հայտատուի) պաշտոնի

Մաքսային միության  
 անդամ պետության

անվանումը

\_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝

\_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.

լիազոր ներկայացուցչի

պաշտոնի անվանումը

\_\_\_\_\_ (Ազգանուն, Ա. Հ.)

(ստորագրություն)

Կ.Տ.



ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ  
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

1. «Մաքսային միության մաքսային տարածքից հանքային հումքի արտահանման կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Երրորդ երկրների նկատմամբ միասնական մաքսային տարածքում ապրանքների արտաքին առևտրի հետ կապված միջոցներ սահմանելու եւ դրանք կիրառելու կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված իրավաբանական եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այն Ապրանքների միասնական ցանկի 2.11-րդ բաժնում նշված հանքային հումքի արտահանումը, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ են կիրառվում (այսուհետ՝ հայտատուներ), ինչպես նաեւ անձնական օգտագործման համար այդպիսի ապրանքների արտահանում իրականացնող ֆիզիկական անձանց վրա:

3. Հանքային հումքի արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից տրամադրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն:

4. Հանքային հումքի արտահանումը ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար արգելվում է:

5. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Հայտատուն ներկայացնում է նաեւ ապրանքի ձեռքբերման եւ տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

7. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացվեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

8. Այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ լիցենզիա տրամադրելու մասին որոշումն ընդունվում է լիազոր մարմնի կողմից՝ Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի հետ համաձայնեցնելով, հայտատուն Մաքսային միության անդամ պետության՝ լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնող պետական իշխանության մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 6-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաեւ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

9. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

10. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիան տրամադրելու մասին հայտի համաձայնեցումը), բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից, կարող է մերժվել՝

– եթե չեն ներկայացվում սույն Հիմնադրույթի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը,

– եթե հանքային հումքի արտահանման հայտագրված ծավալը տնտեսական վնաս կհասցնի Մաքսային միության անդամ պետությանը:

11. Այն դեպքում, երբ լիցենզիա տրամադրելու մասին հայտը ձեւակերպվում է հանքային հումքի մի քանի տեսակներ արտահանելու համար, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին, հայտին կից ձեւակերպվում է հավելված:

12. Լիազոր մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ

(Եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (Եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԸ, ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ  
ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ  
ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ, ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ, ՄԱՔՍԱՅԻՆ  
ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՅԻԿ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը եւ դրանց պրեկուրսորները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, մաքսային տարածքից արտահանելու, մաքսային տարածքով տարանցիկ փոխադրելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է իրավաբանական անձանց վրա, որոնք Մաքսային միության մաքսային տարածք են ներմուծում, մաքսային տարածքից արտահանում են, մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում են թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր եւ դրանց պրեկուրսորներ, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.12-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ), ինչպես նաեւ այն ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են նման ապրանքների ներմուծումը կամ արտահանումն անձնական օգտագործման նպատակով:

3. Իրավաբանական անձանց կողմից թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ներմուծումը եւ (կամ)

արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրվող միանգամյա լիցենզիաների հիման վրա, որի տարածքում հայտատուն գրանցված է (այսուհետ՝ լիազոր մարմին):

4. Ֆիզիկական անձինք կարող են իրականացնել սահմանափակ քանակով թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի՝ որպես բժշկական ցուցումներով անձնական օգտագործման համար նախատեսված դեղամիջոցների ներմուծում եւ (կամ) արտահանում՝ համապատասխան փաստաթղթերի առկայության պայմանով, ինչպես նաեւ պրեկուրսորների՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված ծավալներով ներմուծում եւ (կամ) արտահանում:

5. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների տարանցիկ փոխադրումը Մաքսային միության անդամ պետությունների տարածքով իրականացվում է այն հսկվող միջոցների եւ նյութերի շրջանառության ոլորտում Մաքսային միության անդամ պետությունների միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթների պահպանմամբ, որոնք նշված են Ապրանքների միասնական ցանկի 2.12-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

6. Լիազոր մարմնի կողմից թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ներմուծման եւ (կամ) արտահանման լիցենզիաների տրամադրումն իրականացվում է՝ հաշվի առնելով Մաքսային միության անդամ պետության՝ թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասով պահանջարկը:

7. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների արտահանում իրականացնելիս հայտատուն լիազոր մարմին է

ներկայացնում ներմուծող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված ներմուծման թույլտվությունը (բնօրինակը կամ դրա՝ նոտարական կարգով հաստատված պատճենը):

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային տարածքով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների տարանցիկ փոխադրում իրականացնելու դեպքում հայտատուն լրացուցիչ կերպով լիազոր մարմին է ներկայացնում ներմուծող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված ներմուծման թույլտվությունը (բնօրինակը կամ դրա՝ նոտարական կարգով հաստատված պատճենը) եւ արտահանող երկրի արտահանման թույլտվության պատճենը, եթե այլ բան նախատեսված չէ ներմուծող երկրի կամ արտահանող երկրի պահանջներով:

8. Այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազոր մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության այլ մարմինների հետ համաձայնեցմամբ, ապա, ի լրումն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերի, հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում գործադիր իշխանության մարմինների՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ներմուծման եւ (կամ) արտահանման հնարավորությունը հաստատող փաստաթղթերը:

Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

9. Լիցենզիայի ու թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ներմուծման եւ (կամ) արտահանման հնարավորությունը հաստատող փաստաթղթերի տրամադրումը, Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից բացի կարող է մերժվել նաեւ Հիմնադրույթի 7-րդ եւ 8-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության համար սահմանված՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների պահանջարկի

նորման գերազանցվելու դեպքում:

10. Արտակարգ իրավիճակներում անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար նախատեսված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ներմուծումը եւ (կամ) արտահանումը, ինչպես նաեւ տարանցիկ փոխադրումն իրականացվում են առանց լիցենզիայի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

11. Մաքսային միության անդամ պետության հայտատուն թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ներմուծում (արտահանում) իրականացնելուց հետո 10 օրացուցային օրվա ընթացքում պարտավոր է լիցենզիան տրամադրած երկրի լիազոր մարմնին ծանուցել թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների փաստացի ներմուծված (արտահանված) քանակությունների, դրանց ներմուծման (արտահանման) համար օգտագործված տրանսպորտային միջոցի, ինչպես նաեւ Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխելու վայրի եւ ամսաթվի մասին:

12. Առաջին բժշկական օգնություն ցուցաբերելու համար թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների սահմանափակ քանակությունների ներմուծումը եւ (կամ) արտահանումը առաջին օգնության դեղարկղերում միջազգային հաղորդակցության՝ ծովային (գետային) նավերով, ինքնաթիռներով, իրականացվում է առանց լիցենզիայի, համապատասխան տրանսպորտային միջոցների գրանցման պետության օրենսդրությամբ սահմանված հսկողության միջոցների կիրառությամբ:

Որպես պաշարներ օգտագործվող պրեկուրսորների ներմուծումը եւ (կամ) արտահանումն այն քանակությամբ, որն անհրաժեշտ է օդային, ծովային (գետային), երկաթուղային տրանսպորտային միջոցների սարքավորումների եւ տեխնիկական սարքերի բնականոն շահագործումն ապահովելու համար, իրականացվում է առանց լիցենզիայի, մաքսային սահմանով պաշարների տեղափոխումը կարգավորող մաքսային օրենսդրության պահանջների պահպանմամբ:

13. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:



## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ  
ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԸ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ,  
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ  
ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորներ չհանդիսացող թունավոր նյութերը ներմուծելու, արտահանելու եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթի նպատակներով «թունավոր նյութեր» եզրույթը վերաբերում է բարձր կենսաբանական ակտիվությամբ այն քիմիական, կենսաբանական միացությունները, որոնք փոքր դոզայով եւ կոնցենտրացիայով օրգանիզմ ընկնելու դեպքում ընդունակ են առաջացնելու ախտաբանական փոփոխություններ:

3. Հիմնադրույթով չի կարգավորվում թունավոր նյութեր հանդիսացող՝ անասնաբուժության համար նախատեսված դեղամիջոցների, դեղագործական նյութերի, պատրաստուկների ներմուծման, արտահանման եւ տարանցիկ փոխադրման կարգը, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.14-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

4. Ստանդարտ նմուշ հանդիսացող թունավոր նյութերի ներմուծումը եւ (կամ)

արտահանումն իրականացվում են Մաքսային միության անդամ պետությունների համապատասխան պետական մարմինների եզրակացության հիման վրա:

5. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորներ չհանդիսացող թունավոր նյութերի (այսուհետ՝ թունավոր նյութեր) ներմուծում եւ (կամ) արտահանում, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.13-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ):

6. Որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ չգրանցված ֆիզիկական անձանց կողմից թունավոր նյութերի ներմուծում եւ (կամ) արտահանում չի թույլատրվում:

7. Թունավոր նյութերի ներմուծումը եւ (կամ) արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրվող միանգամյա լիցենզիայի հիման վրա, որի տարածքում է գրանցված հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին):

8. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հայտատուն լրացուցիչ կերպով լիազոր մարմին է ներկայացնում (բացառությամբ Հիմնադրույթի 10-րդ կետով նախատեսված դեպքի)՝

– ներմուծվող թունավոր նյութերն արտադրական նպատակներով փոխադրելու, պահպանելու եւ օգտագործելու ոլորտում գործունեություն իրականացնելու իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում.

– թունավոր նյութի եւ այն տեխնոլոգիական պրոցեսի նկարագրությունը, որում

օգտագործվում է ներմուծվող թունավոր նյութը՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան.

– ապահովագրական պոլիսի պատճենը Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

9. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն Համաձայնագրի 3–րդ հոդվածի 3–րդ կետով սահմանված կարգով:

10. Այն դեպքում, երբ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազոր մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության տվյալ անդամ պետության գործադիր իշխանության այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա Հիմնադրույթի 8–րդ կետում նշված լրացուցիչ փաստաթղթերը, ինչպես նաև լիցենզիայի ձեւակերպման համար լիազոր մարմին ներկայացվող փաստաթղթերը հայտատուն ներկայացնում է Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության այն մարմին, որը համաձայնեցնում է լիցենզիայի տրամադրումը:

11. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրության ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

12. Մաքսային միության տարածքով թունավոր նյութերի տեղափոխումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ եւ երկաթուղային ճանապարհներով ու ջրային հաղորդակցություններով, ավտոմոբիլային ու օդային տրանսպորտային միջոցներով իրականացվող փոխադրումների միջազգային կանոններով սահմանված կարգով:

13. Մաքսային միության մաքսային տարածքով թունավոր նյութերի տարանցիկ փոխադրումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված անվտանգության կանոնների պահպանմամբ, Մաքսային միության անդամ պետությունների լիազոր մարմինների կողմից տրամադրվող տարանցիկ փոխադրման մասին եզրակացությունների հիման վրա:

14. Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում

իրականացնելու վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու կարգը սահմանվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ:

15. Այն դեպքում, երբ լիցենզիա տրամադրելու մասին հայտը ձեւակերպվում է թունավոր նյութերի մի քանի տեսակների ներմուծման եւ (կամ) արտահանման համար, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասանիշ ծածկագրին, ապա հայտին կից ձեւակերպվում է հավելված:

16. «Ոչնչացում» մաքսային ռեժիմով ձեւակերպված թունավոր նյութերի ոչնչացման գործընթացում գոյացած թափոնների արտահանումը Մաքսային միության տարածքից իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

17. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

### ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մաքսային միության մաքսային տարածք դեղամիջոցներ եւ դեղագործական նյութեր ներմուծելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առետրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են դեղամիջոցների եւ դեղագործական նյութերի ներմուծում, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.14-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ, ինչպես նաեւ դեղամիջոցներ արտադրող օտարերկրյա կազմակերպությունների վրա՝ ի դեմս լիազոր ներկայացուցչությունների (մասնաճյուղերի) կամ դրանց վստահված անձանց, եւ անձնական օգտագործման նպատակով այդպիսի ապրանքների ներմուծում իրականացնող ֆիզիկական անձանց վրա:

3. Դեղամիջոցների եւ դեղագործական նյութերի (այսուհետ՝ դեղամիջոցներ)՝ «ներքին սպառման համար բացթողում», «ներքին սպառման համար վերամշակում», «վերաներմուծում» եւ «հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով ձեւակերպումն իրականացվում է պայմանով, որ դրանք ներառված են Մաքսային միության անդամ պետության դեղամիջոցների պետական ռեեստրում՝ բացառությամբ Հիմնադրույթի 4-րդ եւ 5-րդ կետերում նշված դեպքերի:

Պետական ռեեստրի համապատասխան տեղեկատվական համակարգում կամ գրանցման հավաստագրերում կամ Մաքսային միության անդամ պետության՝ դեղամիջոցների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից պետական ռեեստրից տրամադրվող քաղվածքներում դեղամիջոցների մասին առկա տեղեկությունները ներառվում են ապրանքների մասին հայտարարագրում:

Դեղամիջոցներն այլ մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու դեպքում վերոնշյալ տեղեկությունները մաքսային մարմիններ չեն ներկայացվում:

4. Դեղամիջոցների (այդ թվում՝ չգրանցված) ներմուծումն անձնական օգտագործման համար ֆիզիկական անձանց կողմից, դիվանագիտական կորպուսի աշխատողների կամ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից Մաքսային միության մաքսային տարածք ժամանած տրանսպորտային միջոցների ուղեւորների եւ անձնակազմերի անդամների, գնացքի բրիգադների եւ տրանսպորտային միջոցների վարորդների բուժման համար, միջազգային մշակութային, սպորտային միջոցառումների մասնակիցների եւ միջազգային արշավախմբերի մասնակիցների բուժման համար իրականացվում է առանց Մաքսային միության անդամ պետության՝ դեղամիջոցների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի թույլտվության, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

5. Կլինիկական հետազոտություններ, դեղամիջոցների փորձաքննություններ, դեղամիջոցների պետական գրանցում իրականացնելու, կոնկրետ հիվանդի կենսական ցուցանիշների համաձայն բժշկական օգնություն ցուցաբերելու կամ հազվադեպ եւ (կամ) առանձնահատուկ ծանր ախտաբանություն ունեցող սահմանափակ թվով հիվանդներին բժշկական օգնություն ցուցաբերելու համար նախատեսված չգրանցված դեղամիջոցների, ինչպես նաեւ կլինիկական հետազոտություններ իրականացնելու համար նախատեսված գրանցված դեղամիջոցների, հումանիտար օգնություն (աջակցություն), արտակարգ իրավիճակներում օգնություն ցուցաբերելու համար նախատեսված գրանցված կամ չգրանցված դեղամիջոցների ձեւակերպումը մաքսային ընթացակարգերով («ներքին

սպառման համար բացթողում», «ներքին սպառման համար վերամշակում», «վերաներմուծում» եւ «հրաժարում՝ հոգուտ պետության») իրականացվում է լիազոր մարմնի կողմից տրամադրվող եզրակացությունների (թույլտվությունների) հիման վրա՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Վերոնշյալ դեղամիջոցներն այլ մաքսային ընթացակարգերով ձեւակերպելու դեպքում լիազոր մարմնի եզրակացություն (թույլտվություն) չի պահանջվում:

6. Լիազոր մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

7. Եզրակացության (թույլտվության) տրամադրումը կարող է մերժվել Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

8. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

9. Հիմնադրույթը չի տարածվում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների վրա:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ (ԿԱՄ) ԲԱՐՁՐ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾՆԵՐԸ ԿԱՄ ԱՅԼ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցները եւ (կամ) բարձր հաճախականության սարքավորումները (այսուհետ՝ ՌԷՄ եւ (կամ) ԲՀՍ), այդ թվում՝ ներկառուցվածները կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

Հիմնադրույթում օգտագործվում են հետեյալ հիմնական հասկացությունները՝

բարձր հաճախականության սարքավորումներ՝ սարքավորանք կամ սարքեր, որոնք նախատեսված են արդյունաբերական, գիտական, բժշկական, կենցաղային կամ այլ նպատակներով ռադիոհաճախականության էներգիայի առաջացման եւ օգտագործման համար՝ բացառությամբ էլեկտրակապի ոլորտում կիրառման.

ռադիոէլեկտրոնային միջոցներ՝ տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են մեկ կամ մի քանի հաղորդիչ եւ (կամ) ընդունիչ սարքերից բաղկացած ռադիոալիքներ հաղորդելու եւ (կամ) ընդունելու համար կամ այդպիսի սարքերի համակցություններ եւ իր մեջ օժանդակ սարքավորումներ ներառողներ:

2. Սույն Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ գրանցված այն իրավաբանական անձանց եւ ֆիզիկական



անձանց վրա, որոնք իրականացնում են ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի, այդ թվում՝ ներկառուցվածների կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողների ներմուծում (այսուհետ՝ հայտատուներ)՝ նշված այն Ապրանքների միասնական ցանկի 2.16-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ, եւ այն ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այդպիսի ապրանքների ներմուծում անձնական օգտագործման համար:

3. ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի, այդ թվում՝ ներկառուցվածների կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողների ներմուծումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության լիազոր պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից տրամադրվող լիցենզիայի հիման վրա, որի տարածքում հայտատուն գրանցված է:

Ներմուծումից տարբերվող պայմաններում ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի ներսերման դեպքում պահանջվում է կապի ոլորտում Մաքսային միության անդամ պետության կողմից սահմանված մարմնի կողմից տրամադրվող եզրակացության (թույլատրագրի) ստացում՝ ներառյալ ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի, այդ թվում՝ ներկառուցվածների կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողների ժամանակավոր ներմուծման համար 6 ամսից ոչ ավելի ժամկետով՝

օտարերկրյա պաշտոնական պատվիրակությունների՝ Մաքսային միության մաքսային տարածքում գտնվելն ապահովելու համար,

Մաքսային միության մաքսային տարածքում անցկացվող մարզական մրցույթներ եւ այլ մշակութամասսայական միջոցառումներ անցկացնելու համար,

Մաքսային միության մաքսային տարածքում անցկացվող ցուցահանդեսներում ցուցադրելու համար;

Մաքսային միության մաքսային տարածքում գիտահետազոտական եւ փորձարարական աշխատանքներ անցկացնելու համար,

համապատասխանության հաստատման (համապատասխանության

սերտիֆիկացման կամ հայտարարագրման) նպատակով փորձարկումներ իրականացնելու համար:

Եթե ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի կազմում առկա են հատուկ տեխնիկական միջոցներ, որոնք նախատեսված են տեղեկությունները գաղտնի կերպով ստանալու համար, ապա դրանց ներմուծումն իրականացվում է «Տեղեկությունները գաղտնի կերպով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

4. Լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագիր) ստանալը չի պահանջվում՝

ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի, այդ թվում՝ ներկառուցվածների կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողների տարանցման համար առանց Մաքսային միության մաքսային տարածքում դրանք շահագործելու (կիրառելու, օգտագործելու) իրավունքի.

ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղակայված ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի ժամանակավոր ներմուծման համար.

Մաքսային միության մաքսային տարածքից ավելի վաղ ժամանակավոր արտահանված ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի հետադարձ ներմուծման համար.

օդային, ծովային եւ գետային նավերի նավային սարքավորումների կազմի մեջ մտնող ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի, ինչպես նաեւ նավային սարքավորումների կազմում անսարք ՌԷՄ-ն եւ (կամ) ԲՀՍ-ն փոխարինելու նպատակով օդային, ծովային եւ գետային նավերի վրա տեղակայելու համար նախատեսված ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի ներմուծման համար, ինչին հաջորդում է փոխարինված (հանված) ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի՝ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանումը.

Մաքսային միության մաքսային տարածքում արտադրվող օդային, ծովային, գետային նավերը եւ այլ տեխնիկական միջոցները վերանորոգելու կամ դրանց վրա տեղակայելու համար նախատեսված ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի ներմուծման համար առանց Մաքսային միության մաքսային տարածքում դրանք շահագործելու

(կիրառելու, օգտագործելու) իրավունքի եւ ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի արտադրման արդյունքում կամ վերանորոգումից հետո ստացված ապրանքների կազմում Մաքսային միության մաքսային տարածքից հետադարձ արտահանման ենթակա.

այն ռադիոէլեկտրոնային միջոցների եւ (կամ) բարձր հաճախականության սարքավորումների ցանկում ներառված ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի ներմուծման համար, որոնց ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք իրականացվում է առանց լիցենզիայի կամ եզրակացության (թույլատրագրի) ձեւակերպման՝ համաձայն սույն Հիմնադրույթի հավելվածի:

5. Ֆիզիկական անձանց կողմից ՌԷՄ-ը եւ (կամ) ԲՀՍ-ն անձնական օգտագործման համար ներմուծելու ժամանակ պահանջվում է կապի ոլորտում Մաքսային միության անդամ պետության կողմից սահմանված մարմնի կողմից տրամադրվող՝ ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի ներմուծման հնարավորության մասին եզրակացություն (թույլատրագիր), եթե այդպիսի եզրակացության առկայությունը նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

6. Մաքսային միության մաքսային տարածք ներմուծված ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի, այդ թվում՝ ներկառուցվածների կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողների շահագործումն (կիրառումը, օգտագործումը) իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

7. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաեւ լրացուցիչ՝

ներմուծվող ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի մասին տվյալները՝ անվանումը, տիպը, մոդելը, արտադրող երկիրը, տեխնիկական բնութագրերը (ռադիոհաճախականության շերտը, հաճախականությունների ցանցի քայլը, հաղորդչի հզորությունը, ռադիոազդանշանի մոդուլման տիպը կամ տեսակը).

ՌԷՄ-ի կազմում ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների առկայության (բացակայության) մասին տեղեկություններ.

ՌԷՄ-ի եւ (կամ) ԲՀՍ-ի յուրաքանչյուր տեսակի համար Մաքսային միության

341	Mini-Link 7HC թվային ռադիոռելեային կայան	Ericsson	Շվեդիա
342	Optix RTN 600 38GHz թվային ռադիոռելեային կայան	Huawei	Չինաստան
343	Optix RTN 600 13GHz թվային ռադիոռելեային կայան	Huawei	Չինաստան
344	Optix RTN 600 23GHz թվային ռադիոռելեային կայան	Huawei	Չինաստան
345	Optix RTN 600 18GHz թվային ռադիոռելեային կայան	Huawei	Չինաստան
346	Optix RTN 600 7GHz թվային ռադիոռելեային կայան	Huawei	Չինաստան
347	Pasolink Neo (18G/48E1) թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
348	Pasolink MX7 թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
349	Pasolink Neo 38G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
350	Pasolink Neo 23G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
351	Pasolink Neo (18G/200MB) թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա

352	Pasolink Neo (7G/200MB) թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
353	Pasolink 18 NEO HP թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
354	Pasolink Neo (38G/200MB) թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
355	Pasolink Nco/c 7G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
356	Pasolink Neo/c 38G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
357	Pasolink 7 թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա

358	Pasolink 18 թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
359	Pasolink 38 NEO HP թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
360	Pasolink Neo 7G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
361	Pasolink Neo 13G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
362	Pasolink Neo 18G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
363	Pasolink 38 թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
364	Pasolink 7 NEO HP թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
365	Pasolink MX18 թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
366	Pasolink Neo (7G/48E1) թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
367	Pasolink+6 G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
368	Pasolink Neo/c 18G թվային ռադիոռելեային կայան	NEC	Ճապոնիա
369	SRA L XD 15 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
370	SRA L XD 7 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
371	SRA LXD 18E թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
372	SRAL XD 18 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
373	SRA L 7 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա

374	SRA L 18 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
375	SRA L 15 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
376	SRAL XD թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
377	SRA S4 11 թվային ռադիոռելեային կայան	Siemens	Գերմանիա
378	IMT- MC-450 ստանդարտի CBTS 3612 բազային կայան	Huawei	Չինաստան

379	IMT- MC-450 ստանդարտի CBTS 3601 բազային կայան	Huawei	Չինաստան
380	IMT- MC-450 ստանդարտի CBTS 3606A բազային կայան	Huawei	Չինաստան
381	GSM/UMTS ստանդարտի ZXSDR BS8800 բազային կայան	ZTE	Չինաստան
382	GSM/UMTS ստանդարտի ZXSDR B 8200 բազային կայան	ZTE	Չինաստան
383	GSM ստանդարտի ZXSDR B8900 բազային կայան	ZTE	Չինաստան
384	GSM ստանդարտի RBS 2309 բազային կայան	Ericsson	Շվեդիա, Չինաստան*
385	GSM ստանդարտի RBS 2401 բազային կայան	Ericsson	Շվեդիա, Չինաստան*
386	GSM ստանդարտի RBS 2109 բազային կայան	Ericsson	Շվեդիա, Չինաստան*
387	GSM ստանդարտի RBS 2302 բազային կայան	Ericsson	Շվեդիա, Չինաստան *
388	UMTS ստանդարտի Flexi BTS WCDMA բազային կայան	Nokia Siemens	EC
389	GSM ստանդարտի BS 82 բազային կայան	Nokia Siemens	EC
390	GSM ստանդարտի BS 240 բազային կայան	Nokia Siemens	EC
391	GSM ստանդարտի BS 241 բազային կայան	Nokia Siemens	EC
392	GSM ստանդարտի կրկնիչ	CommScope	ԱՄՆ
393	GSM/UMTS ստանդարտի կրկնիչ	CommScope	ԱՄՆ

\*Շանթթագրություն՝ «Արտադրողի անվանումը» ենթասյունակում նշված եւ կոնկրետ ՌԷՄ-ի (ԲՀՄ-ի) տողում թվարկված արտադրող ֆիրմաները համապատասխանում են հենց այդ ՌԷՄ-ի (ԲՀՄ-ի) «Երկիրը» ենթասյունակում թվարկված ցանկացած արտադրող երկրին:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱՂՏՆԻ ԿԵՐՊՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ  
ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ  
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Տեղեկությունները գաղտնի կերպով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

Հիմնադրույթը գործում է տեղեկությունները գաղտնի կերպով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցների նկատմամբ, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.17-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

2. Հիմնադրույթը տարածվում է Մաքսային միության անդամ պետությունների՝ հատուկ տեխնիկական միջոցների ներմուծում կամ արտահանում իրականացնող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց վրա (այսուհետ՝ հայտատուներ):

3. Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային տարածք հատուկ տեխնիկական միջոցների ներմուծումն ու արտահանումը չի թույլատրվում:

4. Հատուկ տեխնիկական միջոցների ներմուծումն ու արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր

մարմնի կողմից տրամադրվող միանգամյա լիցենզիաների (այսուհետ՝ լիցենզիաներ) հիման վրա, որի տարածքում հայտատուն գրանցված է (այսուհետ՝ լիազոր մարմին):

5. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության պետական անվտանգության ապահովման ոլորտի գործադիր իշխանության մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) կողմից տրամադրված՝ հատուկ տեխնիկական միջոցներ ներմուծելու կամ արտահանելու հնարավորության մասին եզրակացությունը:

ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման տասանիշ ծածկագրերից մեկին համապատասխանող՝ մի քանի տեսակի հատուկ տեխնիկական միջոցներ ներմուծելիս կամ արտահանելիս լիցենզիա տրամադրելու մասին հայտին կից ձեւակերպվում է հավելված:

6. Հատուկ տեխնիկական միջոցներ ներմուծելու կամ արտահանելու հնարավորության մասին եզրակացություն ստանալու համար հայտատուն համաձայնեցնող մարմին է ներկայացնում՝

եզրակացություն տրամադրելու մասին հայտը,

արտաքին առեւտրային պայմանագրի, դրա հավելվածների եւ (կամ) լրացումների պատճենը, իսկ արտաքին առեւտրային պայմանագրի բացակայության դեպքում՝ կողմերի մտադրությունները հավաստող այլ փաստաթղթի պատճենը,

հատուկ տեխնիկական միջոցների շրջանառության ոլորտում գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը,

հատուկ տեխնիկական միջոցների նմուշների՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով անցկացված փորձաքննության եզրակացության պատճենը,

հատուկ տեխնիկական միջոցների տեխնիկական փաստաթղթերը,

հատուկ տեխնիկական միջոցների նմուշները (համաձայնեցնող մարմնի պահանջով):

Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

7. Հատուկ տեխնիկական միջոցների ժամանակավոր ներմուծման եւ ժամանակավոր արտահանման համար լիցենզիա ստանալը չի պահանջվում՝

– հետազոտությունների, փորձարկումների եւ փորձաքննությունների անցկացման դեպքում,

– ցուցահանդեսներում ցուցադրման դեպքում,

– հատուկ տեխնիկական միջոցները, պայմանագրի (համաձայնագրի) պարտավորություններին համապատասխան, վերանորոգելու համար ներմուծելու եւ արտահանելու դեպքում,

– Մաքսային միության մաքսային սահմանով հատուկ տեխնիկական միջոցների տարանցիկ փոխադրման դեպքում:

Հատուկ տեխնիկական միջոցների ժամանակավոր ներմուծումը եւ ժամանակավոր արտահանումը սույն կետի առաջին մասում նշված դեպքերում հայտատուի կողմից իրականացվում է համաձայնեցնող մարմնի եզրակացությունը (թույլատրագիրը) մաքսային մարմիններ ներկայացնելու պայմանով:

8. Եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար հայտատուն համաձայնեցնող մարմին է ներկայացնում՝

եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու մասին հայտը,

արտաքին առևտրային պայմանագրի, դրա հավելվածի եւ (կամ) լրացումների պատճենը եւ (կամ) կողմերի մտադրությունը հավաստող այլ փաստաթղթի պատճենը,

հատուկ տեխնիկական միջոցների շրջանառության ոլորտում գործունեություն իրականացնելու լիցենզիայի պատճենը (ժամանակավոր արտահանման դեպքում),

հատուկ տեխնիկական միջոցների տեխնիկական փաստաթղթերը,

հատուկ տեխնիկական միջոցների նմուշները (համաձայնեցնող մարմնի



պահանջով):

Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

9. Լիցենզիայի (համաձայնեցնող մարմնի եզրակացության, եզրակացության (թույլատրագրի)) տրամադրումը, Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից բացի, կարող է մերժվել՝

Հիմնադրույթի 5-րդ, 6-րդ եւ 8-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը ոչ ամբողջական ծավալով ներկայացնելու դեպքում,

երրորդ երկրներում հատուկ տեխնիկական միջոցները իրենց մաքսային տարածք ներմուծելու սահմանափակումների առկայության դեպքում,

Մաքսային միության անդամ պետությունների անվտանգությանը վնաս հասցնելու հնարավորության դեպքում, որը որոշվում է՝ ըստ հատուկ տեխնիկական միջոցների հետազոտությունների (փորձարկումների, փորձաքննությունների) արդյունքների եւ (կամ) դրանց փաստաթղթերի:

10. Այն դեպքում, երբ հատուկ տեխնիկական միջոցներն իրենց կազմում ունեն ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ, համաձայնեցնող մարմնի կողմից որոշում է ընդունվում ապրանքի կատեգորիայի մասին, որի համար պետք է տրամադրվի լիցենզիան:

11. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ԾԱԾԿԱԳՐՄԱՆ (ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԿ) ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը գործում է ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների կամ իր կազմում ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող արտադրանքի նկատմամբ, որոնք նշված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.19-րդ բաժնում, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

3. Ծածկագրման միջոցների շարքին են դասվում հետեւյալները.

ա) ծածկագրման միջոցներ՝ ապարատային, ծրագրային եւ ապարատածրագրային միջոցներ, համակարգեր եւ կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներ եւ նախատեսված են կապուղիներով փոխանցման եւ (կամ) դրանց մշակման եւ պահպանման ժամանակ տեղեկությունները չթույլատրված հասանելիությունից պաշտպանելու համար.

բ) իմիտացիոն պաշտպանության միջոցներ՝ ապարատային, ծրագրային եւ

ապարատածրագրային միջոցներ, համակարգեր եւ կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներ եւ նախատեսված են կեղծ տեղեկությունները պարտադրելուց պաշտպանելու համար.

գ) էլեկտրոնային թվային ստորագրության միջոցներ՝ ապարատային, ծրագրային եւ ապարատածրագրային միջոցներ, որոնք կրիպտոգրաֆիկ փոխակերպությունների հիման վրա ապահովում են հետեւյալ ֆունկցիաներից գոնե մեկի իրականացումը՝ էլեկտրոնային թվային ստորագրության փակ բանալու օգտագործմամբ էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծում, էլեկտրոնային թվային ստորագրության բաց բանալու օգտագործմամբ էլեկտրոնային թվային ստորագրության իսկության հաստատում, էլեկտրոնային թվային ստորագրության փակ եւ բաց բանալիների ստեղծում.

դ) կոդավորման միջոցներ՝ միջոցներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներ՝ ձեռքի գործողությունների միջոցով փոխակերպման մասի իրականացմամբ կամ այդպիսի գործողությունների հիման վրա ավտոմատացված միջոցների օգտագործմամբ.

ե) բանալիային փաստաթղթերի պատրաստման միջոցներ (անկախ բանալիային տեղեկության կրիչի տեսակից).

զ) բանալիային փաստաթղթեր (անկախ բանալիային տեղեկության կրիչի տեսակից).

է) համակարգեր, սարքավորումներ եւ բաղադրիչներ, որոնք մշակված կամ մոդիֆիկացված են կրիպտոանալիտիկ ֆունկցիաներ կատարելու համար.

ը) համակարգեր, սարքավորումներ եւ բաղադրիչներ, որոնք մշակված կամ մոդիֆիկացված են լայնացող սպեկտրով համակարգերի համար լայնացող ծածկագրի գեներացման կրիպտոգրաֆիկ մեթոդների կիրառման համար՝ ներառյալ հաճախականությունների ցատկաձեւ վերակառուցումով համակարգերի համար ծածկագրերի ցատկաձեւ վերակառուցումը.

թ) համակարգեր, սարքավորումներ եւ բաղադրիչներ, որոնք մշակված կամ

մոդիֆիկացված են ըստ ժամանակի մոդուլացված գերլայնաշերտ համակարգերի համար ալիքների կամ գաղտնագրող ծածկագրերի ձեւավորման կրիպտոգրաֆիկ մեթոդների կիրառման համար:

Ծանոթագրություն. Սույն կետի «ա»–«թ» ենթակետերում նշված ծածկագրման միջոցների նորմատիվատեխնիկական, կոնստրուկտորական եւ շահագործման փաստաթղթերը համարվում են այդ միջոցների բաղկացուցիչ մասը:

4. Հիմնադրույթը տարածվում է ծածկագրման միջոցների ներմուծում եւ արտահանում իրականացնող անձանց վրա (այսուհետ՝ հայտատուներ):

5. Ծածկագրման միջոցների ներմուծումն ու արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված միանգամյա լիցենզիայի հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին):

6. Լիցենզիա ստանալու համար հայտատուն լիազոր մարմին է ներկայացնում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաեւ՝

Մաքսային միության անդամ պետության պետական անվտանգության ոլորտի գործադիր իշխանության մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմնի) կողմից տրված՝ ծածկագրման միջոցների ներմուծման եւ արտահանման հնարավորության մասին եզրակացությունը.

լիցենզիա ստանալու մասին հայտին կից հավելվածը՝ ծածկագրման բոլոր միջոցների լրիվ անվանումների նշումով, այն մի քանի տեսակի ծածկագրման միջոցների ներմուծման կամ արտահանման դեպքում, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման տասանիշ ծածկագրերից մեկին:

7. Եզրակացություն ստանալու համար հայտատուն, սույն Հիմնադրույթի 6-րդ կետին համապատասխան, համաձայնեցնող մարմին է ներկայացնում՝

ծածկագրման միջոցի ներմուծման կամ արտահանման եզրակացություն տրամադրելու մասին հայտը՝ դրա լրիվ անվանման, նույնականացնող

հատկանիշների նշումով.

Ծածկագրման միջոցների հետ կապված լիցենզավորվող գործունեության տեսակ իրականացնելու լիցենզիայի պատճենը.

Ծածկագրման միջոցի տեխնիկական փաստաթղթերը (ելքային ծածկագրերը ներկայացնելը պարտադիր պահանջ չէ, ելքային ծածկագրերը ներկայացնելու վերաբերյալ հայտատուի մերժումը ինքնին հիմք չէ հայտի մերժման համար).

Ծածկագրման միջոցի նմուշները (գիտատեխնիկական փորձաքննություն անցկացնելու համար՝ համաձայնեցնող մարմնի պահանջով).

Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը, ինչպես նաև ծածկագրման միջոցի գիտատեխնիկական փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը որոշվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

Կոնկրետ ծածկագրման միջոցի համար եզրակացությունը տրվում է մեկ անգամ: Ընդ որում, համաձայնեցնող մարմինները որոշում են նշված միջոցի կիրառման հնարավորությունը եւ պայմանները:

#### 8. Լիցենզիա ստանալը չի պահանջվում՝

ա) ծածկագրման միջոցները, պայմանագրի (համաձայնագրի) պարտավորություններին համապատասխան, վերանորոգելու կամ փոխարինելու համար ներմուծելու կամ արտահանելու դեպքում.

բ) ծածկագրման միջոցները ժամանակավոր ներմուծելու եւ ժամանակավոր արտահանելու դեպքում՝

գիտատեխնիկական փորձաքննություն անցկացնելու նպատակով,

գիտական հետազոտությունների նպատակով,

ցուցահանդեսներում ցուցադրելու նպատակով.

զ) կազմակերպությունների սեփական կարիքներն ապահովելու նպատակով ծածկագրման միջոցների ներմուծման եւ արտահանման դեպքում՝ առանց դրանք տարածելու եւ ծածկագրման ոլորտում երրորդ անձանց ծառայություններ մատուցելու իրավունքի.

դ) Մաքսային միության անդամ պետությունների տարածքով ծածկագրման միջոցների տարանցիկ փոխադրումների դեպքում:

Նշված դեպքերում ծածկագրման միջոցների ներմուծումը եւ արտահանումը հայտատուի կողմից իրականացվում է համաձայնեցնող մարմնի եզրակացությունը (թույլատրագիրը) մաքսային մարմիններ ներկայացնելու պայմանով:

9. Եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար հայտատուն, սույն Հիմնադրույթի 8-րդ կետին համապատասխան, համաձայնեցնող մարմին է ներկայացնում՝

ծածկագրման միջոցի ներմուծման կամ արտահանման եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու մասին հայտը՝ դրա լրիվ անվանման, նույնականացնող հատկանիշների, քանակի եւ ներմուծման կամ արտահանման նպատակի նշումով.

ծածկագրման միջոցի տեխնիկական փաստաթղթերը (ելքային ծածկագրերը ներկայացնելը պարտադիր պայման չէ, ելքային ծածկագրերը ներկայացնելու վերաբերյալ հայտատուի մերժումը ինքնին հիմք չէ հայտի մերժման համար).

ծածկագրման միջոցի նմուշները (գիտատեխնիկական փորձաքննություն անցկացնելու համար՝ համաձայնեցնող մարմնի պահանջով).

արտաքին առեւտրային պայմանագրի, դրա հավելվածների եւ (կամ) լրացումների պատճենը եւ (կամ) կողմերի մտադրությունները հավաստող այլ փաստաթղթի պատճենը:

Կազմակերպությունների սեփական կարիքներն ապահովելու նպատակով ծածկագրման միջոցներ ներմուծելիս հայտատուն հայտի մեջ լրացուցիչ նշում է ծածկագրման միջոցների նմուշների գիտատեխնիկական փորձաքննություն

անցկացնելու մասին հավաստագրի վավերապայմանները, եթե դրա անցկացումը նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը, ինչպես նաև ծածկագրման միջոցի գիտատեխնիկական փորձաքննություն անցկացնելու անհրաժեշտությունը որոշվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

Լիազոր մարմնի լիցենզիա ստանալու ընդհանուր ժամկետը, հաշվի առնելով փորձաքննությունն անցկացնելը եւ համաձայնեցնող մարմնի եզրակացությունը ստանալը, չպետք է գերազանցի 90 օրը՝ հաշվարկված հայտատուի հայտը համաձայնեցնող մարմնում գրանցելու օրվանից:

10. Լիցենզիայի (համաձայնեցնող մարմնի եզրակացության) տրամադրումը, Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից բացի, կարող է մերժվել՝

սույն Հիմնադրույթի 6-րդ, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված ծավալով փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.

երրորդ երկրներում ծածկագրման միջոցներն իրենց մաքսային տարածք ներմուծելու սահմանափակումների առկայության դեպքում.

Մաքսային միության անդամ պետությունների անվտանգությանը վնաս հասցնելու հնարավորության դեպքում, որը որոշվում է՝ ըստ ծածկագրման միջոցների եւ (կամ) դրանց փաստաթղթերի գիտատեխնիկական փորձաքննության արդյունքների:

11. Սույն Հիմնադրույթի 1-ին հավելվածում նշված ծածկագրման միջոցների ներմուծումը եւ արտահանումն իրականացվում է համաձայնեցնող մարմնում գրանցված ծանուցման (ծանուցագրի) մասին տեղեկությունների հիման վրա՝ առանց սույն Հիմնադրույթով նախատեսված այլ թույլատրագրեր ձեւակերպելու:

Ծանուցումը լրացվում է արտադրանքը պատրաստողի կամ արտադրանքը պատրաստողի կողմից լիազորված անձի կողմից մեկ տեսակի ծածկագրման միջոցի

համար մեկ անգամ՝ սեփական ապացույցների հիման վրա:

Ծանուցումով թույլատրվում է ցանկացած անձանց կողմից Մաքսային միության մաքսային սահմանով ծածկագրման միջոցների ցանկացած քանակով տեղափոխումը՝ առանց հայտատուների եւ մաքսային մարմինների կողմից համաձայնեցնող մարմիններ կրկին դիմելու:

Ծանուցման ձեւը ներկայացված է սույն Հիմնադրույթի 2-րդ հավելվածում:

«Ծանուցման գրանցման կարգի մասին» հիմնադրույթը ներկայացված է սույն Հիմնադրույթի 3-րդ Հավելվածում:

Ծանուցումը գրանցելու եւ դրա մասին տեղեկությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կայքում հրապարակելու ժամկետը չպետք է գերազանցի 10 օրը՝ հաշվարկված գրանցման համար ծանուցումը մուտքագրվելու օրվանից:

Ծանուցման գրանցումը կատարվում է ավտոմատ կերպով, եթե հայտը ներկայացվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, համաձայնեցնող մարմինը չի կապվում հայտատուի հետ՝ սահմանված պահանջների հետ տրամադրված նյութերի համապատասխանության հարցերով:

Ծանուցումը գրանցելու համար նյութերը ներկայացնելու ամսաթվից մինչեւ ծանուցման գրանցումն ընկած ժամանակահատվածում հայտատուն ծանուցման մեջ փոփոխություններ կարող է կատարել ծանուցումը ստորագրած անձի կողմից այդ փոփոխությունները հաստատող մակագրությամբ: Ընդ որում, ծանուցման գրանցման ժամկետի հաշվարկման ամսաթիվ է համարվում ծանուցման մեջ փոփոխություններ կատարելու ամսաթիվը:

12. Այն դեպքում, երբ ծածկագրման միջոցներն իրենց կազմում ունեն տեղեկությունները գաղտնի կերպով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ, համաձայնեցնող մարմնի կողմից որոշում է ընդունվում այն ապրանքի կատեգորիայի մասին, որի համար պետք է տրամադրվի լիցենզիան:

13. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ



(Եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (Եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

14. Հայտատուների նյութերի ուսումնասիրման, ծանուցումների ուսումնասիրման եւ գրանցման աշխատանքների իրականացման, ծածկագրման միջոցների փորձաքննությունների անցկացման ժամանակ համաձայնեցնող մարմինները պետք է ապահովեն իրենց վստահված տեղեկությունների գաղտնիության պահպանումը եւ դրանք օգտագործեն միայն այն նպատակներով, որոնց համար այդ տեղեկությունները տրամադրվել են իրենց:

## Հավելված 1

«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները  
Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու  
և Մաքսային միության մաքսային տարածքից  
արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի

### ՑԱՆԿ

ԾԱԾԿԱԳՐՄԱՆ (ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԿ) ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱՄ ԻՐԵՆՑ  
ԿԱԶՄՈՒՄ ԾԱԾԿԱԳՐՄԱՆ (ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԿ) ՄԻՋՈՑՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՐՏԱԴՐԱՆՔԻ) ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԿԱՄ ԿՐԻՊՏՈԳՐԱՖԻԿ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՆԹԱԿԱ ԵՆ ԾԱՆՈՒՅՄԱՆ

1. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքներ, որոնք ունեն հետեւյալ բաղկացուցիչներից ցանկացածը.

սիմետրիկ կրիպտոգրաֆիկ ալգորիթմ, որն օգտագործում է 56 բիտը չգերազանցող երկարություն ունեցող կրիպտոգրաֆիկ բանալի.

ասիմետրիկ կրիպտոգրաֆիկ ալգորիթմ՝ հիմնված մեթոդներից ցանկացածի վրա.

ա) 512 բիտը չգերազանցող չափով ամբողջական թվերը բազմապատկիչների վերլուծելու վրա,

բ) 512 բիտը չգերազանցող չափով վերջավոր դաշտի բազմապատկական խմբում դիսկրետ լոգարիթմները հաշվելու վրա,

գ) վերը բերված «բ» ենթակետում նշված չափից տարբերվող 112 բիտը չգերազանցող վերջավոր դաշտի խմբում դիսկրետ լոգարիթմի վրա:

Ծանոթագրություններ. 1. Զույգության բիտերը չեն ընդգրկվում բանալու երկարության մեջ:

2. «Կրիպտոգրաֆիա» եզրույթը չի վերաբերում տվյալների սեղմման կամ կոդավորման ֆիքսված մեթոդներին:

2. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքներ, որոնք ունեն հետեւյալ սահմանափակ ֆունկցիաները.

ա) աուտենտիֆիկացիա, որը ներառում է հասանելիության հսկողության բոլոր ասպեկտները, որտեղ չկա ֆայլերի կամ տեքստերի ծածկագրում՝ բացառությամբ այն ծածկագրման, որն անմիջականորեն կապված է գաղտնաբառերը, անձնական նույնականացման համարները կամ նման տվյալները չթույլատրված հասանելիությունից պաշտպանելու հետ.

բ) էլեկտրոնային թվային ստորագրություն:

Ծանոթագրություն: Աուտենտիֆիկացիայի եւ էլեկտրոնային թվային ստորագրության ֆունկցիաները ներառում են դրանց հետ կապված՝ բանալիների բաշխման ֆունկցիան:

3. Ծրագրային օպերացիոն համակարգերի բաղկացուցիչներ հանդիսացող ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները, որոնց կրիպտոգրաֆիկ հնարավորությունները չեն կարող փոփոխվել օգտագործողների կողմից, որոնք մշակվել են օգտագործողի կողմից ինքնուրույն տեղադրման համար առանց մատակարարի կողմից հետագա էական աջակցության, եւ որոնց տեխնիկական փաստաթղթերը (կրիպտոգրաֆիկ փոխակերպումների ալգորիթմների նկարագրություն, փոխգործության արձանագրություններ, ինտերֆեյսի նկարագրություն եւ այլն) հասանելի են:

4. Անհատական սմարթ-քարտեր (ինտելեկտուալ քարտեր)՝

ա) որոնց կրիպտոգրաֆիկ հնարավորությունները սահմանափակված են սույն ցանկի 5-8-րդ կետերում նշված սարքավորումներում կամ համակարգերում օգտագործմամբ.

բ) լայն համահասանելի կիրառության համար, որոնց կրիպտոգրաֆիկ

հնարավորություններն օգտագործողի համար անհասանելի են, եւ որոնք հատուկ մշակման արդյունքում իրենց վրա պահվող անհատական տեղեկությունների պաշտպանության սահմանափակ հնարավորություններ ունեն:

Ծանոթագրություն: Եթե ինտելեկտուալ քարտը կարող է կատարել մի քանի ֆունկցիա, ապա յուրաքանչյուր ֆունկցիայի հսկողական կարգավիճակը սահմանվում է առանձին:

5. Ընդունիչ ապարատուրա՝ ռադիոհեռարձակման, կոմերցիոն հեռուստատեսության կամ սահմանափակ լսարանին առանց թվային ազդանշանի ծածկագրման հեռարձակելու համար նախատեսված նույնանման կոմերցիոն ապարատուրայի համար՝ բացի բացառապես վիդեո կամ աուդիոալիքները կառավարելու եւ հեռարձակման պրովայդերներին հաշիվներն ուղարկելու կամ հաղորդումների հետ կապված տեղեկությունները հետ ուղարկելու համար ծածկագրում օգտագործելու դեպքերից:

6. Սարքավորումներ, որոնց կրիպտոգրաֆիկ հնարավորությունները հասանելի չեն օգտագործողի համար, որոնք հատուկ մշակված եւ կիրառության համար սահմանափակված են հետեւյալ եղանակներից ցանկացածով՝

ա) ծրագրային ապահովումը կատարվել է պատճենումից պաշտպանված ձեւով.

բ) հետեւյալներից ցանկացածի հասանելիությամբ՝

- միայն ընթերցման համար հասանելի տեղեկությունների կրիչի վրա պահպանվող՝ պատճենումից պաշտպանվող բովանդակության.

- ծածկագրված ձեւով կրիչների վրա պահվող տեղեկությունների, երբ տեղեկությունների այդ կրիչները նույնական հավաքածուներով առաջարկվում են բնակչությանը վաճառելու համար.

գ) հեղինակային իրավունքներով պաշտպանված աուդիո եւ վիդեոտեղեկատվության պատճենման հսկողության:

7. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) սարքավորումներ՝ բանկային կամ ֆինանսական գործառնությունների համար հատուկ մշակված եւ կիրառման համար

սահմանափակված:

Ծանոթագրություն: Ֆինանսական գործառնությունները ներառում են տրանսպորտային ծառայությունների եւ վարկավորման համար հավաքագրումները եւ վճարումները:

8. Քաղաքացիական նշանակության դյուրակիր կամ շարժական ռադիոէլեկտրոնային միջոցներ (օրինակ՝ բջջային կապի քաղաքացիական առեւտրային համակարգերում օգտագործելու համար), որոնք ունակ չեն միջանցիկ (այսինքն՝ բաժանորդից մինչեւ բաժանորդ) ծածկագրման:

9. Անլար ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, որոնք իրականացնում են տեղեկությունների ծածկագրում միայն անլար գործողության առավելագույն հեռավորությամբ ռադիոալիքում առանց ուժեղացման եւ 400 մ-ից պակաս վերահաղորդման՝ արտադրողի տեխնիկական պայմաններին համապատասխան:

10. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ, որոնք օգտագործվում են տեղեկատվական հեռահաղորդակցման համակարգերի տեխնոլոգիական ալիքների եւ կապի ցանցերի պաշտպանության համար:

11. Ապրանքներ, որոնց կրիպտոգրաֆիկ ֆունկցիան արգելափակված է արտադրողի կողմից:

Հավելված 2

«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները  
Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու  
եւ Մաքսային միության մաքսային տարածքից  
արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի

Ծանուցման ձեւ

Գրանցված է ռեեստրում «\_\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ. № \_\_\_\_\_

Կ.Տ. \_\_\_\_\_

(լիազոր մարմնի անձի ստորագրություն)

(Ա.Ա.Հ.)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքի (արտադրանքի)  
բնութագրերի մասին

1. Ապրանքի (արտադրանքի) անվանումը \_\_\_\_\_

2. Ապրանքի (արտադրանքի) նշանակությունը \_\_\_\_\_

3. Ապրանքն (արտադրանքն) արտադրողի վավերապայմանները \_\_\_\_\_

4. Օգտագործվող կրիպտոգրաֆիկ ալգորիթմները՝ 1-ին հավելվածի ապրանքի  
կատեգորիայի համարը

ա) \_\_\_\_\_

\_\_\_\_\_

բ) \_\_\_\_\_

\_\_\_\_\_

գ) \_\_\_\_\_

\_\_\_\_\_

5. Ապրանքի (արտադրանքի) այնպիսի ֆունկցիոնալ հնարավորությունների առկայությունը, որոնք նկարագրված չեն օգտագործողին տրամադրվող շահագործման փաստաթղթերում \_\_\_\_\_

6. Ծանուցման գործողության ժամկետը՝ մինչև « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_ թ.

7. Հայտատուի վավերապայմանները \_\_\_\_\_

\_\_\_\_\_

8. Լիազորված անձին ծանուցում ձեւակերպելու լիազորություններ տրամադրած՝ արտադրողի (պատրաստողի) փաստաթղթի վավերապայմանները (անհրաժեշտության դեպքում)

9. Ծանուցման ընդունման ամսաթիվը « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Կ.Տ. \_\_\_\_\_

(հայտատուի ստորագրությունը)

(Ա.Ա.Հ.)

Ծանոթագրություն. թույլատրվում է օգտագործել ձեւաթղթի դարձերեսը:

### Հավելված 3

«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները  
Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու  
եւ Մաքսային միության մաքսային տարածքից  
արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

#### Ծանուցումը գրանցելու կարգի մասին

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում են՝

- ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքի (արտադրանքի) բնութագրերի մասին ծանուցման ձեւակերպման կարգը,

- Մաքսային միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմին ծանուցումը գրանցման ներկայացնելու կարգը,

- գրանցված ծանուցումների մասին տեղեկությունները Մաքսային միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմինների կողմից կազմելու եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացնելու կարգը,

- համաձայնեցնող մարմիններում գրանցված ծանուցումների միասնական ռեեստրի տեղեկությունները Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակելու կարգը, ինչպես նաեւ այդ տեղեկությունների հասանելիության կարգը:

2. Ծանուցումը պատրաստողի ծանուցագիրն է այն ապրանքի (արտադրանքի) տեխնիկական եւ կրիպտոգրաֆիկ բնութագրերի մասին, որը ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոց է հանդիսանում կամ իր կազմում պարունակում է ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ, որոնք «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային



միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 1-ին հավելվածի գործողության տակ են ընկնում:

3. Ծանուցումը լրացվում է «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 11-րդ կետին համապատասխան՝ ըստ նշված Հիմնադրույթի 2-րդ հավելվածում բերված ձեւի:

Ծանուցումը լրացվում է ռուսերենով: Թույլատրվում է լատինատառ գրել տեխնոլոգիաների, արձանագրությունների, կրիպտոգրաֆիկ ալգորիթմների անվանումները եւ դրանց համընդհանուր ճանաչում ունեցող հապավումները, ապրանքը պատրաստողի վավերապայմանների անվանումները:

4. Ծանուցումը լրացվում է արտադրանքը պատրաստողի կամ արտադրանքը պատրաստողի կողմից լիազորված անձի կողմից (այսուհետ՝ հայտատու)՝ մեկ տեսակի ծածկագրման միջոցի համար մեկ անգամ՝ սեփական ապացույցների հիման վրա: Հայտատուն լրացնում է ծանուցման 1-9-րդ կետերը:

5. Ծանուցման մեջ կարող են լրացվել տեղեկություններ՝ կամ մեկ անուն արտադրանքի մասին, կամ նույնական ծածկագրման միջոցներ ունեցող միատեսակ ապրանքների (արտադրանքի) խմբի մասին:

Նույնական ծածկագրման միջոցները ֆունկցիոնալ ավարտուն ապրանքներ (արտադրանք) են, որոնք իրականացնում են միեւնույն կրիպտոգրաֆիկ ալգորիթմը, ունեն աշխատանքային կրիպտոգրաֆիկ բանալու միատեսակ առավելագույն թույլատրելի երկարություն, ֆունկցիոնալ հնարավորությունների միատեսակ հավաքակազմ, որոնք միեւնույն կրիպտոգրաֆիկ բանալին մուտքագրելու եւ միեւնույն մուտքային հաջորդականության դեպքում ապահովում են միեւնույն ելքային հաջորդականություն:

6. Ծանուցումը լրացնելիս «Հավելված 2», «Ծանուցման ձեւը» եւ «Ծանոթագրություն. թույլատրվում է օգտագործել ձեւաթղթի դարձերեսը» բառերը չեն գրվում:

7. 1-ին՝ «Ապրանքի (արտադրանքի) անվանումը» վավերապայմանում նշվում է

ապրանքի (արտադրանքի) կամ իր կազմում նույնական ծածկագրման միջոցներ ունեցող միատեսակ ապրանքի (արտադրանքի) խմբի առետրային, կոմերցիոն եւ (կամ) այլ ավանդական անվանումը եւ (կամ) ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների (արտիկուլների), ստանդարտների եւ այլ նման տեխնիկական եւ առետրային բնութագրերի մասին տեղեկություններ: Ծրագրային ապահովման համար նշվում է տարբերակը: Թույլատրվում է ավելացնել «եւ արտադրանքի պահեստամասերը»: Միատեսակ ապրանքների խմբի յուրաքանչյուր ապրանք (արտադրանք) նշվում է նոր տողից: Ապրանքների անվանումներից հետո թույլատրվում է նշվող հասկացությունների համար ծանոթագրություն ավելացնել նոր տողից:

8. 2-րդ՝ «Ապրանքի (արտադրանքի) նշանակությունը» վավերապայմանում ներկայացվում է ապրանքի (արտադրանքի) նկարագրությունը, դրա ֆունկցիաները:

9. 3-րդ՝ «Ապրանքը (արտադրանքը) պատրաստողի վավերապայմանները» վավերապայմանում նշվում են տվյալ արտադրանքը արտադրող կազմակերպության (կազմակերպությունների) անվանումը եւ իրավաբանական հասցեն, գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսի համարը, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում): Մաքսային միության անդամ պետությունների պատրաստողները նշում են նաեւ կազմակերպության գրանցման մասին տեղեկություններ (գրանցող մարմնի անվանումը, գրանցման ամսաթիվը, գրանցման համարը, հարկ վճարողի նույնականացման համարը), այլ անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաեւ նշվում են պատրաստողների գործարանների վավերապայմանները:

10. 4-րդ՝ «Օգտագործվող կրիպտոգրաֆիկ ալգորիթմները» վավերապայմանում նշվում են՝

- կրիպտոգրաֆիկ արձանագրության անվանումը,
- կրիպտոգրաֆիկ ալգորիթմի անվանումն ու նշանակությունը, կրիպտոգրաֆիկ բանալու առավելագույն երկարությունը,
- ծրագրային արտադրանքի տարբերակը,

- առանց ուժեղացման եւ վերահաղորդման անհաղորդալար գործողության առավելագույն հեռավորությունը՝ պատրաստողի տեխնիկական պայմաններին համապատասխան (կրիպտոգրաֆիկ ալգորիթմը անհաղորդալար ռադիոէլեկտրոնային սարքավորումներում օգտագործելու դեպքում),

- պատրաստողի կողմից արգելափակված կրիպտոգրաֆիկ ֆունկցիան (առկայության դեպքում):

Արձանագրությունների եւ կրիպտոգրաֆիկ ալգորիթմների անվանումները նշվում են յուրաքանչյուր կոնկրետ ֆունկցիան կատարելու համար առանձին:

Կրիպտոգրաֆիկ ալգորիթմների նկարագրությունը բերվում է աղյուսակում՝ «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 1-ին հավելվածի համապատասխան կետի համարի նշումով:

Թիվ	Կրիպտոգրաֆիկ ալգորիթմ	«Ծածկագրման միջոցները ներմուծելու եւ արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 1-ին հավելվածի կետի համարը
ա)		
բ)		
...		

11. 5-րդ՝ «Ապրանքի (արտադրանքի) այնպիսի ֆունկցիոնալ հնարավորությունների առկայությունը, որոնք նկարագրված չեն օգտագործողին տրամադրվող շահագործման փաստաթղթերում» վավերապայմանում նշվում են (առկայության դեպքում) չհայտարարագրված հնարավորությունները, որոնց օգտագործման ժամանակ կարող է տեղի ունենալ՝

- մշակվող տեղեկությունների գաղտնիության, հասանելիության կամ ամբողջականության խախտում,

- աուտենտիֆիկացիայի գործընթացների խախտում,

- միջամտություն՝ էլեկտրոնային թվային ստորագրությունն օգտագործելու մեխանիզմում:

Այս կետում նշվում է նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար միջոցների առկայությունը կամ բացակայությունը («ուստիկանական» ռեժիմ):

12. 6-րդ՝ «Ծանուցման գործողության ժամկետը» վավերապայմանում հայտատուի կողմից սահմանվում է ծանուցման գործողության ժամկետը՝ օր/ամիս/տարի ձեւաչափով:

13. 7-րդ՝ «Հայտատուի վավերապայմանները» վավերապայմանում նշվում է հայտատու-կազմակերպության անվանումը, ծանուցումը լրացնելու համար լիազորված անձի պաշտոնը, Ա.Ա.Հ-ն., գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսի համարը, ինչպես նաեւ էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում):

Մաքսային միության անդամ պետությունների հայտատուները նշում են նաեւ հայտատու-կազմակերպության գրանցման մասին տեղեկություններ (գրանցող մարմնի անվանումը, գրանցման ամսաթիվը, գրանցման համարը, հարկ վճարողի նույնականացման համարը):

14. 8-րդ՝ «Լիազորված անձին ծանուցում ձեւակերպելու լիազորություններ տրամադրած՝ արտադրողի (պատրաստողի) փաստաթղթի վավերապայմանները» վավերապայմանը լրացվում է, եթե ծանուցումը լրացնում եւ ներկայացնում է լիազորված անձը: Դրանում նշվում են ծանուցումը լրացնելու եւ գրանցման ներկայացնելու համար հայտատուին լիազորություններ տրամադրելու մասին պատրաստողի փաստաթղթի վավերապայմանները (լիազորագիրը, պայմանագիրը եւ այլն, փաստաթուղթը ստորագրելու համարը եւ ամսաթիվը):

15. 9-րդ՝ «Ծանուցման ընդունման ամսաթիվը» վավերապայմանում հայտատուի կողմից նշվում է ծանուցման ընդունման ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձեւաչափով:

16. Շարադրված բոլոր տեղեկությունները վավերացվում են հայտատուի ստորագրությամբ, որով հավաստվում է ներկայացված տեղեկությունների արժանահավատությունը եւ ամբողջականությունը, եւ կազմակերպության կնիքով (առկայության դեպքում): Հայտատուի ստորագրությունը վերծանվում է:

Մեծ ծավալով տեղեկությունների դեպքում տեքստը շարադրվում է ձեւաթղթի եւ յուրաքանչյուր հաջորդող թերթի դարձերեսի վրա, ընդ որում, ծանուցման յուրաքանչյուր հաջորդող թերթը վավերացվում է հայտատուի ստորագրությամբ եւ կնիքով (առկայության դեպքում):

17. Ծանուցման ձեւի լրացման եւ ծանուցման էլեկտրոնային պատճենի (փաստաթղթերի էլեկտրոնային օրինակների) կազմման համար ծրագրային ապահովումը տեղադրվում է Մաքսային միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմինների պաշտոնական կայքերում եւ (կամ) Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

18. Սույն Հիմնադրույթի 18-րդ կետում նշված ծրագրային ապահովումը հայտատուին թույլ է տալիս՝

լրացնել ծանուցման ձեւը՝ սույն Հիմնադրույթին համապատասխան,

կազմել ծանուցման տպագիր ձեւը եւ տպել այն,

կազմել ծանուցման էլեկտրոնային պատճենը՝ սույն Հիմնադրույթի 1-ին հավելվածին համապատասխան,

Ֆայլում պահել ծանուցման կազմված տպագիր ձեւը եւ էլեկտրոնային պատճենը:

19. Ծանուցումը գրանցելու համար հայտատուն ուղեկցող գրության հետ Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

ծանուցման ձեւը՝ երկու օրինակից՝ լրացված եւ ձեւակերպված սույն Հիմնադրույթին համապատասխան,

ծանուցման էլեկտրոնային պատճենը կրիչի վրա (կոմպակտ սկավառակ, Ֆլեշ

հիշողություն)՝ սույն Հիմնադրույթի 1-ին հավելվածում նշված ձեւաչափով,

հայտատուին պատրաստողի անունից գործելու իրավունք տրամադրող վավերացված (լեգալիզացված) փաստաթուղթը (ապոստիլ, հյուպատոսական վավերացում (լեգալիզացում)): Եթե նշված փաստաթուղթը կազմված է օտար լեզվով, ապա տվյալ փաստաթղթի բնօրինակին կամ նոտարական կարգով վավերացված պատճենին կցվում է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված այն պետության լեզվով թարգմանությունը, որի համաձայնեցնող մարմինը գրանցում է ծանուցումը:

Ծանուցումը երրորդ երկրի պատրաստող կազմակերպության կողմից ձեւակերպվելու դեպքում այն պետք է վավերացվի (լեգալիզացվի):

20. Ծանուցումը գրանցելու եւ Մաքսային միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմիններում գրանցված ծանուցումների միասնական ռեեստրում դրա մասին տեղեկությունները Հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակելու ժամկետը չպետք է գերազանցի տասը աշխատանքային օրը՝ հաշվարկված ծանուցումը գրանցման համար մուտքագրվելու օրվանից:

21. Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմինն իրականացնում է ծանուցման ուսումնասիրություն եւ գրանցում:

Ծանուցումը գործում է Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմնի կողմից դրա գրանցման օրվանից:

22. Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմինը պարբերաբար, բայց փաստաթղթերը հայտատուի կողմից ներկայացնելու պահից յոթ աշխատանքային օրվանից ոչ ուշ Հանձնաժողով է ներկայացնում գրանցված ծանուցումների մասին տվյալների ֆայլը՝ համաձայն սույն Հիմնադրույթի 2-րդ հավելվածի: Ֆայլը պետք է պարունակի գրանցված ծանուցումների մասին տվյալներ՝ տվյալները վերջին անգամ Հանձնաժողով ներկայացնելու պահից:

Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմինները պատասխանատվություն են կրում գրանցված ծանուցումների մասին տվյալների լիարժեքության եւ հավաստիության համար:

23. Հանձնաժողովը համաձայնեցնող մարմնի կողմից գրանցված ծանուցումների մասին տվյալները ստանալու պահից երեք աշխատանքային օրվանից ոչ ուշ այդ տվյալները տեղադրում է Հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում պաշտոնական կայքում տեղադրված՝ գրանցված ծանուցումների մասին տվյալների լիարժեքության եւ հավաստիության համար:

24. Հանձնաժողովը սահմանում է գրանցված, չեղյալ հայտարարված ծանուցումների մասին տվյալները Մաքսային միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմինների կողմից ներկայացնելու կարգը:

25. Հանձնաժողովը թարմացնում է ծանուցումների միասնական բազան եւ իր պաշտոնական կայքում իրականացնում է ծանուցումների հրապարակում:

Ծանուցումների միասնական բազայի տվյալների թարմացումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմինների կողմից տրամադրված տվյալների հիման վրա եւ իրականացվում է համաձայնեցնող մարմինների կողմից անհրաժեշտ տվյալները ներկայացվելու օրվանից երեք աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Հանձնաժողովի պաշտոնական կայքում տրամադրվում է ծանուցումների մասին տվյալներին ծանոթանալու եւ դրանք որոնելու հնարավորություն:

26. Հանձնաժողովի պաշտոնական կայքում ծանուցումների միասնական ռեեստրում տեղեկությունների հրապարակման ձեւը ներկայացված է սույն Հիմնադրույթի 3-րդ հավելվածում:

Հավելված 1

«Ծանուցումը գրանցելու կարգի մասին»  
հիմնադրույթի

**Համաձայնեցնող մարմին ներկայացվող ծանուցման ֆայլի կառուցվածքը**

Ֆայլը պետք է ներկայացվի \*.xls ձևաչափով: Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմին ներկայացվող ծանուցման ֆայլի տվյալների կառուցվածքի նկարագրությունը ներկայացված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

Համաձայնեցնող մարմին ներկայացվող ծանուցման ֆայլի տվյալների կառուցվածքի  
նկարագրությունը

Թիվ	Անվանումը	Դաշտի տեսակը	Իմաստային բովանդակությունը	Պարտադիր լինելը
1	Համարը	Սիմվոլային	Գրանցման համարը	Ոչ
2	Ապրանքի (արտադրանքի) անվանումը	Սիմվոլային	Ապրանքի (արտադրանքի) անվանումը	Այո
3	Ապրանք (արտադրանք) պատրաստողը	Սիմվոլային	Ապրանք (արտադրանք) պատրաստողը	Այո
4	Ծանուցման գրանցման ամսաթիվը	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Ծանուցման գրանցման ամսաթիվը	Ոչ
5	Գործողության ժամկետը	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Ծանուցման գործողության ժամկետը	Այո
6	Կարգավիճակը	Տրամաբանական	Ծանուցման կարգավիճակն ունի հետեյալ նշանակությունները՝ Գործում է/ Չեղյալ է	Ոչ



			հայտարարված	
7	Նույնականացուցիչ*	Սիմվոլային	Ապրանքի (արտադրանքի) նույնականացուցիչը 11 սիմվոլով ծածկագիր	Այո

\* «Նույնականացուցիչ» դաշտը լրացվում է «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 2-րդ հավելվածում նշված ծանուցման ձեւի 4-րդ՝ «Օգտագործվող կրիպտոգրաֆիկ ալգորիթմներ» կետում գրառված տվյալների հիման վրա: Նշանակությունը ձեւավորվում է 11 սիմվոլներից, յուրաքանչյուր սիմվոլը ստուգվում է «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 1-ին հավելվածի նշված կետին համապատասխան: Եթե նույնականացուցիչի սիմվոլի հերթական համարի նշանակությունը հավասար է «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթի 1-ին հավելվածի կետի համարին, ապա սիմվոլին տրվում է միավորի նշանակություն, հակառակ դեպքում՝ զրոյի:

## Հավելված 2

«Ծանուցումը գրանցելու կարգի մասին»

հիմնադրույթի

### **Եվրասիական տնտեսական հանձնաժողով ներկայացվող ծանուցման մասին տվյալների ֆայլի կառուցվածքը**

Ֆայլը պետք է ներկայացվի \*.xls ձևաչափով: Մաքսային միության անդամ պետության համաձայնեցնող մարմին ներկայացվող ծանուցման ֆայլի տվյալների կառուցվածքի նկարագրությունը ներկայացված է 2-րդ աղյուսակում:

Գրանցված եւ չեղյալ հայտարարված ծանուցումների մասին տվյալների ֆայլը պետք է ունենա հետեւյալ անվանումը՝ nXX\_DD\_MM\_YYYY.XLS, որտեղ՝

n –ը ծանուցման հատկանիշն է,

XX –ը Մաքսային միության անդամ պետության հատկանիշն է,

BY –ը Բելառուսի Հանրապետությունն է,

KZ –ը Ղազախստանի Հանրապետությունն է,

RU –ն Ռուսաստանի Դաշնությունն է.

DD\_MM\_YYYY –ը տվյալների ուղարկման օրացուցային օրվա թվային նշումն է, որտեղ՝ DD-ն օրն է, MM –ը՝ ամիսը, YYYY –ը՝ տարին:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության համաձայնեցնող մարմնի կողմից ուղարկվող՝ մինչեւ 2010 թվականի մարտի 15-ը գրանցված ծանուցումների մասին տվյալների ֆայլը պետք է ունենա հետեւյալ անվանումը՝ nRU\_15\_03\_2010.xls:

Ֆայլը պետք է պարունակի գրանցված եւ չեղյալ հայտարարված ծանուցումների մասին տվյալներ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տվյալները վերջին անգամ ներկայացնելու պահից:

## Ծանուցման մասին տեղեկությունների կառուցվածքի նկարագրությունը

NN ը/կ	Անվանումը	Դաշտի տեսակը	Իմաստային բովանդակությունը	Պարտադիր լինելը
1.	Համարը	Սիմվոլային՝ XXNNNNNNNNNN ձեռագրված, որտեղ XX –ը պետության հատկանիշն է, NNNNNNNNNN –ը՝ հերթական համարը:	Գրանցման համար: Դաշտի նշանակությունը պետք է լինի ունիկալ	Այո
2.	Այրանքի (արտադրանքի) անվանումը	Սիմվոլային	Այրանքի (արտադրանքի) անվանումը	Այո
3.	Այրանքի (արտադրանքի) գլխավոր պատրաստողը	Սիմվոլային	Այրանք (արտադրանք) պատրաստողը	Այո (գրանցման դեպքում)
4.	Ծանուցման գրանցման ամսաթիվը	Ամսաթիվ՝ օր/ամիս/տարի ձեռագրված	Ծանուցման գրանցման ամսաթիվը	Այո (գրանցման դեպքում)
5.	Գործողության ժամկետը	Ամսաթիվ՝ օր/ամիս/տարի ձեռագրված	Ծանուցման գործողության ժամկետը	Այո (գրանցման դեպքում)
6.	Նույնականացուցիչ	Սիմվոլային	Այրանքի (արտադրանքի) նույնականացուցիչը 11 սիմվոլով ծածկագիր	Այո (գրանցման դեպքում)
7.	Կարգավիճակը	Տրամաբանական	Ծանուցման կարգավիճակն ունի հետեյալ նշանակությունները՝ Գործում է/ Չեղյալ է հայտարարված	Այո
8.	Չեղյալ հայտարարելու ամսաթիվը	Ամսաթիվ՝ օր/ամիս/տարի ձեռագրված	Ծանուցումը չեղյալ հայտարարելու ամսաթիվը	Այո (չեղյալ հայտարարելու դեպքում)

Հավելված 3

«Ծանուցումը գրանցելու կարգի մասին» հիմնադրույթի

**Ծանուցումների միասնական ռեեստրի տեղեկությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակելու ձեւը**

Թիվ	Ապրանքի (արտադրանքի) անվանումը	Ապրանքի (արտադրանքի) գլխավոր պատրաստողը	Ծանուցման գրանցման ամսաթիվը	Գործողության ժամկետը	Նույնականացուցիչ	Կարգավիճակը	Չեղյալ հայտարարելու ամսաթիվը

\* «Կարգավիճակը» սյունակը ունի երկու նշանակություն՝ «Գործում է»/ «Չեղյալ է հայտարարված», «Կարգավիճակը» սյունակում «Չեղյալ է հայտարարված» նշանակությունը ներառելու դեպքում «Չեղյալ հայտարարելու ամսաթիվը» սյունակում ներառվում է այդ տեղեկությունները Մաքսային միության պաշտոնական կայքում տեղադրելու ամսաթիվը: Ընդ որում, տողն առանձնացվում է գույնով (մոխրագույն երանգով):

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲՆՕՐԻՆԱԿՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին եւ այլ միջազգային ակտերին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված այն իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են Ապրանքների միասնական ցանկի 2.20-րդ բաժնում նշված այն մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ներմուծումը եւ արտահանումը, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ, ինչպես նաեւ տարածվում է այն ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այդպիսի ապրանքների ներմուծում եւ արտահանում անձնական օգտագործման համար:

3. Մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի

Եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին):

4. Լիցենզիա ստանալը չի պահանջվում մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների արտահանման համար Մաքսային միության անդամ պետության այն պետական մարմնի կողմից տրված թույլատրագրի առկայության դեպքում, որը մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

Երրորդ երկրներում ցուցահանդեսներ, պրեզենտացիաներ կազմակերպելու նպատակով մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ժամանակավոր արտահանման համար.

Երրորդ երկրներում վերականգնման աշխատանքներ եւ գիտական հետազոտություններ իրականացնելու նպատակով մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ժամանակավոր արտահանման համար.

Երրորդ երկրներում հյուրախաղային-համերգային գործունեություն իրականացնելու եւ մշակութային հանդիսադիր միջոցառումներ անցկացնելու նպատակով մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման համար.

Երրորդ երկրներում դատական գործընթացներում օգտագործելու նպատակով մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ժամանակավոր արտահանման համար.

Մաքսային միության մաքսային տարածք ժամանակավորապես ներմուծված

Երրորդ երկրների մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների արտահանման համար.

Ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով մշակութային արժեքների, արխիվային փաստաթղթերի բնօրինակների արտահանման դեպքում:

5. Մաքսային միության մաքսային տարածքից առանց հետադարձ ներմուծման պարտավորության ենթակա չեն արտահանման մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակները, որոնք՝

ներկայացնում են պատմական, գեղարվեստական, գիտական կամ այլ մշակութային արժեք եւ, Մաքսային միության անդամ պետությունների գործող օրենսդրություններին համապատասխան, դասվել են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության ազգերի մշակութային եւ վավերագրական ժառանգության առավել արժեքավոր օբյեկտների շարքին՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից,

պահպանվում են Մաքսային միության անդամ պետությունների կողմից եւ նրանց կողմից Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրություններով սահմանված կարգով ներառված են պահպանական ցուցակներում եւ ռեեստրներում՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից,

մշտապես պահպանվում են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության պետական եւ համայնքային թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, մշակութային արժեքների այլ պետական պահոցներում: Պետական լիազոր մարմինների որոշմամբ սույն կանոնը կարող է տարածվել այլ թանգարանների, արխիվների, գրադարանների վրա:

6. Երրորդ երկրներում Մաքսային միության անդամ պետությունների ներկայացուցչությունները գտնվելու երկրում իրականացնում են դիվանագիտական պաշտպանություն՝ Մաքսային միության մաքսային տարածքից ժամանակավոր

դուրս բերված մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների նկատմամբ:

7. Ժամանակավոր արտահանման ժամկետը սահմանում է Մաքսային միության անդամ պետության այն պետական մարմինը, որը մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների արտահանման նկատմամբ իրականացնում է հսկողություն:

8. Անօրինական արտահանված եւ անօրինական ներմուծված մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների վերադարձը իրականացվում է միջազգային իրավական ակտերին եւ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրություններին համապատասխան:

9. Արտահանման համար հայտագրված, ինչպես նաեւ ժամանակավոր արտահանումից հետո վերադարձված մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների փորձաքննությունը կազմակերպում են Մաքսային միության անդամ պետությունների պետական մարմինները:

10. Լիցենզիա ստանալը չի պահանջվում մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ներմուծման համար:

11. Արգելվում է այն մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ներմուծումն ու արտահանումը, որոնց նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Այդպիսի մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակները ենթակա են արգելանքի վերցման:

12. Լիցենզիայի ձեւակերպման համար հայտատուի կողմից լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:



13. Հայտատուն լրացուցիչ ներկայացնում է.

– արտահանվող մշակութային արժեքների (արխիվային փաստաթղթերի) ցուցակը (գույքացուցակը)՝ երկու օրինակից,

– 10x15 սմ չափսի երկու լուսանկար, որոնք արտահանվող յուրաքանչյուր մշակութային արժեքի պրոյեկցիային առավել բնորոշ են, կամ արտահանվող արխիվային փաստաթղթի երկու պատճեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ հենց մշակութային արժեքը (արխիվային փաստաթուղթը),

– մշակութային արժեքի (արխիվային փաստաթղթի) սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթը:

14. Եթե, Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, լիցենզիա տալու մասին որոշումն ընդունվում է լիազոր մարմնի կողմից Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության այն մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 13-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, որը համաձայնեցնում է լիցենզիայի տրամադրումը (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին):

15. Հայտատուի կողմից լիազոր եւ համաձայնեցնող մարմիններ ներկայացվող փաստաթղթերը պետք է հաստատվեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

16. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

17. Լիցենզիա ստանալը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը)՝ բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից, կարող է մերժվել հետեւյալ դեպքերում.

1) մշակութային արժեքի (արխիվային փաստաթղթի բնօրինակի) վիճակը թույլ չի տալիս փոխել դրա պահպանման պայմանները,

2) այն երկրում, որտեղ նախատեսվում է դուրս բերել մշակութային արժեքը (արխիվային փաստաթղթի բնօրինակը), բացակայում են դրա պահպանվածության ապահովման երաշխիքները:

18. Հին (անտիկվար) զենքի ներմուծումը եւ արտահանումն իրականացվում են այդ թվում «Քաղաքացիական եւ ծառայողական զենքը, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու փամփուշտները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրելու կարգի մասին» հիմնադրույթով նախատեսված պահանջներին համապատասխան:

19. Մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ներմուծումը Մաքսային միության մաքսային տարածք ենթակա է գրանցման, եթե դա նախատեսված է Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

20. Եթե լիցենզիա տրամադրելու մասին հայտը ձեւակերպվում է մի քանի նմուշի այն մշակութային արժեքների, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերի եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակների ներմուծման կամ արտահանման համար, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման տասանիշ ծածկագրերից մեկին, ապա լիցենզիա տրամադրելու մասին հայտին կից ձեւակերպվում է հավելված:

21. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ, ԱՐՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ  
ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ  
ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ  
ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ, արյուն եւ դրա բաղադրամասեր Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրին առնչվող միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթի համաձայն, որը մշակվել է հաշվի առնելով Մարդու բջիջների, հյուսվածքների եւ օրգանների փոխապատվաստման վերաբերյալ ԱՀԿ ղեկավար սկզբունքները (2008 թվականի նոյեմբերի 20-ի EB 124/15), մարդու օրգանները եւ հյուսվածքները չեն կարող լինել առքի, վաճառքի եւ այլ հատուցելի գործարքների առարկա:

3. Հիմնադրույթը տարածվում է այն իրավաբանական անձանց վրա, որոնք իրականացնում են այն Ապրանքների միասնական ցանկի 2.21-րդ բաժնում նշված՝ մարդու օրգանների եւ (կամ) հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի ներմուծում եւ (կամ) արտահանում, այդ թվում՝ տարանցիկ փոխադրման նպատակներով, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ (այսուհետ՝ հայտատուներ):

Հիմնադրույթը չի տարածվում այն իրավաբանական անձանց վրա, որոնք իրականացնում են ախտորոշման եւ գիտական նպատակներով նախատեսված կամ կենսաբժշկական հետազոտությունների անցկացման ընթացքում ստացված՝ մարդու բջիջների, հյուսվածքների, կենսաբանական հեղուկների, արտազատուկների եւ կենսագործունեության արգասիքների, ֆիզիոլոգիական ու ախտաբանական արտաթորանքի, քսուքների, քերուկների, վլացուկների այնպիսի նմուշների ներմուծում եւ արտահանում, որոնց ներմուծման եւ արտահանման կարգավորումն իրականացվում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4. Մարդու օրգանների եւ (կամ) հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի՝ բացառությամբ հեմոպոետիկ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի, ներմուծումը եւ (կամ) արտահանումն այն դեպքում, երբ դրանք տեղափոխվում են ոչ ազգակցական փոխպատվաստում իրականացնելու նպատակով, իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվող լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազորված մարմին):

Հեմոպոետիկ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի ներմուծումը եւ արտահանումն այն դեպքում, երբ դրանք տեղափոխվում են ոչ ազգակցական փոխպատվաստում իրականացնելու նպատակով, իրականացվում է Մաքսային միության անդամ պետության համապատասխան պետական լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացության (թույլատրագրի) հիման վրա՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Հեմոպոետիկ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի ներմուծման եւ (կամ) արտահանման վերաբերյալ եզրակացությունը (թույլատրագիրը)՝ ոչ ազգակցական փոխպատվաստում իրականացնելու նպատակով դրանց տեղափոխման դեպքում, Մաքսային միության անդամ պետության համապատասխան պետական լիազորված մարմնի կողմից տրամադրվում է հայտատուի կողմից նշված, սակայն մեկ տարին չգերազանցող ժամկետով:

Ոչ ազգակցական փոխպատվաստում իրականացնելու նպատակով

հեմոպոետիկ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի ներմուծում եւ (կամ) արտահանում իրականացնող իրավաբանական անձինք պարտավոր են հեմոպոետիկ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի ներմուծում եւ (կամ) արտահանում իրականացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Մաքսային միության անդամ պետության համապատասխան պետական լիազորված մարմին տեղեկացնել հեմոպոետիկ ցողունային բջիջների եւ ոսկրածուծի ներմուծման եւ (կամ) արտահանման յուրաքանչյուր դեպքի մասին:

5. Մարդու օրգանների եւ (կամ) հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի ներմուծման եւ (կամ) արտահանման լիցենզիաները տրամադրվում են Մաքսային միության մաքսային սահմանով մեկանգամյա տեղափոխման համար:

6. Ֆիզիկական անձանց կողմից մարդու օրգանների եւ (կամ) հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի ներմուծումը եւ (կամ) արտահանումը չի թույլատրվում:

7. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազորված մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Հայտատուն ներկայացնում է նաեւ երրորդ երկրների այն պետական մարմինների թույլտվությունները, որոնք մարդու օրգանների եւ (կամ) հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի ներմուծման եւ (կամ) արտահանման հնարավորության մասին որոշում կայացնելու լիազորություն ունեն:

Փաստաթղթերը ներկայացվում են Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով կամ այլ լեզվով՝ Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով թարգմանությամբ՝ հաստատված Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետի յոթերորդ պարբերությամբ սահմանված կարգով:

8. Եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրության համաձայն լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է Մաքսային միության անդամ պետության՝ գործադիր իշխանության մեկ այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն, Հիմնադրույթի 7-րդ կետով

սահմանված փաստաթղթերից բացի, լիազորված մարմին է ներկայացնում մարդու օրգանների եւ (կամ) հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի ներմուծումը կամ արտահանումը թույլատրող փաստաթուղթ: Ընդ որում, հայտատուն լիազորված մարմնի կողմից լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնելու համար նախատեսված մարմին է ներկայացնում նաեւ Հիմնադրույթի 7-րդ կետում նշված փաստաթղթերը, Մաքսային միության անդամ պետության պետական իշխանության այն մարմին, որը համաձայնեցնում է լիցենզիայի տրամադրումը:

9. Լիազորված մարմինը 3-օրյա ժամկետում որոշում է կայացնում մարդու հյուսվածքների, արյան եւ դրա բաղադրամասերի ներմուծման եւ (կամ) արտահանման համար լիցենզիա տրամադրելու կամ լիցենզիայի տրամադրումը մերժելու վերաբերյալ, իսկ մարդու օրգանների դեպքում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

10. Լիցենզիայի տրամադրումը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը), բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից, կարող է մերժվել Հիմնադրույթի 7-րդ եւ 8-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում:

11. Լիազորված մարմինն իրավունք ունի տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՁԵՆՔԸ, ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ  
(ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ) ՄԱՍԵՐՆ ՈՒ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾԵԼՈՒ, ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ  
ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. «Քաղաքացիական եւ ծառայողական զենքը, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու փամփուշտները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրի հետ կապված միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված այն իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք Մաքսային միության մաքսային տարածք ներմուծում, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանում եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրում են ապրանքների Միասնական ցանկի 2.22-րդ բաժնում նշված այն քաղաքացիական եւ ծառայողական զենքը, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու փամփուշտները, (այսուհետ՝ հայտատուներ), որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ, ինչպես նաեւ այն ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են այդպիսի ապրանքների ներմուծում, արտահանում եւ տարանցիկ փոխադրում անձնական օգտագործման համար:

3. Ձեռքի ներմուծումը կամ արտահանումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրված լիցենզիաների հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին), ինչպես նաև զենքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված՝ զենքի ներմուծման կամ արտահանման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

4. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

5. Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է նաև՝

համապատասխանության սերտիֆիկատը կամ զենքի՝ ներմուծումից հետո սահմանված կարգով դրա սերտիֆիկացման անցկացումը հաստատող փաստաթուղթը,

առողջապահության ոլորտի լիազոր մարմնի կողմից տրված փաստաթուղթը՝ մարդու օրգանիզմի վրա զենքի ախտահարող գործոնների ազդեցության թույլատրելիության մասին:

6. Եթե Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումն ընդունվում է լիազոր մարմնի կողմից Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Հիմնադրույթի 5-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաև Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնում է Մաքսային միության անդամ պետության գործադիր իշխանության այն մարմին, որը համաձայնեցնում է լիցենզիայի տրամադրումը:

7. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

8. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված



լինեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետի ութերորդ պարբերությամբ սահմանված կարգով:

9. Այն դեպքում, եթե լիցենզիա տրամադրելու մասին հայտը ձեռագրավում է մի քանի տեսակների, տիպերի եւ մոդելների զենքի ներմուծման կամ արտահանման համար, որոնք համապատասխանում են ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի դասակարգման մեկ տասնանիշ ծածկագրին, ապա լիցենզիա տրամադրելու հայտին կից ձեռագրավում է հավելված:

10. Մինչեւ 1899 թվականն արտադրված հրազենի, նետողական եւ օդաճնշիչ զենքի (բացառությամբ կենտրոնադիր բռնկիչով միասնական փամփուշտներով հրաձգության համար արտադրված հրազենի), ինչպես նաեւ մինչեւ 1945 թվականի վերջն արտադրված այլ սառը զենքի (այսուհետ՝ անտիկվար զենք) ներմուծումը եւ արտահանումն իրականացվում են «Մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթով նախատեսված պահանջներին համապատասխան:

11. Մշակութային արժեք ունեցող եւ անտիկվար զենքի շարքին չդասվող զենքի ներմուծումը եւ արտահանումն իրականացվում են նաեւ «Մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը եւ արխիվային փաստաթղթերի բնօրինակները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթով նախատեսված պահանջներին համապատասխան:

12. Զենքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող Մաքսային միության անդամ պետության պետական մարմնի կողմից տրվող եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում լիցենզիայի ստացում չի պահանջվում՝

երրորդ երկրում անձնական օգտագործման նպատակով ձեռք բերված զենքը ֆիզիկական անձանց կողմից Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը

համապատասխան.

մարզական միջոցառումներին մասնակցելու նպատակով ֆիզիկական անձանց կամ մարզական կազմակերպությունների կողմից զենքի ժամանակավոր ներմուծման կամ ժամանակավոր արտահանման համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

որսորդությանը մասնակցելու նպատակով ֆիզիկական անձանց կողմից զենքի ժամանակավոր ներմուծման եւ ժամանակավոր արտահանման համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

մշտական բնակության վայր մեկնող ֆիզիկական անձանց կողմից զենքի արտահանման համար եւ մշտական բնակության վայր մուտք գործող ֆիզիկական անձանց կողմից զենքի ներմուծման համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

Մաքսային միության տարածքից դուրս անցկացվող ցուցահանդեսներին մասնակցելու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից զենքի ժամանակավոր արտահանման համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

Մաքսային միության մաքսային տարածքում անցկացվող ցուցահանդեսներին մասնակցելու նպատակով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից զենքի ժամանակավոր ներմուծման համար՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

զենքին կառուցվածքով նման արտադրատեսակների ներմուծման եւ արտահանման համար՝ Հիմնադրույթի N 1 հավելվածին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ.

մշակութային արժեք ունեցող եւ անտիկվար զենքի շարքին չդասվող զենքի ներմուծման եւ արտահանման համար.

համապատասխանության հաստատման (համապատասխանության սերտիֆիկացման կամ հայտարարագրման) համար փորձարկումներ

իրականացնելու նպատակով զենք ներմուծելու համար .

պատմամշակութային միջոցառումներին մասնակցելու նպատակով ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից անտիկվար զենքի կրկնօրինակների եւ ռեպլիկների ժամանակավոր ներմուծման եւ արտահանման համար, եթե այլ բան նախատեսված չէ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ:

Անտիկվար զենքի կրկնօրինակ ասելով՝ ենթադրվում է անտիկվար կամ այլ տեսակի զենքի իսկական մասեր չպարունակող զենք, որը պատրաստված է՝ ըստ անտիկվար զենքի բնօրինակի կամ նմուշի գծագրերի՝ դրա կառուցվածքի, արտաքին տեսքի եւ գեղարվեստական մշակման ճշգրիտ կամ ըստ մասշտաբի վերարտադրման պայմանով:

Անտիկվար զենքի ռեպլիկ ասելով՝ ենթադրվում է գեղարվեստական ստեղծագործության եւ դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշ համարվող մշակութային արժեք հանդիսացող զենք, որը պատրաստված է՝ ըստ անտիկվար զենքի բնօրինակի, գծագրերի կամ նմուշի նկարագրության՝ կառուցվածքի, արտաքին տեսքի կամ գեղարվեստական մշակման ստեղծագործական տարափոխումով:

13. Զենքի տարանցիկ փոխադրումը ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից իրականացվում է առանց լիցենզիայի ձեւակերպման՝ զենքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող Մաքսային միության անդամ պետությունների պետական մարմինների կողմից տրվող եզրակացությունների (թույլատրագրերի) հիման վրա՝ Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

14. Լիցենզիա ստանալը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը), Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից բացի, կարող է մերժվել, եթե Մաքսային միության անդամ պետությանը կարող է հասցվել տնտեսական, քաղաքական կամ ռազմական վնաս:

15. Լիազոր մարմինն իրավասու է տալու պարզաբանումներ՝ լիցենզիայի

տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

Հավելված 1

«Քաղաքացիական եւ ծառայողական զենքը, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու փամփուշտները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցիկ փոխադրելու կարգի մասին» հիմնադրույթի

**Ցանկ**

**քաղաքացիական եւ ծառայողական զենքին կառուցվածքով նման արտադրատեսակների**

Հ/ա N°	Անվանումը	ՄՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիր
1	Մանրակերտեր, այդ թվում՝ մասսա-գաբարիտային մանրակերտերը՝ սահմանված կարգով սերտիֆիկացված	
2	Աղեղներ եւ արբալետներ՝ սահմանված կարգով սերտիֆիկացված	

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

ԸՍՏ ՎԱՌԵԼԻՔԱԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՀԱՆՔԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒ  
ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ՝ ԸՆԴԵՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԻ  
ՄԱՍԻՆ

1. «Ըստ վառելիքաէներգետիկ եւ հանքային հումքի շրջանների ու հանքավայրերի՝ ընդերքի վերաբերյալ տեղեկությունները Մաքսային միության մաքսային տարածքից դուրս բերելու կարգի մասին» հիմնադրույթը (այսուհետ՝ Հիմնադրույթ) մշակվել է «Ապրանքների արտաքին առևտրի ոլորտում լիցենզավորման կանոնների մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) եւ «Միասնական մաքսային տարածքում երրորդ երկրների նկատմամբ ապրանքների արտաքին առևտրի հետ կապված միջոցների սահմանման եւ կիրառման կարգի մասին» 2009 թվականի հունիսի 9-ի համաձայնագրին համապատասխան:

2. Հիմնադրույթի նպատակներով՝ ըստ վառելիքաէներգետիկ եւ հանքային հումքի շրջանների ու հանքավայրերի՝ ընդերքի վերաբերյալ տեղեկություններ (այսուհետ՝ ընդերքի վերաբերյալ տեղեկություններ) ասելով՝ ենթադրվում են ապրանքների Միասնական ցանկի 2.23-րդ բաժնում թվարկված այն դիրքերը, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ (բացառությամբ հանրամատչելի տեղեկությունների):

3. Հիմնադրույթը տարածվում է որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտներ գրանցված այն իրավաբանական անձանց եւ ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են Մաքսային միության մաքսային տարածքից ընդերքի մասին տեղեկությունների դուրսբերում (այսուհետ՝ հայտատուներ), ինչպես նաեւ այն ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են ընդերքի մասին

տեղեկությունների դուրսբերում անձնական օգտագործման համար:

4. Ընդերքի մասին տեղեկությունների դուրսբերումն իրականացվում է Մաքսային միության այն անդամ պետության պետական լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի հիման վրա, որի տարածքում գրանցված է հայտատուն (այսուհետ՝ լիազոր մարմին), եւ միայն Մաքսային միության այն անդամ պետության տարածքից, որից ծագում են տվյալ տեղեկությունները:

5. Ընդերքի մասին տեղեկությունների դուրսբերումը ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար արգելվում է:

6. Լիցենզիայի ձեւակերպման համար լիազոր մարմին են ներկայացվում Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

7. Հայտատուն ներկայացնում է նաեւ ընդերքի մասին տեղեկությունների օրինականությունը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաեւ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

8. Եթե լիցենզիա տրամադրելու մասին որոշումը, Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, ընդունվում է լիազոր մարմնի կողմից Մաքսային միության տվյալ անդամ պետության գործադիր իշխանության այլ մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա հայտատուն Մաքսային միության անդամ պետության լիցենզիայի տրամադրումը համաձայնեցնող պետական իշխանության մարմին է ներկայացնում Հիմնադրույթի 7-րդ կետում նշված փաստաթղթերը, ինչպես նաեւ Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

9. Համաձայնեցնող մարմին ներկայացվող փաստաթղթերի ուսումնասիրման ժամկետը սահմանվում է Մաքսային միության անդամ պետության կողմից:

10. Լիցենզիա ստանալը (լիցենզիա ստանալու մասին հայտի համաձայնեցումը), բացի Համաձայնագրի 3-րդ հոդվածի 6-րդ կետում նշված հիմքերից, կարող է մերժվել, եթե ընդերքի մասին տեղեկությունների դուրսբերումը Մաքսային միության անդամ պետությանը կարող է հասցնել տնտեսական, քաղաքական կամ ռազմական վնաս:

11. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերը պետք է վավերացված լինեն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով:

12. Լիազոր մարմինը իրավասու է տալու պարզաբանումներ (եզրակացություններ)՝ լիցենզիայի տրամադրման հարցերի վերաբերյալ: Տրված պարզաբանումների (եզրակացությունների) մասին տեղեկություններն ուղարկվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողով:



**Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի առանձին որոշումներում կատարվող  
փոփոխությունները**

1. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մաքսային միության միասնական ոչ սակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 132 որոշման մեջ՝

1-ին կետում «ԵվրԱզԷՍ-ի միջպետխորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշմամբ հաստատված» բառերը հանել.

2-րդ կետում «ԵվրԱզԷՍ-ի միջպետխորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշմամբ հաստատված» բառերը հանել.

2. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մաքսային միության միասնական ոչ սակագնային կարգավորման համակարգի գործունեության ապահովման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի թիվ 168 որոշման մեջ՝

- 1) 3-րդ կետի երկրորդ պարբերության մեջ «2.18, 2.24,» թվերը հանել.
- 2) 6-րդ և 7-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած.
- 3) թիվ 5 հավելվածի աղյուսակը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

Ապրանքների ցանկի (կատեգորիայի) համարը	Նկարագրությունը
01	Օգոնաքայքայիչ նյութեր եւ դրանք պարունակող արտադրանք
02	Բոյսերի պաշտպանության միջոցներ
03	Վտանգավոր թափոններ
04	Հանքագիտության, հնէաբանության կոլեկցիոն նյութեր, բրածո կենդանիների ոսկորներ
06	Կենդանի վայրի կենդանիներ, առանձին վայրի բոյսերի ու վայրի դեղահումք
08	Հազվագյուտ եւ անհետացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանիների եւ վայրի բոյսերի տեսակներ, դրանց մասերը եւ (կամ) դերիվատները, որոնք ներառված են Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքերում
09	Թանկարժեք մետաղներ եւ թանկարժեք քարեր
10	Չմշակված թանկարժեք մետաղներ, թանկարժեք մետաղների ջարդոն եւ թափոններ, թանկարժեք մետաղների հանքաքարեր ու խտահանքեր եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքներ
11	Հանքային հումք
12	Թմրամիջոցներ, հոգեներգործուն նյութեր եւ դրանց պրեկուրսորները
13	Թմրամիջոցների եւ հոգեներգործուն նյութերի պրեկուրսորներ չհանդիսացող թունավոր նյութեր
16	Ռադիոէլեկտրոնային միջոցներ եւ (կամ) բարձր հաճախականություն ունեցող քաղաքացիական նշանակության, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքավորումներ
17	Տեղեկությունները ոչ հրապարակային եղանակով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ
19	Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ
20	Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության մշակութային արժեքներ, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթեր, արխիվային փաստաթղթերի բնօրինակներ
21	Մարդու օրգաններ ու հյուսվածքներ, արյուն եւ դրա բաղադրիչները
22	Ծառայողական եւ քաղաքացիական զենք, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերը եւ դրա համար նախատեսված

	փամփուշտները
23	Տեղեկություններ ընդերքի մասին՝ ըստ վառելիքաէներգետիկ եւ հանքային հումքի շրջանների ու հանքավայրերի
25	Ապրանքներ, որոնց արտահանման կամ ներմուծման համար սահմանված են արգելքներ
26	Ապրանքներ, որոնց արտահանման եւ (կամ) ներմուծման համար սահմանված է բացառիկ իրավունք
27	Ապրանքներ, որոնց ներմուծումը Մաքսային միության տարածք իրականացվում է սակագնային քվոտաների շրջանակներում

3. «Միջազգային փոստային առաքանիներում ապրանքների առաքման առանձանահատկությունների մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 338 որոշմամբ հաստատված՝ այն ապրանքների ցանկին կից հղման մեջ, որոնց տեղափոխումը Մաքսային միության մաքսային սահմանով սահմանափակված է ներմուծման եւ (կամ) արտահանման ժամանակ, եւ որոնց առաքումը միջազգային փոստային առաքանիներում արգելված է, «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային միության միասնական ոչ սակագնային կարգավորման մասին» ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշմամբ հաստատված» բառերը հանել:

4. «Մաքսային ընթացակարգերի կիրառման հետ կապված որոշ հարցերի մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 375 որոշմամբ հաստատված՝ «մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով տեղափոխման ոչ ենթակա ապրանքների ցանկի 2-րդ կետում «ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշմամբ եւ Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 132 որոշմամբ հաստատված» բառերը հանել:

5. «Մաքսային միության՝ ավմաստներից փշրանքի ու փոշու մաքսային-սակագնային եւ ոչ սակագնային կարգավորման ոլորտին առնչվող նորմատիվ

իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 591 որոշման 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

6. «Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 850 որոշմամբ հաստատված՝ Մաքսային միության նորմատիվ իրավական բազան Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին եւ Մաքսային միության միասնական մաքսային սակագնին համապատասխանեցնելու մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման թիվ 1 հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

7. «2014 թվականին Սոչի քաղաքում XXII ձմեռային օլիմպիական խաղերի եւ XI պարօլիմպիական ձմեռային խաղերի կազմակերպման եւ անցկացման նպատակով ապրանքների ներմուծման (արտահանման) մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի հուլիսի 12-ի թիվ 110 որոշման 1-ին կետի երրորդ պարբերությունում «ԵվրԱզԷՍ-ի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշմամբ հաստատված» բառերը հանել:

Եվրասիական տնտեսական  
 հանձնաժողովի կոլեգիայի 2012  
 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134  
 որոշման

**Մաքսային միության հանձնաժողովի եւ Եվրասիական տնտեսական  
 հանձնաժողովի կոլեգիայի՝ ուժը կորցրած ճանաչված որոշումների ցանկ**

Համարը՝ ը/կ	Անվանումը	Ընդունման ամսաթիվը	Համարը
1.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.13 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ եւ սահմանափակումներ	16.04.2010թ.	241
2.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.26 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	17.08.2010թ.	353
3.	Այն Ապրանքների միասնական ցանկի 1.5 բաժնում լրացումներ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	17.08.2010թ.	354
4.	Ապրանքների միասնական ցանկում, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ	20.05.2010թ.	372

	Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ, ինչպես նաև սահմանափակումներ կիրառելու մասին հիմնադրույթներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին		
5.	Այն Ապրանքների միասնական ցանկի 1.2 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ:	17.08.2010թ.	374
6.	«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին	20.09.2010թ.	434
7.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.26 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	20.09.2010թ.	442
8.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում լրացումներ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	18.11.2010թ.	514
9.	«Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ, արյուն եւ դրա բաղադրամասեր Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	18.11.2010թ.	516

10.	Ապրանքների միասնական ցանկում, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ, ինչպես նաև սահմանափակումներ կիրառելու մասին հիմնադրույթներում փոփոխություններ կատարելու մասին	28.01.2011թ.	545
11.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.2 բաժնում, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ, եւ «Բույսերի քիմիական պաշտպանության միջոցները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	07.04.2011թ.	609
12.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.16 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	07.04.2011թ.	631
13.	«Քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցները եւ (կամ) բարձր հաճախականության, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքավորումները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	22.06.2011թ.	671
14.	Այն Ապրանքների միասնական ցանկի նկատմամբ սահմանափակումների կիրառման մասին հիմնադրույթներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	22.06.2011թ.	679

15.	«Թանկարժեք մետաղները, թանկարժեք քարերը եւ թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքները ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	22.06.2011թ.	689
16.	Այն Ապրանքների միասնական ցանկի 1.8 բաժնում լրացումներ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	22.06.2011թ.	696
17.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.8 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	22.06.2011թ.	697
18.	«Մաքսային միության անդամ պետությունների մաքսային տարածքից կենդանական կամ բուսական ծագման ապրանքների արտահանման կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	15.07.2011թ.	713
19.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	16.08.2011թ.	743
20.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.7 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում	16.08.2011թ.	744



	կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ		
21.	Անասնաբուժության մեջ կիրառվող դեղամիջոցների ներմուծման դեպքում լիցենզավորումը չեղյալ հայտարարելու մասին	16.08.2011թ.	746
22.	Մաքսային միության՝ Էթիլային սպիրտի եւ ալկոհոլային արտադրանքի նկատմամբ ոչ սակագնային կարգավորման բնագավառի նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին	16.08.2011թ.	747
23.	«Մաքսային միության մաքսային տարածք դեղամիջոցների եւ դեղագործական նյութերի ներմուծման կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	16.08.2011թ.	748
24.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.13 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ:	23.09.2011թ.	794
25.	Այն Ապրանքների միասնական ցանկի 2.27 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	18.10.2011թ.	847
26.	«Ծանուցումը գրանցելու կարգի» մասին հիմնադրույթը հաստատելու մասին	18.10.2011թ.	848
27.	Այն Ապրանքների միասնական ցանկի 1.6 եւ 2.22 բաժիններում լրացումներ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առեւտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	18.11.2011թ.	857
28.	«Մարդու օրգաններ եւ (կամ) հյուսվածքներ, արյուն եւ դրա բաղադրամասեր Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու եւ Մաքսային միության մաքսային տարածքից	25.01.2012թ.	919

	արտահանելու կարգի մասին» հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին		
29.	«Քաղաքացիական եւ ծառայողական զենքը, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու փամփուշտները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու եւ Մաքսային միության մաքսային տարածքով տարանցելու կարգի մասին» հիմնադրույթում եւ այն Ապրանքների միասնական ցանկի 2.22 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	25.01.2012թ.	920
30.	Այն Ապրանքների միասնական ցանկում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	07.06.2012թ.	72
31.	«Քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցները եւ (կամ) բարձր հաճախականության, այդ թվում՝ ներկառուցված կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնող սարքավորումները, Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու կարգի» մասին հիմնադրույթում փոփոխություններ կատարելու մասին	13.06.2012թ.	83
32.	Այն Ապրանքների միասնական ցանկի 1.8 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առետրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ	26.07.2012թ.	120

Հավելված թիվ 5

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի 2012  
թվականի օգոստոսի 16-ի թիվ 134  
որոշման

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԽՈՐՀՈՒՐԴ**

Նախագիծ

**ՈՐՈՇՈՒՄ**

2012թ.

թիվ

քաղ. Մոսկվա

**ԵվրԱզԷՍ-ի միջպետխորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)  
2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշման մեջ փոփոխություններ  
կատարելու մասին**

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

Հավանություն տալ «ԵվրԱզԷՍ-ի միջպետխորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կից ներկայացվում է), եւ այն քննարկման ներկայացնել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հերթական նիստում՝ պետությունների ղեկավարների մակարդակով:

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամները՝**

<b>Բելառուսի Հանրապետությունից</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից</b>
<b>Ս. Ռումաս</b>	<b>Կ. Կելիմբետով</b>	<b>Ի. Շուվալով</b>

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Նախագիծ

**ՈՐՈՇՈՒՄ**

2012թ.

թիվ

քաղ. Մոսկվա

**ԵվրԱզԷՍ-ի միջպետխորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)  
2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշման մեջ փոփոխություններ  
կատարելու մասին**

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը՝ պետությունների ղեկավարների մակարդակով, **որոշեց.**

Ուժը կորցրած ճանաչել «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Մաքսային միության միասնական ոչ սակագնային կարգավորման մասին» ԵվրԱզԷՍ-ի միջպետխորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) 2009 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 19 որոշման 2-րդ կետը:

**Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամները՝**

<b>Բելառուսի Հանրապետությունից</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից</b>
--	---	-------------------------------------